ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ.

ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՆ ՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Luys Լույս®

Նորա Սարգսյան
Համլետ Ավետիսյան
Հովհաննես Օդաբաշյան

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ. ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՆ ՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ընդհանուր խմբագրությամբ՝
Դավիթ Հարությունյանի

Երևան
«ԼՈՒՅՍ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
2020

ՀՏԴ 328.3
ԳՄԴ 67.400.6
Ս 259

Ընդհանուր խմբագրությամբ՝ **Դավիթ Հարությունյանի**, «Լույս» հիմնադրամի գործադիր տնօրեն

Հեղինակներ՝ **Նորա Սարգսյան**, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Համլետ Ավետիսյան, «Լույս» հիմնադրամի իրավաբան-փորձագետ
Հովհաննես Օդաբաշյան, «Լույս» հիմնադրամի իրավաբան-փորձագետ

Սարգսյան Ն., Ավետիսյան Հ., Օդաբաշյան Հ.
Ս 259 Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմն ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում / Նորա Սարգսյան, Համլետ Ավետիսյան, Հովհաննես Օդաբաշյան.- Եր.: «Լույս» հիմնադրամ, 2020.- 144 էջ.

ISBN 978-9939-1-1164-3

«Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմն ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում» գիրքը ներկայացնում է խորհրդարանական կառավարման ձևում Ազգային ժողովի վերահսկողական դերն ու նշանակությունը, ինչպես նաև դրա իրականացման համար Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և դրա հիման վրա՝ այլ իրավական ակտերով նախատեսված գործիքակազմը: Գրքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում խորհրդարանական փոքրամասնության դերին ու վերջինիս կողմից վերահսկողական մեխանիզմների արդյունավետ կիրառման հարցերին: Գրքում ներկայացվում է նաև առանձին գործիքների կիրառման միջազգային փորձը:

Գիրքը նախատեսված է Ազգային ժողովի պատգամավորների ու աշխատակազմի համար: Այն կարող է օգտակար լինել նաև դասախոսների, ուսանողների, խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետությունում խորհրդարանի դերը հետազոտողների և պրակտիկ մասնագետների համար, ինչպես նաև խորհրդարանական մշակույթի զարգացմամբ հետաքրքրվող յուրաքանչյուր անձի համար:

ՀՏԴ 328.3
ԳՄԴ 67.400.6

ISBN 978-9939-1-1164-3

© «ԼՈՒՅՍ» ՀԻՄՆԱԴՐԱՄ, 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 7

I. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ 9

1. Խորհրդարանական վերահսկողության էությունը 9
2. Խորհրդարանական վերահսկողության գործիքակազմը 13

II. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ 23

1. Վարչապետին անվստահություն հայտնելու ինստիտուտը 17
2. Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցի բարձրացումը 21

III. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ 23

1. Բյուջետային վերահսկողության էությունը. 23
2. Պետական բյուջեի ընդունման գործընթացը. 25
   2.1. Պետական բյուջեի նախագծի նախնական քննարկումը . . . 25
   2.2. Պետական բյուջեի նախագծի քննարկումը Ազգային ժողովի նիստում. 27
   2.3. Պետական բյուջեի մասին օրենքի ընդունումը և դրա չընդունման հետևանքները 28
   2.4. Պետական բյուջեի մասին օրենքում լրացում կամ փոփոխություն կատարելը. 29
3. Պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը . . 30
   3.1. Պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության ուղղությունները 30
   3.2. Պետական բյուջեի կատարման ընթացիկ վերահսկողությունը. 31
   3.3. Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը 31

3.4. Բյուջետային վերահսկողության հարցում
Ազգային ժողովին օժանդակող մարմինները 34
3.5. Բյուջեի կատարման հարցում ճկուն գործելու
Կառավարության իրավունքը 36

IV. ՄԾՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 38
1. Մշտական հանձնաժողովների տեղն ու դերը 38
2. Մշտական հանձնաժողովների ստեղծումը 40
2.1. Մշտական հանձնաժողովների թիվը 40
2.2. Մշտական հանձնաժողովների ձևավորման
և դրանցում անդամակցության կարգը 43
2.3. Մշտական հանձնաժողովի նիստերի
հրապարակայնությունը 45
3. Մշտական հանձնաժողովների կողմից խորհրդարանական
վերահսկողության իրականացումը 48
3.1. Հանձնաժողովների կողմից խորհրդարանական
վերահսկողության ուղղությունները 48
3.2. Հանձնաժողովների կողմից խորհրդարանական
վերահսկողության գործիքակազմը 50
3.2.1. Հանձնաժողովի կողմից տեղեկություններ
պահանջելն ու ստանալը 50
3.2.2. Ենթահանձնաժողովներն ու աշխատանքային
խմբերը 53

V. ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ 54
1. Քննիչ հանձնաժողովի սահմանադրաիրավական
կարգավիճակը 55
2. Քննիչ հանձնաժողովի ստեղծումը և կազմը 56
2.1. Քննիչ հանձնաժողովի ձևավորումը 56
2.2. Քննիչ հանձնաժողովի անդամների թիվը 57
2.3. Քննիչ հանձնաժողովի նախագահը 59
2.4. Քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը 60
2.5. Քննիչ հանձնաժողովը պաշտպանության
և անվտանգության բնագավառներում 60

3. Քննիչ հանձնաժողովի իրավասության առարկան 61
4. Քննիչ հանձնաժողովի ստեղծման և իրավասության
առարկայի հետ կապված վեճերի լուծումը 67
5. Վարույթը քննիչ հանձնաժողովում 67
5.1. Աշխատակարգը և հրապարակայնությունը 67
5.2. Քննիչ հանձնաժողովի իրավունքները և գործիքակազմը . . 69
5.2.1. Ապացույցների ձեռքբերման ընթացակարգը 69
5.2.2. Անձանց հանձնաժողով հրավիրելն ու լսելը 73
6. Քննիչ հանձնաժողովի զեկույցը և դրա իրավական
նշանակությունը 74

VI. ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԸ 81
1. Բանավոր և գրավոր հարցերի ինստիտուտի էությունը 81
2. Բանավոր հարցեր ուղղելու ընթացակարգը 82
3. Գրավոր հարցեր ուղղելու ընթացակարգը 84

VII. ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ 86
1. Հարցապնդումների էությունը 86
2. Հարցապնդումների ներկայացման ձևաչափը 89
3. Հարցապնդումներին պատասխանելը և դրա քննարկումը 91
4. Հարցապնդումների քննարկման հետևանքները 93

VIII. ՀՐԱՏԱՊ ԹԵՄԱՅՈՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ 97
1. Հրատապ թեմայով քննարկումների էությունը 97
2. Հրատապ թեմայով քննարկումների ընթացակարգը 99

IX. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ 100
1. Խորհրդարանական լսումների էությունը 100
2. Լսումների կազմակերպումը Ազգային ժողովում 102

X. ՀԱՆՐԱԳՐԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ 106
1. Հանրագրի էությունը 106

2. Հանրագիր ներկայացնելու ձևաչափը 108
3. Ազգային ժողովին հանրագիր ներկայացնելու
և քննարկման առանձնահատկությունները 110
3.1. Ազգային ժողովին ներկայացված հանրագրի
քննարկման ընթացակարգը 110
3.2. Հանրագրին պատասխան ներկայացնելու
ժամկետն ու կարգը 112
4. Հրապարակային և էլեկտրոնային եղանակով
ներկայացվող հանրագրեր. 114

**XI. ՕՐԵՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ 117**
1. Ի՞նչ է օրենքների կարգավորման արդյունավետության
գնահատումը 117
2. Ի՞նչ պետք է հաշվի առնել արդյունավետության
գնահատման ժամանակ 119

**XII. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ
ԵՎ ԴՐԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ 123**
1. Կառավարության ծրագրին հավանություն տալը. 123
1.1. Ի՞նչ է կառավարության ծրագիրը 123
1.2. Կառավարության ծրագրին հավանություն տալու
ընթացակարգը. 124
2. Կառավարության ծրագրի կատարման վերահսկողությունը . . 127

**XIII. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ 131**

XIV. ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 136
Գծապատկեր 1. Վարչապետին անվստահություն հայտնելու
գործընթացը 136
Գծապատկեր 2. Պետական բյուջեի ընդունման գործընթացը . . . 137
Գծապատկեր 3. Հանրագրերի ներկայացման ընթացակարգը . . 139

XV. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ 141

ԱՌԱՋԱԲԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետությունում ընդունված Սահմանադրության փոփոխությունները նախատեսեցին անցում խորհրդարանական կառավարման ձևի: Կառավարման այս ձևում խորհրդարանի առանձնահատուկ դերին համահունչ՝ Սահմանադրությունը նախատեսեց խորհրդարանական վերահսկողության ժամանակակից գործիքակազմ և կառուցակարգեր: Սակայն պառլամենտարիզմի կայացման և զարգացման համար բավարար չէ խորհրդարանական վերահսկողության արդյունավետ գործիքակազմի օրենսդրական առկայությունը: Պառլամենտարիզմի կայացումը Հայաստանի Հանրապետությունում ենթադրում է պառլամենտական մշակույթի և խորհրդարանի վերահսկողական կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների հետևողական իրականացում:

«Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմն ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ այս հրապարակումը նպատակ ունի ներկայացնելու և պարզաբանելու խորհրդարանի վերահսկողական դերն ու նշանակությունը, ինչպես նաև դրա իրականացման համար Սահմանադրությամբ և դրա հիման վրա՝ այլ իրավական ակտերով նախատեսված գործիքակազմը: Ազգային ժողովի կարողությունների շարունակական զարգացմանը հետաքրքիր խթան կարող են հաղորդել հրապարակման մեջ ներկայացված միջազգային փորձի համեմատական վերլուծությունները, առանձին գործիքների կիրառման միջազգային պրակտիկան: Հրապարակման մեջ առանձնահատուկ ուշադրություն և տեղ է հատկացվել նաև խորհրդարանական փոքրամասնության դերին ու վերջինիս կողմից վերահսկողական մեխանիզմների արդյունավետ կիրառման հարցերին: Խորհրդարանի վերահսկողական առանձին գործիքներ ներկայացված են նաև գծապատկերների տեսքով:

«Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմն ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում» գրքի առաջնային շահառուները Ազգային ժողովի պատգամավորներն ու աշխատակազմն են: Գիրքն օգտակար կարող է լինել դասախոսների, ուսանողների, խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետությունում խորհրդարանի դերը հետազոտողների և պրակտիկ մասնագետների համար, ինչպես նաև խորհրդարանական մշակույթի զարգացմամբ հետաքրքրվող յուրաքանչյուր անձի համար:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս գիրքը պատրաստվել է «Լույս» հիմնադրամի ջանքերով, որի տեսլականն է *սովորել, գործել, համաստեղծել՝* ի շահ Հայաստանի զարգացման:

Դավիթ Հարությունյան
«Լույս» հիմնադրամի գործադիր տնօրեն

I

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

1. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

2015թ. սահմանադրական փոփոխություններով Հայաստանի Հանրապետությունն անցում կատարեց խորհրդարանական կառավարման ձևի: Կառավարման ձևի նման փոփոխությունը մի կողմից՝ նոր նախադրյալներ է ստեղծում պառլամենտարիզմի զարգացման համար, մյուս կողմից՝ նոր մարտահրավերներ առաջադրում արդյունավետ խորհրդարանական կառավարման համակարգ ունենալու հարցում:

Խորհրդարանական կառավարման ձևում խորհրդարանը, որպես ժողովրդի կողմից առաջնային քվե ստացած մարմին, պետք է կազմավորի կառավարություն և վերահսկողություն իրականացնի նրա նկատմամբ: Այս ելակետից է բխում նաև կառավարության քաղաքական պատասխանատվությունը

խորհրդարանի առջև՝ իր վարած քաղաքականության համար: Խորհրդարանական վերահսկողությունը կարելի է բնորոշել որպես կառավարության կողմից վարվող քաղաքականության և իրականացվող ծրագրի նկատմամբ վերահսկողություն [1]: Այլ կերպ ասած՝ խորհրդարանական կառավարման ձևում կառավարության ստեղծումն ու գոյատևումը կախված են խորհրդարանի վստահությունից [2]:

Խորհրդարանական վերահսկողության նպատակը կառավարության գործունեության թափանցիկության և պատասխանատվության բարձրացումն է: Խորհրդարանական վերահսկողության գործառույթի իրականացման արդյունքում պարզ է դառնում, թե որքանո՞վ է կառավարության վարած քաղաքականությունը համապատասխանում հանրության սպասելիքներին և արդյո՞ք կառավարության իրականացրած ծրագրերը հասնում են հասցեատերերին:

Արդյունավետ խորհրդարանական վերահսկողությունը կարող է նպաստել կառավարության կողմից իրականացվող ծրագրերի որակի բարձրացմանը, ինչպես նաև խորհրդարանի կողմից հաստատվելով՝ դրանց հաղորդել լեգիտիմության ավելի բարձր աստիճան [3]:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու գործառույթը ուղղակիորեն ամրագրված է 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության [4] 88-րդ հոդվածի 3-րդ մասում: Սահմանադրությունը էականորեն զարգացրել է Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունների շրջանակը և գործիքակազմը, իսկ դրանց

---

1 A. Schick, "Congress and the details of administration," Public Administration Review, Vol. 36, No. 5, Sep. - Oct., 1976, էջ 516-528:

2 Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016, էջ 116:

3 W. F. West, J. Cooper, "Legislative Influence v. Presidential Dominance: Competing Models of Bureaucratic Control", Political Science Quarterly, vol. 104, էջ 581-606:

4 Ընդունվել է հանրաքվեով 2015թ. դեկտեմբերի 6-ին, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, հոդ. 1118:

իրականացման մանրամասները կարգավորված են «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով [5] (այսուհետ՝ ԱԺ կանոնակարգ) և «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» Ազգային ժողովի որոշմամբ (այսուհետ՝ ԱԺ աշխատակարգ) [6]:

Խորհրդարանական վերահսկողության վրա էական ազդեցություն է ունենում խորհրդարանի և կառավարության միջև հարաբերությունների բնույթը, քաղաքական ուժերի հարաբերակցությունը:

Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման հիմքում ընկած է կայուն խորհրդարանական մեծամասնության սկզբունքը, որի ձևավորումը երաշխավորված է Ընտրական օրենսգրքով [7]: Ըստ այդմ՝ Ընտրական օրենսգիրքը փոքրամասնության և մեծամասնության լրացուցիչ մանդատների վերաբաշխման միջոցով ապահովում է, որ խորհրդարանում մեկ կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք ունենա մանդատների ընդհանուր թվի առնվազն 54 տոկոսը՝ դրանով իսկ ապահովելով կայուն մեծամասնության առկայությունը խորհրդարանում [8]: Միաժամանակ, Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ մյուս կուսակցությունների մանդատների ընդհանուր թիվը չի կարող

---

[5] Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2016թ. դեկտեմբերի 16-ին, ՀՀՊՏ 2017.01.25/5(1280), հոդ.45, ՀՕ-9-Ն:

[6] Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2016թ. դեկտեմբերի 16-ին, ՀՀՊՏ 2017.01.11/2(1277), հոդ.16, ԱԺՈ-267-Ն:

[7] Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2016թ. մայիսի 25-ին, ՀՀՊՏ 2016.05.30/42(1222), հոդ.456, ՀՕ-54-Ն:

[8] ԱԺ կանոնակարգը համապատասխանաբար սահմանում է, որ Ազգային ժողովի ընտրության արդյունքով մանդատների ընդհանուր թվի ոչ պակաս, քան 54 տոկոսը ստացած կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ քաղաքական կոալիցիայի անդամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ստեղծած խմբակցությունները համարվում են կառավարող, իսկ մյուս խմբակցությունները՝ *ընդդիմադիր*:
Կառավարության կազմավորման վերաբերյալ հուշագիր ստորագրած կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) ստեղծած խմբակցությունները համարվում են կառավարող, իսկ մյուս խմբակցությունները՝ ընդդիմադիր (հոդված 7, մաս 3 և 4):

պակաս լինել Ազգային ժողովի մանդատների ընդհանուր թվի 1/3-ից (հոդված 96)՝ դրանով իսկ նախադրյալներ ստեղծելով խորհրդարանական ընդդիմության գոյության համար:

Ասվածը, սակայն, չի նշանակում, որ համապատասխան գումարման Ազգային ժողովի գործունեության ողջ ընթացքում խորհրդարանական մեծամասնության և փոքրամասնության հարաբերակցությունը մեկընդմիշտ մնում է կայուն և չի կարող փոփոխվել: Պատգամավորն իր գործունեության ընթացքում և քվեարկությունների ժամանակ առաջնորդվում է իր խղճով և համոզմունքով (Սահմանադրություն, հոդված 94), իրավունք ունի դուրս գալու խմբակցության կազմից, ինչը չի հանգեցնում նրա լիազորությունների դադարեցմանը (Սահմանադրություն, հոդված 98 և ԱԺ կանոնակարգ, հոդված 3, մաս 1, կետ 9): Խմբակցությունը, իր հերթին, իրավունք ունի քաղաքական կոալիցիա կազմելու այլ խմբակցությունների հետ, ինչպես նաև դուրս գալու կոալիցիայից (ԱԺ կանոնակարգ, հոդված 8, մաս 1, կետ 4)[9]: Նման վերադասավորումները կարող են հանգեցնել խորհրդարանական մեծամասնության և փոքրամասնության հարաբերակցության փոփոխությունների:

Քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունը կարող է առաջ բերել նաև կառավարության քաղաքական պատասխանատվության խնդիր, և վարչապետը կարող է փոխվել քաղաքական դրդապատճառներով: Սրանում է խորհրդարանական կառավարման ձևի կարևոր տարբերությունը կառավարման մյուս ձևերից:

[9] Եթե կառավարող խմբակցությունը հանդես է գալիս Կառավարության կազմավորման վերաբերյալ հուշագրից դուրս գալու վերաբերյալ հայտարարությամբ, ապա այդ պահից խմբակցությունը համարվում է ընդդիմադիր (ԱԺ կանոնակարգ, հոդված 7, մաս 6):

2. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

Խորհրդարանական վերահսկողության միջոցների մեջ կարևորագույն տեղ է զբաղեցնում *վարչապետին անվստահություն հայտնելու իրավունքը* (Սահմանադրություն, հոդված 115)։ Լինելով խորհրդարանի վերահսկողական զինանոցի ամենասուր գործիքը, գործնականում այն օգտագործվում է բավական հազվադեպ, երբ խորհրդարանի ու գործադիրի միջև հետագա աշխատանքն անհնարին է։

Այդուհանդերձ, խորհրդարանական կառավարման ձևի և առավել ևս՝ կայուն խորհրդարանական մեծամասնության ողջ էությունը կառավարման կայունությունն ու խորհրդարան-կառավարություն առճակատման բացառումն է։ Նման պայմաններում խորհրդարանական համակարգին բնորոշ է օրենսդիրի և կառավարության միջև սերտ կապը, որը հաճախ ստեղծում է նաև այս երկու իշխանությունների միաձուլման տպավորություն[10]։ Խորհրդարանական վերահսկողության համատեքստում սա նշանակում է, որ, քանի դեռ իշխող քաղաքական ուժը միասնական է, գործադիր իշխանությունը, որպես կանոն, անձեռնմխելի է։

Նման իրավիճակում, խորհրդարանական կառավարման ձևում խորհրդարանական վերահսկողության արդյունավետ իրականացումը և գործադիր իշխանության հավասարակշռումը մեծապես կախված է խորհրդարանական ընդդիմությունից։ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ զգալիորեն ընդլայնվել են *խորհրդարանական փոքրամասնության վերահսկողական լիազորությունները*։ Խորհրդարանական վերահսկողության որոշ գործիքներ իրենց բնույթով նախատեսված են հենց որպես Ազգային ժողովի փոքրամասնության գործիքներ։ Այդպիսիք են *քննիչ հանձնաժողովները*, որոնց ստեղծման, կազմի, ապացույցներ պահանջելու

[10] S.A. Binder, R.A. W. Rhodes, B.A. Rockman, The Oxford Handbook of Political Institutions, Oxford University Press, 2006, էջ 353։

հարցերում առանձնահատուկ հաշվի են առնված փոքրամասնության պաշտպանության շահերը (Սահմանադրություն, հոդված 108)։ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունն առաջին անգամ ներմուծել է *հրատապ թեմայով քննարկումների ինստիտուտը*, որը հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում կազմակերպելու հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրատապ թեմայով քննարկումներ։ Այս իրավունքը նույնպես Սահմանադրությունը ձևակերպել է որպես փոքրամասնության իրավունք, քանի որ քննարկման պահանջ կարող է ներկայացնել պատգամավորների ընդհանուր թվի մեկ քառորդը։

Խորհրդարանական վերահսկողության առավել հաճախ կիրառվող գործիքակազմը միտված է գործադիր իշխանության գործունեության վերաբերյալ պատշաճ և համակողմանի տեղակացվածության ապահովմանը։ Այս նպատակին են ուղղված մի շարք այնպիսի գործիքներ, ինչպիսիք են՝

- *մշտական և ժամանակավոր հանձնաժողովները (Սահմանադրություն, հոդվածներ 106 և 107),*
- *պատգամավորների բանավոր և գրավոր հարցերը (Սահմանադրություն, հոդված 112),*
- *հարցապնդումները (Սահմանադրություն, հոդված 113), որոնք, կախված արդյունքից, կարող են հանգեցնել կառավարության առանձին անդամների պաշտոնավարման նպատակահարմարության հարցի բարձրացմանը կամ վարչապետին անվստահություն հայտնելուն,*
- *խորհրդարանական լսումները (ԱԺ կանոնակարգ, հոդված 125),*
- *Մարդու իրավունքների պաշտպանի (Սահմանադրություն, հոդված 191, մաս 2), Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (Սահմանադրություն, հոդված 194, մաս 3), Հաշվեքննիչ պալատի (Սահմանադրություն, հոդված 196, մաս 4), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (Սահմանադրություն, հոդված 198, մաս 2, կետ 1) և Կենտրոնական բանկի (Սահմանադրություն, հոդված 200,*

մաս 6) կողմից Ազգային ժողով ներկայացվող տարեկան հաղորդումները:

Գործադիր իշխանության արդյունավետության ընդհանուր վերահսկողությանն են ուղղված *պետական բյուջեի ընդունումը և դրա կատարման նկատմամբ հետագա վերահսկողությունը* (Սահմանադրություն, հոդված 88, մաս 3, և հոդված 111)։ Պատմականորեն խորհրդարանների ձևավորման առաջնահերթ նպատակներից է եղել գործադիրին ֆինանսական միջոցներ տրամադրելը և այդ միջոցների օգտագործման արդյունավետությունը վերահսկելը[11]։ Ընդհանուր վերահսկողությանն են ուղղված նաև կառավարության ծրագրի կատարման վերահսկողությունը, պետական մարմինների տարեկան զեկույցները (ԱԺ կանոնակարգ, հոդված 126-133)։

Օրենսդրական կարգավորման արդյունավետության հետագա վերահսկողությունը թույլ է տալիս գնահատել ընդունված օրենքների ազդեցությունը հասարակական հարաբերությունների վրա և շտկել թերությունները։

Խորհրդարանը իր վերահսկողական գործառույթները իրականացնելու համար ձևավորում է նաև կառավարության ազդեցությունից դուրս գտնվող անկախ մարմիններ, ինչպիսիք են Մարդու իրավունքների պաշտպանը, Հաշվեքննիչ պալատը, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Կենտրոնական բանկը։ Այս մարմինները իրենց գործունեության մասին *տարեկան հաղորդում* ներկայացնելով Ազգային ժողով՝ հնարավորություն են տալիս վեր հանել և արդյունավետ կերպով վերահսկել գործադիր իշխանության գործունեությունը։

Խորհրդարանական վերահսկողության արդյունավետության բարձրացմանն է նպաստում նաև հասարակությունից անմիջական հետադարձ կապ ստանալու հնարավորությունը։ *Հանրագրերի* ինստիտուտի միջոցով (Սահմանադրություն,

[11] Global Parliamentary Report 2017 (մատչելի է հետևյալ հղումով՝ https://www.undp.org/content/undp/en/home/librarypage/democratic-governance/parliamentary_development/global-parliamentary-report-2017.html), էջ 18։

հոդված 53) խորհրդարանը տեղեկանում է հասարակությանը մտահոգող խնդիրների մասին:

Սահմանադրությամբ նախատեսված խորհրդարանական վերահսկողության վերը նշված գործիքակազմի մանրամասները ներկայացվում են հաջորդ մասերում:

II

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

1. ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներում ժողովրդավարության ինստիտուցիոնալ հիմքը կառավարության կախվածությունն է խորհրդարանական մեծամասնությունից: Նշվածը ենթադրում է, որ գործադիր և օրենսդիր իշխանությունների միջև փոխհարաբերությունների հիմքում ընկած է խորհրդարանի առջև կառավարության քաղաքական պատասխանատվության սկզբունքը: Ըստ այդմ՝ խորհրդարանի վերահսկողական զինանոցի ամենահզոր և սուր գործիքը կառավարությանն անվստահություն հայտնելու ինստիտուտն է:

Միջազգային պրակտիկայում տարբերակվում է անվստահության քվեի 2 տեսակ՝ *սովորական և կոնստրուկտիվ*:

Սովորական անվստահության քվեի դեպքում խորհրդարանը, կողմ քվեարկելով կառավարությանը անվստահություն հայտնելու նախագծին, դադարեցնում է վերջինիս լիազորությունները, որից հետո միայն սկսում է նոր կառավարության կազմավորման գործընթաց:

Կոնստրուկտիվ անվստահության քվեի դեպքում վերոհիշյալ մեխանիզմին ավելացվում է մեկ այլ կարևոր նախապայման, որը դժվարացնում է անվստահություն հայտնելու գործընթացը. կառավարությանը անվստահություն հայտնելու նախաձեռնություն սկսած խորհրդարանի անդամները պետք է միաժամանակ առաջադրեն վարչապետի նոր թեկնածու, որը կվայելի խորհրդարանի մեծամասնության աջակցությունը: Նման կարգավորումը ստիպում է խորհրդարանին լինել կառուցողական և վարչապետի անվստահության հարց բարձրացնել միայն այն դեպքում, երբ առկա է նոր թեկնածուի շուրջ որոշակի փոխհամաձայնություն: Դրանով ապահովվում է կառավարության բնականոն աշխատանքը, և երկրի կառավարումը զերծ է մնում կաթվածահար լինելու վտանգից:

Այս առումով, 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ նույնպես ներմուծվեց կոնստրուկտիվ անվստահության քվեի ինստիտուտը: Սահմանադրության 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն 1/3-ը կարող է ներկայացնել վարչապետին անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագիծ, միայն այն դեպքում, եթե որոշման նախագծով միաժամանակ առաջարկվում է նոր վարչապետի թեկնածու:

Վարչապետին անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագծի քննարկման ընթացակարգը

- մինչև 20 րոպե տևողությամբ ելույթով կարող է հանդես գալ հիմնական զեկուցողը՝ ներկայացնելով

վարչապետին անվստահություն հայտնելու մասին նախագիծը և նոր վարչապետի թեկնածուին,
- մինչև մեկ ժամ տևողությամբ ելույթով հանդես է գալիս վարչապետը,
- մինչև մեկ ժամ տևողությամբ ելույթով հանդես է գալիս նոր վարչապետի թեկնածուն,
- ելույթից հետո հիմնական զեկուցողին, վարչապետին և նոր վարչապետի թեկնածուին կարող են տրվել հարցեր,
- մտքերի փոխանակություն,
- մինչև 15 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով կարող է հանդես գալ հիմնական զեկուցողը,
- վարչապետին և նոր վարչապետի թեկնածուին եզրափակիչ ելույթների համար հատկացվում է մինչև երեսնական րոպե։

ԱԺ կանոնակարգ, հոդված 152

Սահմանադրության 115-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ շուտ, քան քառասունութ, և ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամ հետո[12]:

Որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ անվանական քվեարկությամբ: Որոշման ընդունման դեպքում համարվում է, որ վարչապետը հրաժարական է ներկայացրել: Սահմանադրությունը վարչապետի հրաժարականի հետ է կապում նաև ողջ կառավարության հրաժարականը և սահմանում է, որ վարչապետի հրաժարականը հանգեցնում է ամբողջ կառավարության հրաժարականին (հոդված 158):

[12] Վարչապետին անվստահություն հայտնելու գործընթացը՝ նաև բաժին XIV, Գծապատկեր 1-ում:

Հարկ է նկատել, որ կառավարության կայուն գործունեության համար Սահմանադրությամբ սահմանված են նաև այլ երաշխիքներ, մասնավորապես.

- Վարչապետին անվստահություն կարելի է հայտնել նրա նշանակումից *ոչ շուտ, քան մեկ տարի հետո* (Սահմանադրություն, հոդված 115, մաս 3)։ Դրա նպատակն է, որ նոր կազմավորված կառավարությանը տրվի որոշակի ժամանակ, որպեսզի վերջինս ի վիճակի լինի իրեն դրսևորելու և իրականացնելու իր ծրագիրը, իսկ Ազգային ժողովն էլ արդյունքում կարողանա գնահատական տալ կառավարության կատարած աշխատանքին։
- Վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը չընդունվելու դեպքում, նման նախագիծ կարող է ներկայացվել *ոչ շուտ, քան վեց ամիս հետո* (Սահմանադրություն, հոդված 115, մաս 3)։
- Վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ չի կարող ներկայացվել կամ քննարկվել նաև *արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ* (Սահմանադրություն, հոդված 115, մաս 4)։ Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ նման քաղաքական փոփոխությունները վտանգավոր են, քանի որ Կառավարությունը իրականացնում է պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը (հոդված 146, մաս 3), իսկ պատերազմի ժամանակ վարչապետը զինված ուժերի գերագույն հրամանատարն է (հոդված 155, մաս 4)։

2. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՆԴԱՄԻ ՀԵՏԱԳԱ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Մի շարք Եվրոպական երկրներում (օրինակ՝ Էստոնիա[13], Ֆինլանդիա[14], Լատվիա[15], Լիտվա[16], Լեհաստան[17] և այլն), բացի կառավարությանը անվստահություն հայտնելուց, հնարավոր է նաև անվստահություն հայտնել կառավարության առանձին անդամին: Այսպիսի մոտեցումը ոչ միանշանակ է ընդունվում միջազգային պրակտիկայում, քանի որ անվստահություն հայտնելով կառավարության առանձին անդամին՝ ըստ էության խախտվում է կառավարության կոլեկտիվ պատասխանատվության սկզբունքը: Բացի այդ, կառավարության առանձին անդամին անվստահություն հայտնելու մեխանիզմը կարող է նաև գործիք դառնալ խորհրդարանական մեծամասնության ձեռքում՝ կառավարության առանձին անդամի նկատմամբ ճնշումներ գործադրելու և նրան խորհրդարանի համար ցանկալի անդամով փոխարինելու համար:

Խորհրդարանը ընտրելով կառավարության ղեկավարին՝ վարչապետին, պետք է վերջինիս հնարավորություն ընձեռի կազմավորել այն կառավարությունը, որի միջոցով պետք է իրականացնի իր ծրագիրը և ի վերջո դրա համար խորհրդարանի առջև կրի քաղաքական պատասխանատվություն:

Այս առումով Սահմանադրությունն ընտրել է միջին ճանապարհ. Սահմանադրության 113-րդ հոդվածի 2-րդ մասի

---

[13] Էստոնիայի Սահմանադրություն, հոդված 65, կետ 13, մատչելի է հետևյալ հղումով՝ https://www.riigiteataja.ee/en/eli/530102013003/consolide:

[14] Ֆինլանդիայի Սահմանադրություն, հոդված 43, մատչելի է հետևյալ հղումով՝ http://www.finlex.fi/en/laki/kaannokset/1999/en19990731.pdf:

[15] Լատվիայի Սահմանադրություն, հոդված 59, մատչելի է հետևյալ հղումով՝ https://likumi.lv/ta/en/id/57980-the-constitution-of-the-republic-of-latvia:

[16] Լիտվայի Սահմանադրություն, հոդված 67, կետ 9, մատչելի է հետևյալ հղումով՝ https://www.constituteproject.org/constitution/Lithuania_2006.pdf?lang=en

[17] Լեհաստանի Սահմանադրություն, հոդված 159, մատչելի է հետևյալ հղումով՝ https://www.sejm.gov.pl/prawo/konst/angielski/kon1.htm

համաձայն՝ Ազգային ժողովը հարցապնդման[18] արդյունքում, որը նախաձեռնվում է խմբակցության կողմից, կարող է հանդես գալ Վարչապետին ուղղված առաջարկությամբ՝ քննարկելու Կառավարության առանձին անդամի պաշտոնավարման հետագա հարցը: Այս նախաձեռնությունը գործնականում չի առաջացնում որևիցե իրավական հետևանք, սակայն իր մեջ պարունակում է վարչապետին ուղղված քաղաքական լուրջ ազդակ և կառավարության կոնկրետ անդամի աշխատանքի վերաբերյալ գնահատական:

[18] Այս մասին առավել մանրամասն տե՛ս նաև բաժին VII, մաս 4՝ Հարցապնդումների քննարկման արդյունքները:

III

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Բյուջեի ընդունումն ու դրա կատարման նկատմամբ վերահսկողությունը խորհրդարանական կառավարման համակարգում օրենսդիրի կողմից գործադիրի նկատմամբ վերահսկողության առանցքային ուղղություններից մեկն է: Դա արտացոլված է նաև Ազգային ժողովի սահմանադրական գործառույթներում (Սահմանադրություն, հոդված 88, մաս 3, հոդված 111, մաս 1)։

Պետական բյուջեն ներառում է պետության բոլոր եկամուտները և ծախսերը (Սահմանադրություն, հոդված 110, մաս 1, նախադասություն 2)՝ դրանով իսկ լինելով պետության կարևորագույն ֆինանսական փաստաթուղթը: Պետական բյուջեն Սահմանադրությամբ և օրենքներով պետությանը

վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրեր են [19]:

Պետական բյուջեի ընդունումը՝ նախորդող և հաջորդող փուլերով, բյուջեի մշակման, քննարկման, հաստատման և կատարման հետ կապված գործողությունների մի ամբողջ գործընթաց է, որով սահմանվում է պետության հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները:

Այս գործընթացում խորհրդարանի դերը նրանում է, որ մանրամասն ուսումնասիրության ենթարկի և հաստատի պետության եկամուտները և ծախսերը հաստատող առաջնային ֆինանսական փաստաթուղթը՝ այդպիսով նախադրյալներ ստեղծելով պետական բյուջեի պատշաճ իրականացման համար:

Միջազգային պրակտիկայում խորհրդարանի վերահսկողական այս գործառույթը անվանում են «դրամապանակի իշխանություն» [20] և խորհրդարանները այն օգտագործում են ընդլայնելու համար իրենց ազդեցությունը գործադիր իշխանության նկատմամբ [21]:

Խորհրդարանական կառավարման ձևի երկրներում խորհրդարանը ավելի մեծ ազդեցություն ունի պետական բյուջեի ընդունման և վերահսկողություն նկատմամբ, քան նախագահական կառավարման ձև ունեցող երկրներում: Սակայն, խորհրդարանների ազդեցության աստիճանը գործնականում կախված է ոչ միայն օրենսդրությամբ խորհրդարաններին վերապահված լիազորությունների ծավալից, այլ՝ առավելապես *ինստիտուցիոնալ* և *քաղաքական* գործոններից:

---

[19] «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 24 հունիսի 1997թ. օրենք, ՀՀՊՏ 1997.08.11/18, ՀՕ-137, հոդված 2, մաս 1:

[20] "Power of the purse":

[21] R. Stapenhurst, R. Pelizzo, D.M. Olson, L. von Trapp, Legislative and Budgeting Oversight A World Perspective, The World Bank, 2008 էջ 3 (մատչելի է հետևյալ հղումով՝ http://documents.worldbank.org/curated/en/545851468313500246/pdf/456270PUB0Box3101OFFICIAL0USE0ONLY1.pdf):

Օրենսդիր իշխանության ազդեցության ծավալը ինստիտուցիոնալ առումով սահմանափակված է, քանի որ գործադիր իշխանությունը այս հարցում ունի առաջնայնություն [22] և կրում է առաջնային պատասխանատվություն պետական բյուջեի դեֆիցիտը վերահսկելի դարձնելու համար [23]:

Խորհրդարանի՝ պետական բյուջեի գործընթացի վրա ազդելու կարողությունը մեծապես կախված է նաև քաղաքական գործոնից: Այն դեպքերում, երբ պառլամենտական մեծամասնությունը և կառավարությունը ներկայացնում են նույն քաղաքական ուժը [24], օրենսդիրը, որպես կանոն, հաշվի է առնում պետական բյուջեի վերաբերյալ գործադիր իշխանության տեսակետը՝ ապահովելով վերջինիս հետագա գործունեությունը:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

2.1. Պետական բյուջեի նախագծի նախնական քննարկումը

Պետական բյուջեն ընդունվում է մինչև բյուջետային տարին սկսվելը [25]: Պետական բյուջեի մասին օրենքի նախագիծ ներկայացնելու իրավունքը վերապահված է միայն Կառավարությանը (Սահմանադրություն, հոդված 110, մաս 1): Նախագիծն Ազգային ժողով պետք է ներկայացվի բյուջետային տարին սկսվելուց առնվազն իննսուն օր առաջ (Սահմանադրություն, հոդված 110, մաս 2): Հայաստանի Հանրապետությունում

[22] Սահմանադրությունը սահմանում է, որ Ազգային ժողովը պետական բյուջեն ընդունում է Կառավարության ներկայացմամբ (Սահմանադրություն, հոդված 110, մաս 1):

[23] Rick Stapenhurst, Legislative and Budgeting Oversight A World Perspective, նշվ. աշխ., էջ 267:

[24] Այս մասին առավել մանրամասն տե՛ս մաս II-ում՝ Խորհրդարանական վերահսկողության էությունը. ընդհանուր նկարագիրն ու գործիքակազմը:

[25] Պետական բյուջեի ընդունման գործընթացը՝ նաև բաժին XIV, Գծապատկեր 2-ում:

բյուջետային տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին [26]:

Ազգային ժողովի նախագահը պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, խորհրդակցելով վարչապետի հետ, կազմում է գլխադասային և մյուս մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման ժամկետացանկը և այն ներկայացնում Խորհրդի հաստատմանը (ԱԺ կանոնակարգ, հոդված 88, մաս 1):

Նախագծի նախնական քննարկման գլխադասային հանձնաժողովը իրավասու մշտական հանձնաժողովն է, որը 7-րդ գումարման Ազգային ժողովում [27] Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովն է: Նախագծի նախնական քննարկումներ են տեղի ունենում նաև մնացած մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում, որոնց կարող են մասնակցել նաև Կառավարության ներկայացուցիչները և վարչապետի լիազորած անձինք:

Այն դեպքում, երբ քննարկվում են նախագծի պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածներին վերաբերող նյութեր քննարկումները տեղի են ունենում փակ նիստում, որին կարող են մասնակցել պատգամավորները, Հաշվեքննիչ պալատի նախագահը և Կառավարության լիազորած անձինք (ԱԺ կանոնակարգ, հոդված 88, մաս 6):

Նախնական քննարկումների արդյունքում պատգամավորները և խմբակցությունները իրավունք են ստանում Նախագծի վերաբերյալ ներկայացնել գրավոր առաջարկներ: Գրավոր առաջարկները ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո Կառավարությունը կարող է Նախագիծն Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել առանց փոփոխության կամ իր նախաձեռնությամբ կամ

[26] «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենք, հոդված 6, մաս 3:

[27] Ձևավորվել է 2019թ. դեկտեմբերի 9-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքում:

գրավոր ստացված առաջարկների հիման վրա կատարված լրամշակումներով։

2.2. Պետական բյուջեի նախագծի քննարկումը Ազգային ժողովի նիստում

Պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը՝ ի տարբերություն այլ նախագծերի, քննարկվում է հատուկ կարգով, որն սահմանված է ԱԺ կանոնակարգ օրենքի 20-րդ գլխով (87-91-րդ հոդվածներ)։

Կանոնակարգով սահմանված ելույթների ավարտից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակման փուլը, որից հետո նիստը նախագահողը հայտարարում է ընդմիջում՝ առնվազն 4 օրով (ԱԺ կանոնակարգ, հոդված 90, մաս 6)։ Ընդմիջման ընթացքում պատգամավորները և խմբակցությունները իրավունք ունեն ներկայացնել իրենց գրավոր առաջարկությունները։

Նախագծի քննարկման վերսկսումից հետո վարչապետը կամ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարը ներկայացնում է նախագծի վերջնական տարբերակը և ամփոփաթերթիկում ներառված առաջարկները, որից հետո նրան կարող են տրվել հարցեր։ Հարցերից հետո կարող են տեղի ունենալ համապատասխան ելույթներ[28]։

Ազգային ժողովում քննարկումների և ելույթների ավարտից հետո 30 րոպեանոց եզրափակիչ ելույթով է հանդես գալիս վարչապետը կամ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարը, որը կարող է առաջարկել

[28] Հայտ ներկայացնելու դեպքում 10-ական րոպե տևողությամբ մեկական ելույթի իրավունք ունեն՝
1) նախագծի վերաբերյալ առաջարկ ներկայացրած պատգամավորները.
2) խմբակցությունների մեկական ներկայացուցիչները.
3) մշտական հանձնաժողովների մեկական ներկայացուցիչները.
4) Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները։

պետական բյուջեի մասին օրենքի նախագծի վերջնական տարբերակն ընդունել որպես օրենք (ԱԺ կանոնակարգ, հոդված 91, մաս 4)։ Պետական բյուջեի մասին օրենքի նախագիծն ընդունվում է մեկ ընթերցմամբ։

2.3. Պետական բյուջեի մասին օրենքի ընդունումը և դրա չընդունման հետևանքները

Պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը ընդունվում է քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին (ԱԺ կանոնակարգ, հոդված 76, մաս 1)։

Պետական բյուջեի մասին օրենքի նախագծի չընդունման դեպքում Կառավարությունը պետք է Ազգային ժողով ներկայացնի պետական բյուջեի նոր նախագիծ՝ քվեարկությունից հետո՝ երկշաբաթյա ժամկետում։ Նոր նախագիծը քննարկվում և քվեարկվում է Կանոնակարգով սահմանված կարգով՝ մեկ ամսվա ընթացքում։ Մինչև պետական բյուջեի ընդունումը, ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով (Սահմանադրություն, հոդված 111, մաս 3)։

Որպես խորհրդարանի նկատմամբ ճնշման միջոց Կառավարությունը կարող է պետական բյուջեի մասին օրենքի նախագծի ընդունման առնչությամբ դնել նաև իր վստահության հարցը։ Այս պարագայում, եթե Կառավարությանը վստահություն հայտնելու մասին որոշումը՝

1. *ընդունվում է*, ապա պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը համարվում է ընդունված որպես օրենք.
2. *չի ընդունվում,* ապա պետական բյուջեի նախագիծը Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվում նոր Կառավարության ծրագիրը հաստատվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իսկ քվեարկության է դրվում ներկայացվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում։

2.4. Պետական բյուջեի մասին օրենքում լրացում կամ փոփոխություն կատարելը

Պետական բյուջեի մասին օրենքում լրացում կամ փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծն Ազգային ժողովում քննարկվում է հատուկ ընթացակարգով (ԱԺ կանոնակարգ, հոդված 91, մաս 7)։ Հարցի քննարկումը հատուկ ընթացակարգով իրականացնելու համար ներկայացվում է [29] Ազգային ժողովի որոշման նախագիծ, որով սակայն չի կարող սահմանափակվել զեկուցողների, նրանց հարց տվողների և ելույթ ունեցողների թիվը, ինչպես նաև կրճատվել ելույթի կամ հարց տալու համար ԱԺ կանոնակարգով ուղղակիորեն սահմանված ժամանակը։

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի հաստատած պետական բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել Ազգային ժողովի պատգամավորների և կառավարության առաջարկությամբ՝ օրենսդրական նախաձեռնության կարգով։ Պետական բյուջեում այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք նվազեցնում են պետական բյուջեի մուտքերը կամ ավելացնում ելքերը, Ազգային ժողովը քննարկում է միայն կառավարության եզրակացության առկայությամբ և ընդունում պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ։

[29] Հատուկ ընթացակարգի մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունեն՝
1) արտահերթ նստաշրջանը կամ նիստը նախաձեռնողը՝ օրակարգում ընդգրկված հարցի քննարկման մասին.
2) մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովը՝ իր իրավասությանը վերապահված հարցի քննարկման մասին.
3) հիմնական զեկուցողը՝ իր ներկայացրած հարցի քննարկման մասին.
4) քննիչ հանձնաժողովը՝ իր զեկույցի քննարկման մասին.
5) ինքնավար մարմնի նախագահի կամ անդամի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունեցող մարմինը։

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության ուղղությունները

Սահմանադրության 111-րդ հոդված 1-ին մասի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը մանրամասնում է Ազգային ժողովի կողմից պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության ուղղությունները, այն է.

- «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի և տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանված պահանջների կատարման նկատմամբ.
- օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ.
- բյուջետային պարտավորությունների կատարման, բյուջետային միջոցների ծախսման օրինականության և հաստիքանախահաշվային կարգապահության պահպանման ուղղությամբ։

Ազգային ժողովը պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է 2 փուլով՝

1. պետական բյուջեի կատարման ընթացքի մասին տեղեկանքների քննարկման և
2. տարեկան հաշվետվությունների քննարկման և ընդունման միջոցով։

3.2. Պետական բյուջեի կատարման ընթացիկ վերահսկողությունը

Կառավարությունը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 40 օրվա ընթացքում, Ազգային ժողով տեղեկանք է ներկայացնում պետական բյուջեի, այդ թվում՝ նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարման ընթացքի վերաբերյալ: Իրավասու մշտական հանձնաժողովն [30] իր նիստում քննարկում է պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքը (ԱԺ կանոնակարգ, հոդված 114):

3.3. Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը

Կառավարությունը հաշվետվություն է ներկայացնում Ազգային ժողով յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին, որի քննարկման արդյունքներով Ազգային ժողովը ընդունում է որոշում (Սահմանադրություն, հոդված 111, մաս 2):

Հաշվետվությունը և դրա վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից ներկայացված պաշտոնական եզրակացությունը Ազգային ժողով է ներկայացվում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը (ԱԺ կանոնակարգ, հոդված 116):

Ազգային ժողով պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացություն է ներկայացնում նաև Հաշվեքննիչ պալատը՝ Կառավարության կողմից Ազգային ժողով հաշվետվություն ներկայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում. պետական բյուջեի կատարման մասին Կառավարության կողմից ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ Ազգային ժողովում քննարկման և որոշման կայացման համար Հաշվեքննիչ պալատի եզրակացությունը պարտադիր է (Սահմանադրություն, հոդված 111, մաս 2):

[30] 7-րդ գումարման Ազգային ժողովում՝ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովն է:

Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներառում է՝[31]

- տեղեկություններ հաշվետու տարում հարկաբյուջետային քաղաքականության և համապատասխան օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ, որոնք ազդել են պետական բյուջեի կատարման արդյունքների վրա,
- պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (հավելուրդի) հիմնավորվածությունը, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի, ինչպես նաև հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների նկատմամբ,
- տեղեկություններ հաշվետու տարում կառավարության պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին՝ համապատասխան հիմնավորումներով,
- տեղեկություններ հաշվետու տարում պետության արտաքին և ներքին պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ,
- պետական մարմինների կողմից պետական լիազորված մարմին ներկայացված տարեկան հաշվետվությունների համապատասխան տեղեկություններն այդ մարմինների գծով հաշվետու բյուջետային տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բյուջետային ելքերը ծրագրային ձևաչափով ներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած փաստաթղթի մաս կազմող գերա-

[31] «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 25, մաս 2:

տեսչական տարեկան ծրագրերով նախատեսված արդյունքների կատարման վերաբերյալ,

- պետական մարմինների կողմից պետական լիազորված մարմին ներկայացված տարեկան հաշվետվությունների համապատասխան տեղեկություններն այդ մարմինների գծով հաշվետու բյուջետային տարվա պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված ծրագրերի և ծրագրերի միջոցառումների գծով կառավարության սահմանած արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ,
- այլ տեղեկություններ, որոնք կառավարությունն անհրաժեշտ է համարում պետական բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:

Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածները, բացված տեսքով, ներկայացվում են Ազգային ժողով՝ առանձին փակ ծրարով [32]:

Ազգային ժողովի նախագահը, պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, խորհրդակցելով վարչապետի հետ, կազմում է գլխադասային և մյուս մշտական հանձնաժողովներում, ինչպես նաև դրանց համատեղ նիստերում պետական բյուջեի տարեկան հաշվետվության նախնական քննարկումների անցկացման ժամկետացանկը և այն ներկայացնում Ազգային ժողովի Խորհրդի հաստատմանը [33]:

Ազգային ժողովի նիստում Կանոնակարգով սահմանված ելույթների, մտքերի փոխանակության և եզրափակիչ ելույթի

[32] «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 25, մաս 3:

[33] «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 117, մաս 1:

ավարտից հետո քվեարկության է դրվում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը: Որոշման ընդունման դեպքում հաշվետվությունը համարվում է հաստատված, իսկ չընդունման դեպքում՝ մերժված (ԱԺ կանոնակարգ, հոդված 118, մաս 4):

3.4. Բյուջետային վերահսկողության հարցում Ազգային ժողովին օժանդակող մարմինները

Ազգային ժողովի կողմից արդյունավետ բյուջետային վերահսկողություն իրականացնելու համար նշանակալի դերակատարում ունեն Հաշվեքննիչ պալատը [34] և Ազգային ժողովի բյուջետային գրասենյակը [35]:

Հաշվեքննիչ պալատը Սահմանադրությամբ նախատեսված անկախ մարմին է, որի գործունեության նպատակն է հաշվեքննություն իրականացնել հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ (Սահմանադրություն, հոդված 198, մաս 1) [36]:

Ինչպես վերը նշվեց, Ազգային ժողովը պետական բյուջեի կատարման մասին Կառավարության կողմից ներկայացվող տարեկան հաշվետվությունը քննարկում և դրա վերաբերյալ որոշում է կայացնում միայն Հաշվեքննիչ պալատի եզրակացության առկայության դեպքում:

---

[34] Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքը՝ http://armsai.am/:

[35] Բյուջետային գրասենյակի պաշտոնական կայքը՝ http://parliament.am/budget_office.php?sel=about&action=functions&lang=arm:

[36] Հաշվեքննիչ պալատը կազմված է յոթ անդամից, որոնք ընտրվում են Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով (Սահմանադրություն, հոդված 199):

Հաշվեքննիչ պալատի լիազորությունները սահմանված են «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով [37]:

Բյուջետային գրասենյակի նպատակն է նպաստել Ազգային ժողովի պետական բյուջեի կատարմանը, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ վերապահված վերահսկողական լիազորությունների արդյունավետ իրականացմանը (ԱԺ կանոնակարգ, հոդված 163): Բյուջետային գրասենյակի կազմավորման և գործունեության վերաբերյալ մանրամասները սահմանված են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգով[38]:

Բյուջետային գրասենյակը, մասնավորապես՝

- տեղեկանքներ է տրամադրում պետական բյուջեի նախագծում, պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում բյուջետային մուտքերի և ելքերի ծրագրային և (կամ) այլ ձևաչափով ներկայացված փաստաթղթի վերաբերյալ,
- պատրաստում է պետական բյուջեի նախագծի ամփոփ նկարագիրը,
- աջակցում է պետական բյուջեի մասին օրենքի նախագծում փոփոխություններ կատարելու մասին առաջարկների ձևակերպմանը՝ անհրաժեշտության դեպքում իրականացնելով հաշվարկներ, ինչպես նաև տեղեկատվություն է տրամադրում պետական բյուջեի մասին օրենքի նախագծում ընդունված առաջարկների վերաբերյալ՝ ըստ ծախսերի բյուջետային դասակարգման համապատասխան հոդվածի և պետական բյուջեի նախագծի աղյուսակի համարի,

[37] Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2018թ. հունվարի 16-ին, ՀՕ-58-Ն, ՀՀՊՏ 2018.01.31/8(1366), հոդ. 92:

[38] Բյուջետային գրասենյակը կազմված է համակարգող փորձագետից և չորս այլ փորձագետներից, որոնք աշխատանքի են ընդունվում մրցույթով, Ազգային ժողովի Խորհրդի սահմանած կարգով՝ հինգ տարի ժամկետով (ԱԺ աշխատակարգ, կետ 108 և 109):

- տեղեկատվություն է տրամադրում պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ: Այդ նպատակով Բյուջետային գրասենյակն իրականացնում է պետական բյուջեի եկամուտների՝ ըստ հարկերի, տուրքերի, պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների տեսակների, ինչպես նաև պետական բյուջեի ծախսերի և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների և պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների առցանց դիտարկում՝ տվյալ տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հավելվածների մանրամասնությունների մակարդակով,
- տեղեկանքներ է տրամադրում պետական բյուջեի եկամուտների (այդ թվում՝ արտաբյուջետային միջոցների), ինչպես նաև պետական բյուջեով հատկացվող, հատկացված միջոցների (այդ թվում՝ արտաբյուջետային միջոցների) ծախսման և պակասուրդի (հավելուրդի) վերաբերյալ:

Բյուջետային գրասենյակը կարևոր օժանդակող գործառույթ ունի բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ուսումնասիրության հարցում (ԱԺ աշխատակարգ, կետ 115, մաս 9-11):

Այսպիսով, Ազգային ժողովը մեծապես պետք է հենվի վերը նշված երկու մարմինների վրա արդյունավետ բյուջետային վերահսկողություն իրականացնելու համար:

3.5. Բյուջեի կատարման հարցում ճկուն գործելու Կառավարության իրավունքը

Կարևորելով Ազգային ժողովի վերահսկողական գործառույթները, միաժամանակ պետք է հաշվի է առնել նաև որոշակի իրավիճակներում Կառավարության ճկուն գործելու անհրաժեշտությունը: Ուստի «Հայաստանի Հանրապետության

բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվել է, որ պետական բյուջեի կատարման ընթացքում Կառավարությունը, իր սահմանած կարգով, կարող է տվյալ բյուջետային տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 3 տոկոսի սահմաններում վերաբաշխել բյուջեի մասին օրենքով սահմանված ծախսային ծրագրերի միջև հատկացումների գումարները:

Կառավարության գործունեության ճկունությունը ապահովելու նպատակով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված է Կառավարության պահուստային ֆոնդ, որը «տվյալ տարվա պետական բյուջեում նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման, պետական բյուջեում չկանխատեսված ելքերի, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ելքերի ֆինանսավորման աղբյուրն է»: Այս դեպքում ևս օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է սահմանաչափ, համաձայն որի՝ Կառավարության պահուստային ֆոնդի մեծությունը չի կարող գերազանցել տվյալ տարվա պետական բյուջեի մասին՝ օրենքով նախատեսված ծախսերի 5 տոկոսը:

Պետք է նկատել, որ բյուջեի տնօրինման հարցերում Կառավարությանը վերապահված որոշակի ճկունությունը պետք է հավասարակշռված լինի, այնպես, որ Ազգային ժողովին չզրկի բյուջեի նկատմամբ իր վերահսկողական գործառույթից[39]:

[39] Այս առումով, հատկանշական է, որ 2020թ. ապրիլի 29-ին Ազգային ժողովն ընդունեց Կառավարության կողմից նախաձեռնված «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը: Դրանով Կառավարությանը հնարավորություն է տրվում սեփական որոշումների միջոցով գերազանցել նշված 3 %-ի և 5 %-ի սահմանաչափերը: Կառավարությունը նման նախագծի անհրաժեշտությունը պայմանավորել էր կորոնավիրուսային վարակի (2019n-CoV) դեմ պայքարի, հիվանդության հետևանքների (այդ թվում նաև՝ տնտեսական) չեզոքացման և վերացմանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների իրականացման նպատակով: Ստեղծված իրավիճակում բյուջեն տնօրինելու որոշակի ազատություն Կառավարությանը տալու նպատակը, թեև արդարացված է, սակայն սահմանաչափերը գերազանցելու հարցում Կառավարությանը վերապահված լայն ազատությունը կարող է խնդրահարույց լինել Ազգային ժողովի վերահսկողական գործառույթների տեսանկյունից:

IV

ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1. ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ

Մշտական հանձնաժողովները պառլամենտարիզմի կարևոր հենասյուներից են, քանի որ դրանց միջոցով է օրենսդիրը հիմնականում իրականացնում իր գործառույթները:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների վերաբերյալ հիմնարար դրույթները ստացել են սահմանադրական ամրագրում: 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 106-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն մշտական հանձնաժողովները ստեղծվում են Ազգային ժողովի կողմից՝ հետևյալ նպատակներն իրականացնելու համար՝

- օրենքների նախագծերի քննարկում և դրանց վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացությունների ներկայացում.

- Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկում և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացությունների ներկայացում.
- խորհրդարանական վերահսկողության իրականացում:

Մշտական հանձնաժողովները խորհրդարանի գործառույթների իրականացման կարևոր մեխանիզմ են մի շարք պատճառներով՝

- հանձնաժողովները սովորաբար ստեղծվում են ըստ թեմատիկ ոլորտների, ինչը մի կողմից՝ հնարավորություն է տալիս դրանցում ներգրավել համապատասխան ոլորտում մասնագիտացում և փորձառություն ունեցող պատգամավորների, իսկ մյուս կողմից՝ նպաստում է հանձնաժողովի կազմում ընդգրկված այլ պատգամավորների հետագա մասնագիտացմանը՝ դրանով իսկ բարձրացնելով օրենսդիրի գործունեության արդյունավետությունը.
- հանձնաժողովներում աշխատանքի կազմակերպման ձևաչափը հնարավորություն է տալիս օպերատիվ կերպով լուծել առաջացող խնդիրները, հարմար է աշխատանքային քննարկումների, հանրային լսումների անցկացման համար[40]:

Պառլամենտական կառավարման ձևում հանձնաժողովները կարևոր մեխանիզմ են նաև իշխող քաղաքական մեծամասնության և պառլամենտական փոքրամասնության շահերը հավասարակշռելու համար[41]: Հանձնաժողովները քաղաքական կոնսենսուսի ձևավորման հարթակ են, քանի

[40] S. R. Benda, Committees in legislatures, a division of labor, Legislative research series, Paper N2, 1996, National Democratic Institute for international affairs, էջ 3 (մատչելի է հետևյալ հղումով՝ https://www.ndi.org/sites/default/files/030_ww_committees.pdf):

[41] I. Maatson, K. Strøm, Parliamentary Committees //in Herbert Döring, Parliaments and the majority rule in Western Europe, Mannheim Centre for European Social Research (MZES), էջ 249: (մատչելի է հետևյալ հղումով՝ https://www.uni-potsdam.de/fileadmin01/projects/vergleichende-politikwissenschaft/D%C3%B6ring/PMR-W-Europe.pdf):

որ տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, ներգրավվելով միևնույն հանձնաժողովի մեջ, ստիպված են լինում կոնկրետ խնդիրների լուծման համար գալ ընդհանուր հայտարարի, այդ թվում՝ փոխզիջումների միջոցով: Անգամ այն պարագայում, երբ պառլամենտական մեծամասնությունը, որպես կանոն, աջակցում է կառավարությանը, կառավարության քաղաքականության խնդրահարույց լինելը չի կարող անտեսվել: Իրավական կարգավորման հնարավոր բացասական հետևանքները ստիպում են ձևավորել անհրաժեշտ կոնսենսուս պառլամենտական փոքրամասնության հետ: Դրան է միտված նաև մշտական հանձնաժողովներում աշխատանքի մեխանիզմը: Այսպես, օրինակ, ԱԺ կանոնակարգը սահմանում է, որ եթե գլխադասային հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդը հանձնաժողովի եզրակացության վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա նրանց ներկայացուցիչը կարող է Ազգային ժողովում հարցի քննարկման ընթացքում հանդես գալ հարակից զեկուցմամբ՝ ներկայացնելով հատուկ կարծիքը (հոդված 71, մաս 4):

2. ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

2.1. Մշտական հանձնաժողովների թիվը

Սահմանադրության 106-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է մշտական հանձնաժողովների առավելագույն թիվը, այն է՝ 12 հանձնաժողով: Ընդ որում, մշտական հանձնաժողովների ստեղծումից հետո դրանց թիվը չի կարող փոփոխվել (ԱԺ կանոնակարգ, հոդված 10, մաս 3):

Հարկ է նկատել, որ մշտական հանձնաժողովների ձևավորումը, այդ թվում՝ դրանց թվի որոշումը, հանդիսանում է խորհրդարանական ինքնավարության կարևոր տարր, քանի որ խորհրդարանական ինքնուրույնության հիմքում ընկած է մի կողմից՝ գործադիրից անկախ լինելու անհրաժեշտությու-

նը և մյուս կողմից՝ իր գործունեության ներքին կարգն ինքնուրույն սահմանելու հնարավորությունը [42]:

Մշտական հանձնաժողովների թվի ողջամիտ սահմանափակումը, միաժամանակ, անհրաժեշտ պայման է հանձնաժողովների մասնագիտացման գործառույթի ուժեղացման համար [43]: Մասնագիտացումն էլ ավելի արդյունավետ կլինի, եթե ամեն պատգամավոր ընդգրկված լինի առավելագույնը մեկ հանձնաժողովում, ինչը անհնարին է, եթե հանձնաժողովների թիվը որևէ կերպ սահմանափակված չէ: Այս առումով, 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությունը խիստ սահմանափակել էր մշտական հանձնաժողովների թիվը՝ նախատեսելով միայն 6 հանձնաժողովի ստեղծման հնարավորություն: Ազգային ժողովի գործունեության փորձը նույնպես ապացուցեց, որ 6 մշտական հանձնաժողովները բավարար չէին օրենսդիրի գործունեությունը պատշաճ կազմակերպելու համար [44] և էապես ավելի քիչ էին, քան գործադիրի կազմում ընդգրկված նախարարությունները[45], որոնց նկատմամբ պետք է իրականացվեր պառլամենտական վերահսկողությունը: 2005թ. իրականացված սահմանադրական փոփոխությունների արդյունքում մշտական հանձնաժողովների

---

[42] M. Couderc, The administrative and financial autonomy of parliamentary assemblies, Report adopted at the Moscow Session (September 1998) (մատչելի է հետևյալ հղումով՝ http://www.asgp.co/sites/default/files/documents/OMQJLYHYSWWZWJFVQGFGIIDSANRDGW.pdf): Նաև Վ. Պողոսյան, Հ. Թովմասյան, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը, համառոտ պարզաբանումներ, Երևան, 2015, էջ 91:

[43] K. Strøm, Kaare, "Parliamentary committees in uropean democracies", The Journal of Legislative Studies, (1998) 4: 1, էջ 37 (մատչելի է հետևյալ հղումով՝ https://politicacomparata.files.wordpress.com/2011/03/strom-1998-parliamentary-committees-in-european-democracies.pdf):

[44] Հ. Հակոբյան, հոդված 73 //Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, «Իրավունք», 2010, էջ 725:

[45] Այսպես, օրինակ, 25.07.1995-06.12.2005 թթ.՝ նախարարությունների թիվը տատանվել է 26-ից 19-ի միջակայքում (ՀՀ Նախագահի «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանելու մասին» 1995թ. հուլիսի 25-ին ՆՀ-456 հրամանագիր, ՀՀԱԺՏ 1995/ 1-2՝ խմբ. 20.10.95, 08.11.96, 10.06.97, 03.07.97, 20.04.98 ՆՀ-9, 17.11.98 ՆՀ-150, 15.06.99 ՆՀ-287, 13.11.99 ՆՀ-426, 28.02.00 ՆՀ-490, 20.05.00 ՆՀ-577, 08.01.01 ՆՀ-770, 31.01.02 ՆՀ-1037 հրամանագրերով), ՀՀ Նախագահի «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքը սահմանելու մասին» 16.03.02 ՆՀ-1063 հրամանագիր, ՀՀՊՏ 2002.03.20/9.1, հոդ. 160՝ հետագա փոփոխություններով:

առավելագույն թիվը հասցվեց 12-ի (հոդված 73)։ Չնայած մշտական հանձնաժողովների թիվը մնաց սահմանափակված, այնուամենայնիվ, հանձնաժողովների առավելագույն թվի ավելացումը էական առաջընթաց էր։ Թեև 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը պահպանեց մշտական հանձնաժողովների առավելագույն թվի պահանջը՝ 12, այնուամենայնիվ, սահմանված թիվը բավական բարձր է և այլևս խնդրահարույց չէ օրենսդիրի կողմից իր գործառույթների արդյունավետ իրականացման տեսանկյունից:

7-րդ գումարման Ազգային ժողովում գործում են հետևյալ հանձնաժողովները [46].

1. Առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով,
2. Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով,
3. Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով,
4. Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով,
5. Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով,
6. Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով,
7. Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով,
8. Տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով,

[46] Ձևավորվել է 2019թ. դեկտեմբերի 9-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքում:

9. Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողով,
10. Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով,
11. Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով [47]:

2.2. Մշտական հանձնաժողովների ձևավորման և դրանցում անդամակցության կարգը

Մշտական հանձնաժողովների ձևավորման կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և ԱԺ կանոնակարգով: Մշտական հանձնաժողովները ստեղծվում են Ազգային ժողովի առաջին նստաշրջանում՝ Ազգային ժողովի որոշմամբ:

ԱԺ կանոնակարգի 112-րդ հոդվածի համաձայն՝ մշտական հանձնաժողովների ստեղծման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունեն խմբակցությունները: Նախագծով սահմանվում են՝

1. հանձնաժողովների անվանումները և գործունեության ոլորտները,
2. յուրաքանչյուր հանձնաժողովի անդամների ընդհանուր թիվը,
3. հանձնաժողովների նախնական քննարկմանը վերապահված առանձին օրենքների անվանումները,
4. պաշտոնում ընտրության կամ նշանակման համար Ազգային ժողովին թեկնածուներ առաջարկելու իրավասություն ունեցող հանձնաժողովները,
5. հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողություն շրջանակը,

[47] Մատչելի է հետևյալ հղումով՝ http://parliament.am/committees.php?lang=arm:

6. Բյուջետային գրասենյակի գործունեության ընդհանուր համակարգման և մշտադիտարկման իրավասությունն ունեցող հանձնաժողովը:

Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:

ԱԺ կանոնակարգի 138-րդ հոդվածը սահմանում է, որ մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրություններն անցկացվում են Ազգային ժողովի առաջին նստաշրջանում, ինչպես նաև նրանց պաշտոնը թափուր մնալու դեպքում:

Մշտական հանձնաժողովների ձևավորման մանրամասները նախատեսվում են ԱԺ կանոնակարգի 11-րդ հոդվածով:

Այսպես, մշտական հանձնաժողովի կազմը և դրանում փոփոխությունները հաստատում է Ազգային ժողովի նախագահը, եթե պահպանված են հոդվածում արտացոլված սկզբունքները:

Մշտական հանձնաժողովում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:

Խմբակցության անդամը խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի տեղում նշանակվում, ինչպես նաև հանձնաժողովի կազմից դուրս է գալիս խմբակցության որոշմամբ: Խմբակցությունն իրավունք ունի թափուր թողնելու հանձնաժողովում իրեն վերապահված տեղը, ինչպես նաև փոխելու հանձնաժողովի կազմում ընդգրկված իր անդամին:

Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են, եթե՝

- նրա պատգամավորական լիազորությունները դադարում կամ դադարեցվում են,
- նա դուրս է գալիս հանձնաժողովից,
- նա դուրս է գալիս կամ հեռացվում է խմբակցությունից, եթե այդ խմբակցությունը նրա տեղում նշանակում է խմբակցության անդամի (ԱԺ կանոնակարգ, հոդված 11, մաս 6)։

Եթե խմբակցությունների տեղերի համամասնությունը չի խախտվում, ապա խմբակցությունից դուրս եկած կամ հեռացված պատգամավորը կարող է՝

- մնալ նույն հանձնաժողովում, եթե այդ խմբակցությունը նրա տեղում խմբակցության անդամի չի նշանակում, կամ հանձնաժողովում առկա է այլ թափուր տեղ, կամ
- Ազգային ժողովի նախագահին ուղղված իր գրավոր դիմումով ընդգրկվել է այլ հանձնաժողովում առկա թափուր տեղում (ԱԺ կանոնակարգ, հոդված 11, մաս 4)։

2.3. Մշտական հանձնաժողովի նիստերի հրապարակայնությունը

Ազգային ժողովի կանոնակարգի 14-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ մշտական հանձնաժողովի *նիստերը հրապարակային* են։

Նիստերի հանրայնացումը բխում է հանձնաժողովների գործունեության թափանցիկության բարձրացման և ժողովրդավարական պետությունում առաջնային մանդատ ունեցող ժողովրդի ներկայացուցիչների հանրության միջև կապի ապահովման նպատակներից։ Ժամանակակից խորհրդարաններում աշխատանքի էական մասը կատարվում է մշտական հանձնաժողովների միջոցով։

Այդուհանդերձ, հանձնաժողովների աշխատանքի թափանցիկությունը չի կարող լինել համընդհանուր պահանջ

և ենթակա է ողջամիտ սահմանափակումների՝ մասնավոր շահերի պաշտպանության, պետական շահերի պաշտպանության և անվտանգության նկատառումներից ելնելով:

Մշտական հանձնաժողովի *փակ նիստն* անցկացվում է պետական բյուջեի մասին օրենքի նախագծի պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածներին վերաբերող նյութերի, համաներման մասին օրենքի նախագծի, պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածներին վերաբերող նյութերի քննարկման դեպքում: Փակ նիստ կարող է անցկացվել նաև հանձնաժողովի որոշմամբ՝ պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիքի ապահովման նպատակով: Սակայն, ժողովրդավարության և հանձնաժողովի գործունեության թափանցիկության նկատառումներից ելնելով, ԱԺ կանոնակարգի 14-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ փակ նիստում քվեարկությունն արգելվում է:

Անվտանգության նկատառումներից զատ հանձնաժողովների նիստերի հանրայնացումը ունի այն բացասական հետևանքը, որ հանձնաժողովների աշխատանքները հաճախ կարող են օգտագործվել որպես քաղաքական պայքարի, ելույթների պլատֆորմ՝ դրանով իսկ խաթարելով հանձնաժողովում արդյունավետ աշխատանքային ձևաչափը[48]: Այս նկատառումներով է հաճախ պայմանավորված, որ պառլամենտարիզմի մեծ փորձ ունեցող մի շարք երկրներում հանձնաժողովների նիստերը դռնփակ են: Մասնավորապես, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի կանոնակարգի 69-րդ կանոնի 1-ին մասի համաձայն՝ հանձնաժողովների նիստերը, որպես կանոն, պետք է լինեն դռնփակ: Միաժամանակ սահմանվում է, որ նիստերը կարող են անց-

[48] B. Duffy, M. Thompson, Innovative Committee methods: Case studies from two parliaments, July 2003, էջ 7 (Մատչելի է հետևյալ հղումով՝ https://www.parliament.nsw.gov.au/lc/articles/Documents/innovative-committee-methods-case-studies-from-t/Innovate%20committee%20methods.pdf):

կացվել դռնբաց կարգով՝ հանձնաժողովի որոշմամբ [49]: Մեկ այլ օրինակ է Ֆինլանդիայի խորհրդարանը, որի կանոնակարգի 50-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովների նիստերը նույնպես դռնփակ են: Նույն հոդվածը սահմանում է, որ հանձնաժողովը կարող է հրապարակային նիստ անցկացնել այն դեպքում, երբ տեղեկատվություն է հավաքագրում խնդրո առարկա հարցի վերաբերյալ [50]:

Համաձայն ԱԺ Կանոնակարգի 14-րդ հոդվածի՝ մշտական հանձնաժողովի հրապարակային նիստում, հանձնաժողովի անդամներից, պատգամավորներից և հարցի քննարկմանը մասնակցելու իրավունք ունեցող այլ անձանցից բացի, կարող են ներկա լինել նաև՝

1. Հանրապետության նախագահը կամ նրա ներկայացուցիչը,
2. Վարչապետը կամ Կառավարության ներկայացուցիչը.
3. Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները.
4. Ազգային ժողովի նախագահի մեկ խորհրդական.
5. հանձնաժողովի քարտուղարության մասնագետները.
6. բյուջետային գրասենյակի մեկ փորձագետ.
7. քննարկվող հարցի մասնագիտական փորձաքննություն իրականացրած՝ Ազգային ժողովի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները.
8. հանձնաժողովի անդամների մեկական օգնականները.
9. նիստի լուսաբանումն ապահովող՝ Ազգային ժողովի աշխատակազմի ծառայողները.
10. հանձնաժողովի որոշմամբ, ինչպես նաև հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված անձինք:

[49] Rules of Procedure of the German Bundestag and Rules of Procedure of the Mediation (Մատչելի է հետևյալ հղումով՝ https://www.btg-bestellservice.de/pdf/80060000.pdf):

[50] Մատչելի է հետևյալ հղումով՝ https://www.eduskunta.fi/FI/tietoaeduskunnasta/julkaisut/Documents/ekj_3+2013.pdf):

Մշտական հանձնաժողովի փակ նիստում, հանձնաժողովի անդամներից և հարցը զեկուցողից բացի, կարող են ներկա լինել Հանրապետության նախագահը կամ նրա ներկայացուցիչը, վարչապետը կամ Կառավարության ներկայացուցիչը, Աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, հանձնաժողովի որոշմամբ, ինչպես նաև հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված անձինք:

Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողները հանձնաժողովի նիստին կարող են ներկա լինել հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ, իսկ նիստի ընթացքում լրագրողները իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնում են իրենց համար առանձնացված տեղում:

3. ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3.1. Հանձնաժողովների կողմից խորհրդարանական վերահսկողության ուղղությունները

Մշտական հանձնաժողովներին Սահմանադրության 106-րդ հոդվածով վերապահված խորհրդարանական վերահսկողության գործառույթից ելնելով՝ ԱԺ կանոնակարգի 122-րդ հոդվածը նախանշում է խորհրդարանական վերահսկողության երկու ուղղություն՝

- օրենքների կատարման ընթացքի վերաբերյալ վերահսկողություն [51],
- կառավարության ծրագրի կատարման վերաբերյալ տեղեկությունների ստացում [52]:

[51] Այս մասին տես բաժին XI:

[52] Այս մասին տես բաժին XII, մաս 2՝ Կառավարության ծրագրի կատարման վերահսկողությունը:

Բացի վերը նշված ուղղություններից, պետք է նշել, որ ԱԺ կանոնակարգը մշտական հանձնաժողովներին նշանակալի դերակատարում է վերապահում խորհրդարանական վերահսկողության մի շարք այլ ասպեկտներում, այն է՝

- պետական բյուջեի նկատմամբ վերահսկողություն [53],
- պետական մարմինների զեկույցների և հաղորդումների նախնական քննարկում[54] (ԱԺ կանոնակարգ, հոդվածներ 126-133):

Խորհրդարանական վերահսկողության թեման և դրա շրջանակներում իրականացվող միջոցառումները սահմանվում են իրավասու հանձնաժողովի որոշմամբ (ԱԺ կանոնակարգ, հոդված 122, մաս 2):

Իրավասու մշտական հանձնաժողովի անդամներից բացի, խորհրդարանական վերահսկողության թեմայի, ինչպես նաև ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ առաջարկ ներկայացնելու իրավունք ունեն Ազգային ժողովի նախագահը, այլ մշտական հանձնաժողովները և խմբակցությունները (ԱԺ կանոնակարգ, հոդված 122, մաս 3):

Խորհրդարանական վերահսկողության արդյունքներով իրավասու մշտական հանձնաժողովը կարող է ընդունել գրավոր եզրակացություն: ԱԺ աշխատակարգի 78-րդ կետի համաձայն՝ եզրակացությունը երկու աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ պաշտոնատար անձանց: Վերջիններիս պատասխանը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում աշխատակազմն այն ուղարկում է Ազգային ժողովի նախագահին, նրա տեղակալներին, խմբակցություններ, մշտական հանձնաժողովներ (ԱԺ աշխատակարգ, կետ 79):

---

[53] Այս մասին տես բաժին III՝ Պետական բյուջեի ընդունումը և դրա կատարման նկատմամբ վերահսկողությունը:

[54] Այս մասին տես բաժին XII, մաս 2՝ Կառավարության ծրագրի կատարման վերահսկողությունը և բաժին XIII՝ Պետական մարմինների տարեկան հաղորդումներն Ազգային ժողովին:

3.2. Հանձնաժողովների կողմից խորհրդարանական վերահսկողության գործիքակազմը

ԱԺ կանոնակարգը խորհրդարանական վերահսկողության գործառույթի իրականացման համար մշտական հանձնաժողովներին վերապահում է մի շարք լիազորություններ, այն է՝

- հարցումներով դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց (ԱԺ կանոնակարգ, հոդված 12, մաս 1, կետ 4).
- հրավիրել խորհրդարանական լսումներ (ԱԺ կանոնակարգ, հոդված 12, մաս 1, կետ 5) [55].
- ստեղծել ենթահանձնաժողովներ և աշխատանքային խմբեր (ԱԺ կանոնակարգ, հոդված 12, մաս 1, կետ 6):

3.2.1. Հանձնաժողովի կողմից տեղեկություններ պահանջելն ու ստանալը

Մշտական հանձնաժողովի գործառույթների արդյունավետ իրականացման համար կարևոր նշանակություն ունի հանրային իշխանության մարմիններին դիմելու իրավասությունն ու նրանցից տեղեկատվության ստացումը: Ըստ այդմ՝ ԱԺ կանոնակարգի 12-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ մշտական հանձնաժողովից հարցում ստանալու դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են երեքշաբաթյա ժամկետում քննարկել հանձնաժողովի գրավոր հարցումը և գրավոր պատասխանել նրան:

ԱԺ կանոնակարգը նաև նախատեսում է հանձնաժողովի հարցմամբ գաղտնիք պարունակող տեղեկությունների ստացման իրավասություն: Այսպես, համաձայն 122-րդ հոդվածի

[55] Այս մասին առավել մանրամասն տե՛ս բաժին IX՝ Խորհրդարանական լսումները՝ որպես վերահսկողության գործիք:

5-րդ մասի պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները հանձնաժողովի հարցմամբ նրան են տրամադրվում, իսկ հանձնաժողովի անդամներն այդ տեղեկություններին կարող են ծանոթանալ *օրենքով սահմանված կարգով*: 122-րդ հոդվածի նշված կարգավորումից բխում է, սակայն, որ գաղտնիք հանդիսացող տեղեկությունները տրամադրվում են միայն օրենքով սահմանված կարգով: Այնուամենայնիվ, օրենսդրությամբ նման կարգավորումներ հստակ ընթացակարգեր սահմանված չեն: Գաղտնիք հանդիսացող տեղեկատվությանը հանձնաժողովի մատչելիությունը բավական նուրբ խնդիր է և պետք է ողջամտորեն կշռադատվեն ու հավասարակշռվեն հանրային և մասնավոր շահերը, որոնք կարող են վտանգվել նման գաղտնիք հանդիսացող տեղեկություններին մատչելիության պարագայում: Որպես կանոն, օրենսդրությունը նախատեսում է գաղտնիք պարունակող տեղեկությունների ստացման համար դատարանի որոշման պահանջ [56]: Մասնավորապես, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» [57] օրենքը չի հստակեցնում, թե երբ և ինչպես պետք է Ազգային ժողովի հանձնաժողովի պահանջով նրան տրամադրվեն պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ: Առևտրային գաղտնիքի հասկացությունը սահմանված է Քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածով [58], որի համաձայն՝ առևտրային գաղտնիք է այն

[56] Օրինակ, քրեական հետապնդում իրականացնող մարմինները նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունները, քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստանալ միայն դատարանի որոշման հիման վրա (Քրեական դատավարության օրենսգիրք, ՀՀՊՏ 1998.09.21/22(55), ՀՕ-248, հոդված 172):

[57] Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1996թ. դեկտեմբերի 3-ին, ՀՕ-94, ՀՀԱԺՏ դեկտեմբեր 1996/23-24(1123-1124), հոդ. 298:

[58] Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1998թ. մայիսի 5-ին, ՀՕ-239, ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

տեղեկատվությունը, որը երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն, և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար: Այս առումով ևս պարզ չէ, թե հանձնաժողովը ե՞րբ, ինչո՞ւ և ի՞նչ ընթացակարգով պետք է ստանա առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն: Բանկային գաղտնիքի իրավական ռեժիմը կարգավորող «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը [59] ևս չի պարունակում դրույթ առ այն, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը կարող է հասանելի լինել մշտական հանձնաժողովներին [60]:

ԱԺ կանոնակարգի 122-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ հանձնաժողովի անդամները հանձնաժողովի հարցմամբ պահանջված տեղեկություններին առնչվող նյութերին կամ փաստաթղթերին կարող են ծանոթանալ նաև դրանց գտնվելու վայրում:

Արդյունավետ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար ԱԺ կանոնակարգը մշտական հանձնաժողովների համար նախատեսում է նաև պաշտոնատար անձանց հրավիրելու և լսելու իրավասություն: Այսպես, 122-րդ հոդվածի 4-րդ մասը հանձնաժողովներին իրավասություն է վերապահում խորհրդարանական վերահսկողության առարկային վերաբերող հարցերի պարզաբանման առնչությամբ իր որոշմամբ հանձնաժողով հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց, որոնք պարտավոր են ներկայանալ հանձնաժողովի նիստին և պատասխանել հարցերին:

---

[59] Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1996թ. հոկտեմբերի 7-ին, ՀՕ-80, ՀՀԱԺՏ 1996.10.15/19(1119), հոդ. 230:

[60] Օրենքը, որպես կանոն, բանկային գաղտնիքի տրամադրումը նախատեսում է քաղաքացիական դատավարության կամ քրեական դատավարության շրջանակներում՝ դատարանի որոշմամբ (հոդվածներ 10, 11, 13), բացառությամբ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնին, վարկային բյուրոյին, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, օտարերկրյա պետության արժեթղթերի շուկայի կարգավորման և (կամ) վերահսկողության ոլորտում իրավասու պետական մարմինների տրամադրման դեպքերի (հոդվածներ 13.1-13.4):

3.2.2. Ենթահանձնաժողովներն ու աշխատանքային խմբերը

Ենթահանձնաժողովներն ու աշխատանքային խմբերը ստեղծվում են մշտական հանձնաժողովների իրավասությանը վերապահված հարցերի նախնական քննարկման համար (ԱԺ կանոնակարգ, հոդված 12, մաս 3)։ Ենթահանձնաժողովում կարող են ընդգրկվել միայն այդ հանձնաժողովի անդամները։ Ենթահանձնաժողովում պահպանվում է կառավարող և ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված հանձնաժողովի անդամների համամասնությունը։ Մշտական հանձնաժողովի ստեղծած աշխատանքային խմբում կարող են ընդգրկվել պատգամավորը, ինչպես նաև հանձնաժողովի, Ազգային ժողովի աշխատակազմի կամ խմբակցության փորձագետը (մասնագետը), պատգամավորի օգնականը և այլ մասնագետներ (ԱԺ աշխատակարգ, կետ 82-86)։

V

ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ

Խորհրդարանական վերահսկողության կարևորագույն ասպեկտներից է հանրային հետաքրքրություն ներկայացնող առանձին հարցերով ուսումնասիրություններ իրականացնելը, փաստեր պարզելը և դրանք խորհրդարանական քննարկման առարկա դարձնելը: Նշված գործառույթը խորհրդարանները, որպես կանոն, իրականացնում են հատուկ ստեղծվող խորհրդարանական հանձնաժողովների՝ քննիչ հանձնաժողովների միջոցով:

Խորհրդարանական կառավարման համակարգերում, որտեղ օրենսդիր և գործադիր իշխանությունները, որպես կանոն, նույն քաղաքական ուժն են ներկայացնում[61], քննիչ հանձ-

[61] Այս մասին առավել մանրամասն տե՛ս բաժին I, մաս 2՝ Խորհրդարանական վերահսկողության էությունը:

նաժողովները գործնականում հանդես են գալիս, առաջին հերթին, որպես խորհրդարանական փոքրամասնության վերահսկողական գործիք:

1. ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Քննիչ հանձնաժողովների ինստիտուտը Հայաստանի Հանրապետություն առաջին անգամ ներմուծվել է 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 108-րդ հոդվածով, որտեղ մանրամասն ամրագրվել է քննիչ հանձնաժողովների ստեղծման և գործունեության կարգը: Մինչ այդ նախատեսված նմանատիպ մեխանիզմ էր ժամանակավոր հանձնաժողովը[62], որը համաձայն 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության, ստեղծվում էր Ազգային ժողովին որոշակի հարցերի, իրադարձությունների և փաստերի մասին եզրակացություններ և տեղեկանքներ ներկայացնելու համար (հոդված 73) [63]: Սակայն նման հանձնաժողովների ձևավորման մեխանիզմը (մեծամասնության սկզբունքով), ինչպես նաև դրա գործունեության երաշխիքները բավարար չէին կարող լինել քննիչ հանձնաժողովների գործառույթները լիարժեք իրականացնելու համար՝ համեմատած 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ նախատեսված քննիչ հանձնաժողովների հետ:

Սահմանադրական պահանջի հիման վրա (հոդված 108, մաս 5) քննիչ հանձնաժողովների գործունեության մանրամասները տեղ են գտել ԱԺ կանոնակարգի 7-րդ գլխում (20-26-րդ հոդվածներ):

---

62 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն գործել են, օրինակ՝ 10.09.2003թ. ԱԺ Ն-014-3 որոշմամբ ստեղծված օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների, վարկերի, դրամաշնորհների և մարդասիրական օգնությունների օգտագործման արդյունավետությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովը, 16.06.2008թ. ԱԺ Ն-086-4 որոշմամբ ստեղծված 2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ժամանակավոր հանձնաժողովը և այլ հանձնաժողովներ:

63 Տե՛ս Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Երևան 2016, էջ 104:

2. ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԸ

2.1. Քննիչ հանձնաժողովի ձևավորումը

Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննիչ հանձնաժողովը ստեղծվում է *իրավունքի ուժով*, եթե առկա է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն *մեկ քառորդի* պահանջը: Իրավունքի ուժով ստեղծումը նշանակում է, որ քննիչ հանձնաժողովի ստեղծումը կախված չէ Ազգային ժողովի հայեցողությունից կամ չի պահանջում որևէ այլ հատուկ որոշման կայացում: Դրանով իսկ բացառվում է քննիչ հանձնաժողովի ստեղծման ճանապարհին հնարավոր խոչընդոտների հարուցումը՝ հաշվի առնելով, որ նման հանձնաժողովները հանդես են գալիս առավելապես որպես պառլամենտական փոքրամասնության գործիք: Միևնույն ժամանակ, քննիչ հանձնաժողովի ստեղծման համար սահմանված ցածր շեմը միտված է ապահովելու վերահսկողական այս կարևոր գործիքից ակտիվորեն օգտվելու խորհրդարանական փոքրամասնության հնարավորությունը:

ԱԺ կանոնակարգի 20-րդ հոդվածի համաձայն քննիչ հանձնաժողով ձևավորելու համար անհրաժեշտ թվով պատգամավորները գրավոր դիմում են ներկայացնում Ազգային ժողովի նախագահին: Դիմումում պարտադիր նշվում է քննիչ հանձնաժողովի՝

- քննության առարկան և իրավասության ոլորտը,
- նախագահի անունը, ազգանունը,
- լիազորությունների ժամկետը (մաս 3),
- դիմումին կցվում է քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը (մաս 4):

Այն դեպքում, երբ դիմումը չի համապատասխանում օրենքի պահանջներին և երեք աշխատանքային օրվա ընթացքում

դրանց չի համապատասխանեցվում, Ազգային ժողովի նախագահը վերադարձնում է դիմումը՝ նշելով պատճառների մասին: Դիմումի՝ օրենքի պահանջներին համապատասխանելու դեպքում քննիչ հանձնաժողովը համարվում է ստեղծված պահանջն Ազգային ժողովի նախագահին ներկայացվելու պահից (ԱԺ կանոնակարգ, հոդված 20, մաս 5):

ԱԺ կանոնակարգը, փաստորեն, կարգավորում է միայն քննիչ հանձնաժողովի ստեղծման ընթացակարգը, իսկ Ազգային ժողովի նախագահը իրավասու է միայն ստուգել ներկայացվող դիմումի համապատասխանությունը օրենքի պահանջներին: Ո՛չ Սահմանադրությունը և ո՛չ էլ ԱԺ կանոնակարգը չեն նախատեսում քննիչ հանձնաժողովի ստեղծմանը միջամտության հնարավորություն [64]:

2.2. Քննիչ հանձնաժողովի անդամների թիվը

Սահմանադրության 108-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննիչ հանձնաժողովի անդամների թիվը որոշում է Ազգային ժողովը, իսկ տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Արդյունքում, քննիչ հանձնաժողովներն արտացոլում են խորհրդարանում ուժերի բաշխման համամասնությունը: Այսպիսի

[64] Այս առումով հատկանշական է, որ 2020թ. հունվարի 21-ին Ազգային ժողովում քննարկվել է «2018 թվականի սեպտեմբերից սկսած տարբեր սուբյեկտների կողմից Երևան համայնքին տրանսպորտային միջոցների և այլ գույքի փոխանցման, ծառայությունների մատուցման պայմանագրերի, ինչպես նաև Երևան համայնքի կողմից դրանց հետ կապված այլ անշարժ կամ շարժական գույքի փոխանցման, այդ թվում՝ գույքային, ինչպես նաև ոչ գույքային իրավունքների, շինարարության թույլտվությունների, արտոնությունների տրամադրման իրավաչափությունն ու կոռուպցիոն ռիսկերն ուսումնասիրելու նպատակով ստեղծված ԱԺ քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին» որոշման նախագիծը (http://parliament.am/draft_history.php?id=11151&lang=arm, http://parliament.am/draft_docs7/P-407_qnnich_transport.pdf), որը քվեարկության արդյունքներով մերժվել է այն պատճառաբանությամբ, որ նման քննիչ հանձնաժողով ստեղծելու նախաձեռնությունը չի բավարարում 108-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմաններին, այն է՝ ա) հարցը պետք է ներկայացնի հանրային հետաքրքրություն և բ) հարցի քննարկումը պետք է մտնի Ազգային ժողովի իրավասության մեջ (http://parliament.am/register.php?ID=534# 22.01.2020): Այս մասին տե՛ս նաև ստորև՝ մաս 3՝ Քննիչ հանձնաժողովի իրավասության առարկան:

տրամաբանությամբ են գործում նաև մշտական հանձնաժողովները (հոդված 106, մաս 2)։ Հանձնաժողովի կազմը և դրանում փոփոխությունները հաստատում է Ազգային ժողովի նախագահը (ԱԺ կանոնակարգ, հոդված 20, մաս 6)։

Ազգային ժողովի կանոնակարգը պատասխան չի տալիս այն հարցին, թե ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, երբ Ազգային ժողովը որոշում չի ընդունում քննիչ հանձնաժողովի անդամների թվի հետ կապված։ Այդուհանդերձ, սահմանադրական կարգավորումներից ուղղակիորեն բխում է, որ անթույլատրելի է քննիչ հանձնաժողովի ձևավորումից հետո նրա գործունեության կազմակերպման առնչվող հարցերով խոչընդոտներ ստեղծելը։ Այսինքն՝ այն հանգամանքը, որ քննիչ հանձնաժողովի անդամների թիվը որոշում է Ազգային ժողովը, հիմք չի տալիս պառլամենտական մեծամասնությանը խաթարել հանձնաժողովի ձևավորումը։ Նման կերպ քննիչ հանձնաժողովի ստեղծման կամ գործունեության կասեցման հնարավորությունը խնդրահարույց է և գործնականում կարող է հանգեցնել պառլամենտական վերահսկողության համար նման կարևոր գործիքի չեզոքացմանը [65]։

Քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանվելուց հետո, խմբակցությունները իրենք են որոշում, թե իրենց խմբակցությունից ովքեր պետք է նշանակվեն հանձնաժողովի կազմում։ Քննիչ հանձնաժողովի կազմից իրենց անդամի դուրս գալու հարցը նույնպես որոշում է խմբակցությունը։

[65] Տես վերը նշված հղումում բերված իրավիճակը՝ «2018 թվականի սեպտեմբերից սկսած տարբեր սուբյեկտների կողմից Երևան համայնքին տրանսպորտային միջոցների և այլ գույքի փոխանցման, ծառայությունների մատուցման պայմանագրերի, ինչպես նաև Երևան համայնքի կողմից դրանց հետ կապված այլ անշարժ կամ շարժական գույքի փոխանցման, այդ թվում՝ գույքային, ինչպես նաև ոչ գույքային իրավունքների, շինարարության թույլտվությունների, արտոնությունների տրամադրման իրավաչափությունն ու կոռուպցիոն ռիսկերն ուսումնասիրելու նպատակով ստեղծված ԱԺ քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին» որոշման նախագծի հետ կապված։

2.3. Քննիչ հանձնաժողովի նախագահը

Քննիչ հանձնաժողովը նախագահում է պահանջը ներկայացնող պատգամավորներից մեկը (Սահմանադրություն, հոդված 108, մաս 2)[66]: Քննիչ հանձնաժողովի նախագահի ընտրությունը պահանջ ներկայացրած պատգամավորների կազմից կատարելը տրամաբանական է: Դա նաև հանդես է գալիս որպես խորհրդարանական փոքրամասնության շահերի պաշտպանության համար նախատեսված երաշխիք, եթե հանձնաժողովը ստեղծվել է խորհրդարանական փոքրամասնության նախաձեռնությամբ: Հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի ընտրության հարցում կրկին փորձ է արվել հավասարակշռել խորհրդարանական ուժերի դասավորվածությունը. այն դեպքում, երբ հանձնաժողովի նախագահի պաշտոնը զբաղեցնում է կառավարող խմբակցության[67] ներկայացուցիչը, հանձնաժողովի նախագահի տեղակալի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը վերապահվում է ընդդիմադիր խմբակցությանը (ԱԺ կանոնակարգ, հոդված 24, մաս 1, կետ 1): Այն դեպքում, երբ հանձնաժողովը նախագահում է ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչը, ապա հանձնաժողովի նախագահի տեղակալի թափուր պաշտոնը զբաղեցնելու իրավունքը պատկանում է կառավարող խմբակցությանը (ԱԺ կանոնակարգ, հոդված 24, մաս 1, կետ 2):

ԱԺ կանոնակարգը չի մանրամասնում, թե քննիչ հանձնաժողով ստեղծելու պահանջ ներկայացրած պատգամավորների կազմից ի՞նչ ընթացակարգով պետք է որոշվի քննիչ հանձնաժողովի նախագահի թեկնածությունը: Հարցի որոշումը թողնված է նշված պատգամավորների հայեցողությանը:

---

[66] Ինչպես նշվել էր, նախագահի վերաբերյալ տվյալները նշվում են հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ Ազգային ժողովի նախագահին ներկայացվող դիմումում:

[67] Կառավարող կուսակցության սահմանման համար տե՛ս ԱԺ կանոնակարգ, հոդված 7, մաս 3 և 4, ինչպես նաև բաժին I, մաս 1՝ Խորհրդարանական վերահսկողության էությունը:

2.4. Քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը

ԱԺ կանոնակարգի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը մինչև *վեց ամիս* է, որը կարող է մեկ անգամ, հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ երկարաձգվել մինչև վեց ամսով:

2.5. Քննիչ հանձնաժողովը պաշտպանության և անվտանգության բնագավառներում

Սահմանադրության 108-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր կանոններից նախատեսված է բացառություն այն դեպքերի համար, երբ քննիչ հանձնաժողովը ստեղծվում է պաշտպանության և անվտանգության բնագավառներում[68]: Հաշվի առնելով նման հանձնաժողովի իրավասության առարկայի առանձնահատկությունը, դրա ստեղծման համար պահանջվում է պատգամավորների ձայների ավելի մեծ քանակ, այն է՝ ընդհանուր թվի առնվազն *մեկ երրորդի* դիմում:

Մյուս առանձնահատկությունն այն է, որ պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովի լիազորությունները կարող է իրականացնել միայն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովը (Սահմանադրություն, հոդված 108, մաս 4):

Հետևաբար՝ այս դեպքում Ազգային ժողովի նախագահին ներկայացվող դիմումին կից անհրաժեշտ չէ քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ և քննիչ հանձնաժողովի նախա-

[68] 31.05.2019թ. Ազգային ժողովում ձևավորվել է 2016 թվականի ապրիլին ծավալված ռազմական գործողությունների հանգամանքները ուսումնասիրող քննիչ հանձնաժողով, որի գործառույթները իրականացնում է պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը (http://parliament.am/committees.php?do=show&ID=111210&lang=arm):

գահի վերաբերյալ տվյալներ, քանի որ քննիչ հանձնաժողովի լիազորությունները իրականացնելու է արդեն իսկ ձևավորված իրավասու մշտական հանձնաժողովը՝ նախագահի և անդամների գործող կազմով:

3. ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասը հստակեցնում է խորհրդարանական քննիչ հանձնաժողովի սահմանադրաիրավական խնդիրն ու այն նպատակները, որոնց համար կարող են ստեղծվել քննիչ հանձնաժողովներ. նման հանձնաժողովը պետք է պարզի այնպիսի փաստեր, որոնք վերաբերում են նախ՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին, և երկրորդ՝ այդ հարցերը պետք է գտնվեն Ազգային ժողովի իրավասության ոլորտում:

Քննիչ հանձնաժողովների քննության առարկան հստակորեն սահմանելը իրավական պետության պահանջ է, հակառակ դեպքում՝ քննիչ հանձնաժողովների գործունեությունը կարող է հանգեցնել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի խախտման:

Այսպիսով, քննիչ հանձնաժողովի իրավասության առարկան սահմանափակված է մի շարք սահմանադրաիրավական պահանջներով.

- **Հարցը պետք է հանրային հետաքրքրություն ներկայացնի**

Քննության ենթակա հարցերը պետք է հետաքրքրական լինեն հասարակության լայն շերտերի համար: Շատ հաճախ այդպիսի հարցերը բարձրացնում և հասարակության ուշադրությունը դրանց վրա են հրավիրում զանգվածային լրատվության միջոցները: Ի վերջո, թե որքանով է հարցը հանրային հետաքրքրություն ներկայացնում, գնահատում են քննիչ

հանձնաժողով ստեղծելու նախաձեռնություն ցուցաբերած պատգամավորները:

- **Հարցը պետք է մտնի Ազգային ժողովի իրավասության ոլորտի մեջ**

Առաջին հայացքից կարող է թվալ է, թե Սահմանադրությունը Ազգային ժողովին և պառլամենտական քննիչ հանձնաժողովին շատ լայն քաղաքական և իրավական ազատություն է ընձեռել հանձնաժողովի իրավասության առարկայի որոշման հարցում, քանի որ հանրային հետաքրքրությունը կարող է տարածվել բոլոր գործընթացների վրա, որոնք տեղի են ունենում ինչպես պետության և նրա մարմինների գործունեության ոլորտում, այնպես էլ դրանից դուրս՝ մասնավոր ոլորտում:

Այդ իսկ պատճառով, բացի քննության առարկայի նկատմամբ հանրային հետաքրքրության չափանիշից, Սահմանադրությունը նախատեսում է, որ քննության առարկան պետք է գտնվի Ազգային ժողովի իրավասության ոլորտում (հոդված 108, մաս 1): Քննիչ հանձնաժողովի իրավասության վերաբերյալ սահմանադրական պահանջն արտացոլվել է նաև ԱԺ կանոնակարգի 23-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի քննիչ հանձնաժողովի գործունեությունը չի կարող դուրս գալ Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող հարցերի շրջանակից: Սա բխում է նաև այն սկզբունքային մոտեցումից, որ քննիչ հանձնաժողովը չի կարող ունենալ ավելի մեծ իրավունքներ, քան ինքնին խորհրդարանը:

Ազգային ժողովի իրավասության ոլորտը և դրա սահմանները պարզելու համար պետք է անդրադառնալ, առաջին հերթին, Սահմանադրության 88-րդ հոդվածին, որը ուղղակիորեն նախատեսում է Ազգային ժողովի առանցքային գործառույթների և իրավասության երեք ոլորտներ՝

1. օրենսդրություն (մաս 2)

2. վերահսկողություն գործադիր իշխանության նկատմամբ (մաս 3)
3. պետական բյուջեի ընդունում (մաս 3):

Բացի վերոհիշյալից, 3-րդ մասն ընդհանուր, վերացական ձևով հղում է անում «Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթների» իրականացմանը:

Գործառույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննիչ հանձնաժողովի քննության առարկա կարող է դառնալ ողջ գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողությունը՝ նրա իրավասությանը վերապահված ոլորտներում: Ընդ որում, քննության առարկան կարող է ընդգրկել ինչպես գործադիր իշխանության կենտրոնական և տարածքային պետական մարմինները, այնպես էլ տեղական՝ համայնքային, ինքնակառավարման բնագավառը, որովհետև սրանք նույնպես որպես վարչարարություն իրականացնող պետք է ընկալվեն որպես գործադիր իշխանություն Սահմանադրության 4-րդ հոդվածի իմաստով: Բացի այդ, Ազգային ժողովը Սահմանադրության 182-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն օրենսդրական կարգավորման է ենթարկում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները: Նշված գործառույթի իրականացումը անհնարին է առանց տեղական ինքնակառավարման մարմինների գործունության առնչվող հարցերը քննարկման առարկա դարձնելու՝ դրանով իսկ վերջիններիս գործունեությունը նույնպես դարձնելով քննիչ հանձնաժողովի իրավասության առարկա:

Քննիչ հանձնաժողովների իրավասության առարկան կարող է ներառել նաև պաշտպանության և անվտանգության բնագավառները, որոնց առանձնահատկությունների հաշվառմամբ էլ Սահմանադրությունը հատուկ պահանջներ է առաջադրում նման հանձնաժողովների ձևավորմանը և կազմին[69]:

[69] Այս մասին տես վերը՝ մաս 2.5՝ Քննիչ հանձնաժողովը պաշտպանության և անվտանգության բնագավառներում:

ԱԺ կանոնակարգի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննիչ հանձնաժողովի քննության առարկա չեն կարող հանդիսանալ նախնական քննության կամ դատավարության որևէ այլ փուլում գտնվող հարցերը, ինչպես նաև այն հարցերը, որոնք հաստատվել կամ հերքվել են օրինական ուժի մեջ մտած դատական ակտով[70]: Այդուհանդերձ, ինքնին քրեական գործերի հարուցմամբ քննիչ հանձնաժողովի ստեղծման կամ գործունեության կասեցման հնարավորությունը խնդրահարույց է և գործնականում կարող է հանգեցնել պառլամենտական վերահսկողության համար նման կարևոր գործիքի չեզոքացմանը: Համաձայն Վենետիկի հանձնաժողովի՝ քրեական գործի հարուցումը ինքնին չպետք է հանգեցնի խորհրդարանական քննիչ հանձնաժողովի լեգիտիմ գործունեության դադարեցմանը: Քննիչ հանձնաժողովը պետք է իրականացնի իր քննությունը և տա դրա վերաբերյալ իր քաղաքական գնահատականը[71]: Այլ կերպ ասած, կարևորն այստեղ իշխանությունների բաժանման և պետական մարմինների՝ մեկը մյուսի իրավասության ոլորտ չմտնելու սկզբունքի հարգումն է, որի պահպանման պարագայում նույն հարցով երկու տարբեր գործընթացների միաժամանակյա իրականացումը խնդրահարույց չէ:

Քննիչ հանձնաժողովի քննության առարկան չպետք է սահմանափակել, սակայն, միայն պետական իշխանության ոլորտով. մասնավոր ոլորտը չպետք է բացառել, եթե առկա է կապ, օրինակ՝ պետական մարմինների կողմից պատվիրակված լիազորությունների, մասնավոր կազմակերպություններին տրված արտոնությունների կամ այլ հատուկ գործառույթների հետ:

---

[70] Օրինակ, 13.09.2018թ. Ազգային ժողովում ստեղծվեց քննիչ հանձնաժողով արդարադատության իրականացմանը խոչընդոտելու, արդար դատաքննության իրավունքի և հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը խախտելու փաստերի առնչությամբ երկրում մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակը քննության առարկա դարձնելու նպատակով: Հանձնաժողովի աշխատանքները ավարտին չհասան և վաղաժամկետ դադարեցվեցին նույն փաստերով հարուցված քրեական գործի հիմքով:

[71] Venice Commission, Amicus Curiae Brief in the case of Rywin v. Poland, Adopted by the Venice Commission at its 98th plenary session, CDL-AD(2014)013, կետ 29:

Օրինակ 1970-ական թվականներին Գերմանիայում մի ձեռնարկատիրոջ տրամադրված հարկային արտոնությունը քննիչ հանձնաժողով ստեղծելու պատճառ հանդիսացավ: Տրամադրված արտոնությունը կասկած հարուցեց, քանի որ ձեռնարկատերը մեծ չափի նվիրատվություն էր փոխանցել այն կուսակցությանը, որի անդամն էր էկոնոմիկայի նախարարը: Քննիչ հանձնաժողովը դաշնային կառավարությունից պահանջեց այդ գործարքի վերաբերյալ հարկային գաղտնիք պարունակող տեղեկատվություն, որը կառավարությունը հրաժարվեց տրամադրել՝ հղում անելով հարկային գաղտնիքին: Այս վեճը դարձավ Սահմանադրական դատարանի քննության առարկա: Սահմանադրական դատարանը գտավ, որ դաշնային կառավարության մերժումը խախտում է քննիչ հանձնաժողովի սահմանադրությամբ վերապահված իրավունքները [72]:

Թեև ԱԺ կանոնակարգը այս հարցերին ուղղակիորեն չի անդրադառնում, սակայն, քննիչ հանձնաժողովի իրավասության առարկան սկզբունքորեն չի կարող հետագայում փոփոխվել [73], առավել ևս՝ հանձնաժողովում մեծամասնության կողմից: Սա բխում է փոքրամասնության պահանջով ստեղծվող քննիչ հանձնաժողովի սահմանադրաիրավական նշանակությունից:

Պառլամենտական քննիչ հանձնաժողովի մանդատի որոշակի լինելու պահանջը հիմնված է որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքի վրա: Որոշակիության սկզբուն-

72 Urteil des Zweiten Senats vom 17. Juli 1984 aufgrund der mündlichen Verhandlung vom 15. Mai 1984-2 BvE 11, 15/83, որոշումը մատչելի է հետևյալ հղումով՝ http://www.servat.unibe.ch/dfr/bv067100.html):

73 Թերևս բացառություն կարող էր լինել այն իրավիճակը, երբ հանձնաժողովի ստեղծման նախաձեռնությամբ հանդես եկած պատգամավորները համաձայնում են փոփոխությանը, սակայն ԱԺ կանոնակարգը նման հնարավորություն չի նախատեսում:

քը ընդհանուր ձևով պարտավորեցնում է բոլոր պետական մարմիններին, որոնք իրականացնում են այդ պետական իշխանությունը, միջոցառումների իրականացման լիազորումը նորմավորել հնարավորին չափով հստակ, որպեսզի այդ լիազորման իրականացումը համապատասխան սուբյեկտների համար կանխորոշելի լինի և ստուգման ենթակա (Սահմանադրություն, հոդված 6, մաս 2, նախադասություն 2)։ Այդ իսկ պատճառով Ազգային ժողովը նաև իշխանությունների բաժանման սկզբունքով պարտավորված է պառլամենտական քննիչ հանձնաժողովի մանդատը սահմանել հնարավորին չափով ճշգրտորեն, որպեսզի պարզման կարիք ունեցող փաստերն ու դրանց պարզման համար օգտագործվող ապացուցման միջոցները հնարավոր լինի քննության ընթացքում առանց դժվարության որոշել։

- **Հարցը պետք է վերաբերի փաստերի.**

Քննիչ հանձնաժողովի քննության առարկան հստակեցնող հաջորդ նախապայմանն այն է, որ քննության առարկա կարող են լինել միմիայն փաստերը, այսինքն՝ այն ամենը, ինչ գոյություն ունի օբյեկտիվ իրականության մեջ և ապացուցման ենթակա է։

Նման պահանջը կապված է որոշակիության և իշխանությունների բաժանման սկզբունքների հետ։ Չավարտված գործընթացները, որոնցով իրավասու մարմինը դեռևս վերջնական որոշում չի կայացրել, չեն կարող համարվել «հասունացած» հաստատված փաստ լինելու համար։ Նման դեպքում քննության առարկան չի կարող բավարար չափով պարզ լինել և որոշակի լինել։ Բացի այդ, պառլամենտական քննիչ հանձնաժողովը, ստանալով նման մանդատ, կմիջամտի գործադիր իշխանության կենտրոնական ոլորտին, եթե խառնվի այն գործընթացների մեջ, որոնք դեռևս գտնվում են պետական միջոցառումների և որոշումների նախապատրաստման փուլում։

4. ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Քննիչ հանձնաժողովի ստեղծման և իրավասության առարկայի հետ կապված վեճերը ենթակա են լուծման միմիայն Սահմանադրական դատարանի կողմից՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի վարույթի շրջանակներում, որոնց մանրամասները կարգավորված են «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածով: Ասվածը վերաբերում է նաև այն վեճերին, որոնք առաջանում են քննիչ հանձնաժողովում պատգամավորների մեծամասնության և փոքրամասնության միջև:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ սահմանադրական մարմինների միջև վեճերի վարույթում են ենթակա լուծման նաև այն վեճերը, որոնք ծագում են պառլամենտական քննիչ հանձնաժողովի ու Կառավարության միջև: Մասնավորապես, դա կարող է վերաբերել քննության հետ կապված միջոցառումներին և հատկապես՝ ապացույցներ պահանջելուն ու ստանալուն:

Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի մեկ հինգերորդը (Սահմանադրություն, հոդված 169, մաս 1, կետ 2):

5. ՎԱՐՈՒՅԹԸ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

5.1. Աշխատակարգը և հրապարակայնությունը

Քննիչ հանձնաժողովն ունի իր աշխատակարգը, որը, Ազգային ժողովի Խորհրդի սահմանած օրինակելի աշխատակար-

գին համապատասխան, հաստատվում է հանձնաժողովի որոշմամբ (ԱԺ կանոնակարգ, հոդված 21, մաս 4)։

Համաձայն Սահմանադրության քննիչ հանձնաժողովն իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով։ Հանձնաժողովի հերթական նիստերը գումարվում են հանձնաժողովի կամ նրա նախագահի սահմանած օրերին։

Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին, և նիստը նախագահում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու դեպքում՝ նրա տեղակալը կամ հանձնաժողովի կողմից որոշված անդամը։

Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ։

ԱԺ կանոնակարգը սահմանում է, որ քննիչ հանձնաժողովի նիստերն անցկացվում են մշտական հանձնաժողովների համար Կանոնակարգի 15-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան (հոդված 21, մաս 3)։ Կանոնակարգը հատուկ պահանջներ չի սահմանում քննիչ հանձնաժողովների նիստերի հրապարակայնության վերաբերյալ։ Սակայն, ելնելով մշտական հանձնաժողովների համար սահմանված կարգավորումներից (ԱԺ կանոնակարգ, հոդված 14, մաս 4) [74], կարելի է եզրահանգել, որ քննիչ հանձնաժողովի նիստերը սկզբունքորեն հրապարակային են, քանի որ պառլամենտական ժողովրդավարությունը պահանջում է թափանցիկություն։ Բնականաբար, պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիքի ապահովման նպատակով կարող են անցկացվել փակ նիստեր։ Սա հատկապես կարևոր է այն դեպքում, երբ քննիչ հանձնաժողովը ստեղծվել է պաշտպանության և անվտանգության բնագավառներում։ Բոլոր դեպքերում պետք է ծանր ու թեթև անել մի

[74] Այս մասին առավել մանրամասն տե՛ս բաժին IV, մաս 2.3՝ Մշտական հանձնաժողովի նիստերի հրապարակայնությունը։

կողմից՝ հրապարակայնության սահմանադրական սկզբունքի և մյուս կողմից՝ պաշտպանության ենթակա շահերի միջև:

5.2. Քննիչ հանձնաժողովի իրավունքները և գործիքակազմը

Քննիչ հանձնաժողովի կողմից իր առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացման համար առանցքային նշանակություն ունեն հանձնաժողովին վերապահված իրավունքները, որոնք Սահմանադրության 108-րդ հոդվածի հիման վրա կոնկրետացված են ԱԺ կանոնակարգի 21-րդ հոդվածի 1-ին մասում:

5.2.1. Ապացույցների ձեռքբերման ընթացակարգը

Քանի որ պառլամենտական քննիչ հանձնաժողովի քննության առարկան վերաբերում է փաստեր պարզելուն, նրա կարևորագույն գործողություններից է ապացույցներ ձեռք բերելը: Այս հարցին Սահմանադրությունը անդրադառնում է սահմանադրական մակարդակով՝ 108-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրելով քննիչ հանձնաժողովի իրավունքը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնատար անձանցից *պահանջելու և ստանալու հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ*:

Ընդ որում, այստեղ ևս Սահմանադրությունը հաշվի է առնում պառլամենտական փոքրամասնության իրավունքները և ուղղակիորեն ամրագրում է, որ տեղեկություններ պահանջելու համար բավարար է հանձնաժողովի անդամների 1/4-ի գրավոր դիմումը իրավասու մարմնին կամ պաշտոնատար անձին: ԱԺ կանոնակարգը սահմանում է, որ դիմումը ներկայացվում է գրավոր և անհրաժեշտ չէ հանձնաժողովի որոշում (հոդված 21, մաս 1, կետ 1): Ինչպես արդեն նշվել է, քննիչ

հանձնաժողովները ձևավորվում են խորհրդարանում խմբակցությունների ներկայացվածության համամասնությամբ, ինչը նշանակում է, որ խորհրդարանում փոքրամասնություն ունեցող ուժերը լինելու են փոքրամասնություն նաև հանձնաժողովում: Այս առումով, անհրաժեշտ տեղեկություններ պահանջելու համար հանձնաժողովի անդամների 1/4-ի պահանջին վերաբերող կարգավորումը կարևոր երաշխիք է փոքրամասնության համար, որպեսզի նրանց կողմից որոշակի փաստերի մասին տեղեկություններ պահանջելու հնարավորությունը անհարկի չսահմանափակվի հանձնաժողովում մեծամասնության կողմից՝ դրանով իսկ ի չիք դարձնելով հանձնաժողովի ստեղծման իմաստը: Միաժամանակ, 1/4-ի պահանջը կանխում է հանձնաժողովի առանձին անդամի կողմից հայեցողականորեն անհարկի և ավելորդ տեղեկություններ պահանջելն ու հավաքելը, ինչը կարող է վտանգել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, օրենքով պաշտպանվող գաղտնիքը և այլն:

Քննիչ հանձնաժողովի պահանջած տեղեկությունները պետք է նրան ուղարկվեն գրավոր դիմումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, եթե դիմումի մեջ ավելի երկար ժամկետ նշված չէ, կամ դիմումի հասցեատերը հանձնաժողովի պահանջը կատարելու համար ողջամիտ ժամկետ չի առաջարկում (ԱԺ կանոնակարգ, հոդված 21, մաս 2): Հանձնաժողովի անդամները դիմումով պահանջվող տեղեկություններին առնչվող նյութերին կամ փաստաթղթերին կարող են ծանոթանալ նաև դրանց գտնվելու վայրում:

Հարկ է նկատել, որ Սահմանադրության 108-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քննիչ հանձնաժողովին տեղեկություններ տրամադրելու պարտականությունը բացարձակ չէ, այլ սահմանափակված է այն վերապահմամբ, որ դրա կատարումը արգելված չպետք է լինի օրենքով: Սահմանադրությունը օրենսդիրին է թողնում այդ պարտավորության կատարմանը խոչընդոտ հանդիսացող արդարացված (լեգիտիմ) հանրային շահերի կոնկրետացման խնդիրը: Սահմանադրական այս դրույթը օրենսդիրի կողմից որոշակի առումով

կոնկրետացվել է ԱԺ կանոնակարգի 21-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները հանձնաժողովի գրավոր դիմումով նրան են տրամադրվում օրենքով սահմանված կարգով[75]: Սակայն, նշված կարգավորումը հստակ պատասխան չի տալիս այն հարցին, թե արդյո՞ք և ե՞րբ կարող է մերժվել տեղեկությունների տրամադրումը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննիչ հանձնաժողովի կողմից պահանջված տեղեկությունների տրամադրումը գործադիրի կողմից մերժելու հիմք են հանդիսանում, որպես կանոն, նախ՝ պետության շահերի պաշտպանությունը, որը պետական գաղտնիքների պահպանման անհրաժեշտության պատճառով գերակայություն ունի, և երկրորդ՝ քաղաքացիների անհատական շահերի պաշտպանությունը, եթե գերակայություն ունեն պառլամենտական քննիչ հանձնաժողովի քննություն իրականացնելու շահերի համեմատ:

Այսպես, տեղեկություններ ստանալու իրավունքի սահմանափակումները կարող են բխել ստորև ներկայացվող մի շարք հանգամանքներից.

- **Հարցը վերաբերում է գործադիր իշխանության սեփական պատասխանատվության կենտրոնական ոլորտին:**

Իշխանությունների բաժանման սկզբունքը հիմք է կառավարությունից տեղեկություններ պահանջելու պառլամենտի իրավունքի համար, բայց այդ սկզբունքը միաժամանակ նաև այդ իրավունքի սահմանն է: Քննիչ հանձնաժողովը պարտավոր է հարգել գործադիր իշխանության սեփական պատասխանատվության կենտրոնական ոլորտը, այսինքն՝ կառավարության նախաձեռնությունների, խորհրդատվության

[75] Այս մասին առավել մանրամասն տե՛ս նաև բաժին IV, մաս 3.2.1՝ Հանձնաժողովի կողմից տեղեկություններ պահանջելն ու ստանալը:

և գործողությունների այն ոլորտը, որը, մասնավորապես, վերաբերում է կառավարության ներսում կամքի կազմավորմանը: Որքան ավելի հեռու է ներթափանցում տեղեկություններ ստանալու պառլամենտի պահանջը կառավարության կամքի կազմավորման ներքին ոլորտի մեջ, այնքան ավելի ծանրակշիռ այն պետք է լինի, որպեսզի հնարավոր լինի հաղթահարել Կառավարության կողմից ներկայացված գաղտնիության փաստարկը:

- **Պետության շահերը**

Միջազգային պրակտիկայում ապացուցման միջոցների տրամադրումը հանձնաժողովին կարող է մերժվել, եթե դա են պահանջում պետության շահերը, ամենից առաջ՝ արտաքին ու ներքին անվտանգության հետ կապված ռիսկերը և երրորդ անձանց պաշտպանությունը: Սա, մասնավորապես, վերաբերում է գաղտնի ծառայությունների, հետախուզական և հակահետախուզական ծառայությունների գործունեությանը, դրանց աշխատակիցների ինքնությանը: Սակայն, եթե պառլամենտական ընթացակարգով հնարավոր է ապահովել գաղտնիքների պաշտպանությունը, ապա ինքնին այդ տեղեկատվության գաղտնի լինելը բավարար հիմք չէ ապացույցների տրամադրումը մերժելու համար: Իր գործառույթների իրականացման համար քննիչ հանձնաժողովն իրավունք ունի որոշմամբ նաև դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց՝ հանձնաժողովում քննարկվող հարցի փաստական հանգամանքների ուսումնասիրման համար՝ պատվիրելով փորձաքննություններ, և ստանալ դրանց արդյունքում կազմված եզրակացությունները (ԱԺ կանոնակարգ, մաս 1, կետ 2):

- **Մասնավոր անձանց իրավունքները**

Քննիչ հանձնաժողովի կողմից ապացույցներ ձեռք բերելու գործընթացը բավական զգուշորեն պետք է իրականացվի, երբ այն առնչվում է մասնավոր անձանց իրավունքներին: Ինչպես պետության ցանկացած իշխանական լիազորության դեպքում, քննիչ հանձնաժողովը նույնպես կաշկանդված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով: Ըստ այդմ, մասնավոր անձանց հիմնական իրավունքներով պաշտպանվող ոլորտներին քննիչ հանձնաժողովի կողմից միջամտությունը չի կարող կատարվել նրանց կամքին հակառակ: Բոլոր դեպքերում, երրորդ անձանց նկատմամբ ապացույցների ձեռքբերման գործընթացում պետք է հաշվի առնել, որ քննիչ հանձնաժողովը դատարան կամ նախաքննության մարմին չէ և չի կարող միջամտել մասնավոր անձանց հիմնական իրավունքներին այն ծավալով, ինչը հնարավոր է քրեական վարույթում: Օրինակ՝ քննիչ հանձնաժողովը չի կարող հանձնարարել հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումներ, պահանջել անձից ներկայանալ հանձնաժողով և ցուցմունք տալ, այլ կերպ շոշափել գաղտնիության պաշտպանության ենթակա մասնավոր անձանց շահեր:

5.2.2. Անձանց հանձնաժողով հրավիրելն ու լսելը

ԱԺ կանոնակարգի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը կարող է իր որոշմամբ հանձնաժողով հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց, ինչպես նաև այն անձանց, որոնք ներկայացրել են հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ: Հարկ է նկատել, որ հանձնաժողով ներկայանալը որպես պարտականություն է սահմանված միայն պաշտոնատար անձանց համար, իսկ այլ անձինք ունեն իրավունք ներկայանալու և հանձնաժողովի նիստում բացատրություններ տալու, ինչպես նաև պատասխանելու հանձնաժողովի անդամների հարցե-

րին (ԱԺ կանոնակարգ, հոդված 22, մաս 1)։ Պաշտոնատար անձանց՝ հանձնաժողով ներկայանալու և բացատրություններ տալու, ինչպես նաև հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու պարտականությունը պահպանվում է նաև նրանց պաշտոնից ազատվելուց հետո, եթե տեղեկատվության տրամադրման պահանջը կամ նիստին ներկայանալու և բացատրություններ տալու հրավերն ստացվել է մինչև պաշտոնից ազատվելը (ԱԺ կանոնակարգ, հոդված 22, մաս 1.1)։

Քննիչ հանձնաժողով հրավիրված անձն իրավունք ունի՝

- ծանոթանալու իր մասնակցությամբ հանձնաժողովի նիստերի արձանագրություններին, ինչպես նաև ներկայացնելու դրանցում փոփոխություններ կատարելու պահանջ,
- պարզաբանումներ տալու հանձնաժողովի զեկույցի վերաբերյալ, ինչպես նաև հիմնավորելու իր դիրքորոշումն ամբողջությամբ (ԱԺ կանոնակարգ, հոդված 22, մաս 2)։

Այդուհանդերձ, ԱԺ կանոնակարգը չի կարգավորում հանձնաժողով հրավիրված պաշտոնատար անձանց մի շարք վարույթային իրավունքներին առնչվող հարցեր, օրինակ՝ արդյո՞ք հանձնաժողով հրավիրված պաշտոնատար անձը ունի ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունք իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն կարելի է ենթադրել, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ (Սահմանադրություն, հոդված 65)։

6. ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առանձնակի կարևորություն ունի այն վերջնական արդյունքը, որը հնարավոր է ստանալ խորհրդարանական վերահսկողության այս գործիքի միջոցով։ Այդ նպատակով շատ կարևոր

է հասկանալ, թե ի՞նչ իրավաբանական ուժ ունի և ի՞նչ հետևանքներ կարող է առաջացնել քննիչ հանձնաժողովի գործունեությունը:

Քննիչ հանձնաժողովի գործունեությունը պետք է ավարտվի փաստերի պարզմամբ և դրանք Ազգային ժողով ներկայացմամբ: ԱԺ կանոնակարգի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քննիչ հանձնաժողովը իր գործունեությունը ավարտում է Ազգային ժողովի նախագահին ներկայացված զեկույցով, որը պետք է ներառի քննիչ հանձնաժողովի ստեղծման համար հիմք հանդիսացած հարցի վերաբերյալ պարզված փաստերը և դրանց վերաբերյալ քննիչ հանձնաժողովի եզրահանգումները: Զեկույցն Ազգային ժողովի նախագահին ներկայացվելուց հետո՝ *մեկ ամսվա ընթացքում*, քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստում (ԱԺ կանոնակարգ, հոդված 25, մաս 4):

Զեկույցի ներկայացման ժամանակ նույնպես հաշվի է առնվել փոքրամասնության շահերը: ԱԺ կանոնակարգի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, եթե քննիչ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդը զեկույցի վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա նրանց ներկայացուցիչը կարող է Ազգային ժողովի նիստում զեկույցի քննարկման ընթացքում հանդես գալ հարակից զեկուցմամբ՝ ներկայացնելով հատուկ կարծիքը:

Զեկույցի քննարկումն ավարտվելուց հետո, զեկույցը, հատուկ կարծիք լինելու դեպքում նաև դա, ուղարկվում է զեկույցում նշված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց, որոնք կարող են զեկույցի վերաբերյալ իրենց գրավոր պատասխանն Ազգային ժողովի նախագահին ուղարկել մեկամսյա ժամկետում: Պատասխանները տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (ԱԺ կանոնակարգ, հոդված 25-րդ, մաս 5):

Զեկույցի իրավական նշանակությունը և ներգործությունը կայանում է նրանում, որ Ազգային ժողովը, հաստատելով քննիչ հանձնաժողովի կողմից պարզաբանված փաստերը,

իր հեղինակությամբ բարձրաձայնում է դրանցում տեղ գտած խնդիրները:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ փաստերի պաշտոնական հաստատումը խորհրդարանի կողմից ժողովրդավարական իրավական պետությունում շատ հաճախ ունենում է զգալի ազդեցություն քաղաքական գործընթացների և հասարակության վրա: Օրինակ, «The Watergate Committee» անունը ստացած՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Սենատի կողմից ստեղծված քննիչ հանձնաժողովի գործունեությունը հանգեցրեց Նահանգների պատմության մեջ պետության նախագահի (Ռիչարդ Նիքսոն) հրաժարականի առաջին դեպքին[76]: Այս գործում շատ մեծ կարևորություն է ունեցել քննիչ հանձնաժողովի աշխատանքների հրապարակայնությունը, ինչի արդյունքում քննիչ հանձնաժողովը ստացել է զանգվածային լրատվության միջոցների և բնակչության աջակցությունը:

Ազգային ժողովում ձևավորված քննիչ հանձնաժողովները

Հայաստանի Հանրապետության յոթերորդ գումարման Ազգային ժողով[77]

- 02.07.2020թ.՝ Նոր կորոնավիրուսի (COVID 19) տարածումը կանխելու, այդ վիրուսի դեմ պայքարի, համաճարակի հետևանքների մեղմման կամ վերացման

[76] Մի խումբ անձինք ապօրինաբար մուտք էին գործել Watergate հյուրանոցում գտնվող Դեմոկրատական կուսակցության նախագահի թեկնածուի Վաշինգտոն նահանգի կենտրոնական գրասենյակ և փորձ էին կատարել լուսանկարահանել գրասենյակի փաստաթղթերը, տեղադրել տեխնիկական սարքավորումներ, սակայն ոստիկանության հաջողվել էր ձերբակալել հանցագործներին: Համաձայն վիճակագրության, ԱՄՆ բնակչության 85 % հետևել է հանձնաժողովի նիստերից առնվազն մեկին: Մանրամասների համար տես The Washington Post. The Watergate Story, մատչելի է հետևյալ հղումով http://www.washingtonpost.com/wp-srv/politics/special/watergate/part1.html):

[77] Տվյալները ներկայացված են 2020թ. հուլիսի դրությամբ:

ուղղությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության և պարետատան իրականացրած միջոցառումների արդյունավետությունը, ինչպես նաև արտակարգ դրության ժամանակահատվածում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակումների արդյունավետությունն ու իրավաչափությունն ուսումնասիրելու համար[78].

- 05.12.2019թ.՝ 2018 թվականի սեպտեմբերից սկսած տարբեր սուբյեկտների կողմից Երևան համայնքին տրանսպորտային միջոցների և այլ գույքի փոխանցման, ծառայությունների մատուցման պայմանագրերի, ինչպես նաև Երևան համայնքի կողմից դրանց հետ կապված այլ անշարժ կամ շարժական գույքի փոխանցման, այդ թվում՝ գույքային, ինչպես նաև ոչ գույքային իրավունքների, շինարարության թույլտվությունների, արտոնությունների տրամադրման իրավաչափությունն ու կոռուպցիոն ռիսկերն ուսումնասիրելու համար[79].
- 19.11.2019թ.՝ Հայաստանի Հանրապետության ցամաքային ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացը և 2016-2019թթ. ոլորտը սպասարկող, համակարգող և վերահսկող լիազոր մարմինների գործունեությունն ուսումնասիրելու համար[80].
- 26.09.2019թ.՝ Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ներդրումային ծրագրերի շրջանակներում գործադիր իշխանության մարմիններին ներկայացված և նրանց կողմից ընդունված ֆինանսական և այլ հաշվետվությունների օրինականու-

78 http://parliament.am/committees.php?do=show&ID=111215&lang=arm:

79 Ինչպես արդեն նշվել է, հանձնաժողովը չի գործել անդամների թիվը չսահմանելու արդյունքում: http://parliament.am/register.php?ID=534#22.01.2020:

80 http://parliament.am/committees.php?do=show&ID=111213&lang=arm:

թյունը, հիմնավորվածությունը և արժանահավատությունը ուսումնասիրելու համար[81].

- Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի, դրա կառուցվածքային ստորաբաժանումների և ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի գործունեության արդյունավետությունն ուսումնասիրելու համար [82].
- 31.05.2019թ.՝ 2016 թվականի ապրիլին ծավալված ռազմական գործողությունների հանգամանքները ուսումնասիրելու համար [83]:

Հայաստանի Հանրապետության վեցերորդ գումարման (2017–2018թթ.) Ազգային ժողով

- 13.09.2018թ.՝ արդարադատության իրականացմանը խոչընդոտելու, արդար դատաքննության իրավունքի և հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը խախտելու փաստերի առնչությամբ երկրում մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակը քննության առարկա դարձնելու նպատակով [84]:
- 03.10.2018թ.՝ Հայաստանի Հանրապետությունում գազի և էլեկտրաէներգիայի մատակարարման և բաշխման համակարգերի գործունեությունը, գազի և էլեկտրաէներգիայի գործող սակագների հիմնավորվածությունը ուսումնասիրելու նպատակով[85]:

[81] http://parliament.am/committees.php?do=show&ID=111212&lang=arm:

[82] http://parliament.am/committees.php?do=show&ID=111211&lang=arm:

[83] http://parliament.am/committees.php?do=show&ID=111210&lang=arm:

[84] http://parliament.am/committees.php?do=show&ID=111195&lang=arm:

[85] http://parliament.am/committees.php?do=show&ID=111196&lang=arm

Այլ երկրներում խորհրդարանական քննիչ հանձնաժողովների գործունեության օրինակներ

Իսրայել

- Իսրայելի խորհրդարանի կողմից 2005-2006 թթ. ստեղծվել էր քննիչ հանձնաժողով[86], որի նպատակն էր ուսումնասիրել կոռուպցիոն դրսևորումները գործադիր և դատական իշխանություններում:
- Իսրայելի խորհրդարանի կողմից ստեղծվել են քննիչ հանձնաժողովներ նաև հետևյալ հարցերի կապակցությամբ.
  - միջազգային փորձի հիման վրա ուսումնասիրել Իսրայելի բանկային համակարգը և դրանց բարեփոխման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ,
  - սպորտում տեղի ունեցած հանցավոր դրսևորումների վերաբերյալ,
  - ջրային ռեսուրսների հետ կապված խնդիրների վերաբերյալ,
  - սոցիալական անհավասարության դրսևորումների վերաբերյալ[87]:

Չեխիա

Հանրային իշխանությունում կոռուպցիոն դրսևորումների մակարդակի վերաբերյալ ուսումնասիրություններ իրականացնելու համար քննիչ հանձնաժողով էր ստեղծվել նաև Չեխիայի հանրապետությունում[88]:

[86] Առավել մանրամասն տե՛ս Knesset Committees, Parliamentary Inquiry Committee for Uncovering Corruption in the Government System of Israel, մատչելի է հետևյալ հղումով՝ https://knesset.gov.il/committees/eng/ParlInqCommittees_eng.asp):

[87] Նույն տեղում:

[88] Parliament of the Czech Republic, Investigation Commission for investigating of progression of organized crime and special interest groups into the operation of public administration authorities, մատչելի է հետևյալ հղումով՝ http://psp.cz/en/sqw/snem.sqw?zvo=1&id=929):

Սլովենիա

Սլովենիայում ստեղծվել էր քննիչ հանձնաժողով[89], որը պետք է ուսումնասիրեր «Nova Kreditna» բանկի կողմից իրականացված հնարավոր փողերի լվացումը և 2018թ. Սլովենիայում տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակ Դեմոկրատական կուսակցությանը նախընտրական քարոզչության ժամանակ տրամադրված անօրինական ֆինանսավորման վերաբերյալ փաստեր:

Էստոնիա

Էստոնիայում 2016թ. ստեղծված հանձնաժողովը նպատակ ուներ պարզելու Տալլինի նավահանգստում առկա ենթադրյալ կոռուպցիոն դրսևորումները: Հանձնաժողովի նպատակն էր պարզելու, թե ինչ գործոններ են նպաստել դրան և այդ ամենը ինչպես է ազդել պետության վրա՝ որպես նավահանգստի սեփականատեր[90]:

Ռումինիա

Ռումինիայի խորհրդարանի կողմից 2019թ. ստեղծվել էր քննիչ հանձնաժողով, որի նպատակն էր ուսումնասիրել ազգային ավիափոխադրողի 2007-2018թթ. գործունեությունը[91]:

---

89 Commission of Inquiry for investigating the alleged money laundering in Nova Kreditna banka Maribor, d.d., the suspected illegal financing of the Slovenian Democratic Party and the suspected illegal financing of the election campaign for the early elections to the National Assembly in 2018 (մատչելի է հետևյալ հղումով՝ https://www.dz-rs.si/wps/portal/en/Home/ODrzavnemZboru/KdoJeKdo/DelovnoTelo?idDT=DT064):

90 Work of the Committee of Investigation on the Port of Tallinn, մատչելի է հետևյալ հղումով՝ https://www.riigikogu.ee/en/parliament-of-estonia/committees/committee-of-investigation-to-identify-possible-corruption-risks-in-the-public-limited-company-port-of-tallinn):

91 Parliament of Romania, Comisia de ancheta privind activitatea SC Compania Nationala de Transporturi Aeriene Romane TAROM SA in perioada 2007-2018, մատչելի է հետևյալ հղումով՝ http://www.cdep.ro/pls/parlam/structura2015.co?idl=2&idc=228):

VI

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԸ

1. ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդարանի կողմից Կառավարության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ նախապայման է համապատասխան տեղեկատվությանը տիրապետելը: Այդ նպատակով ստեղծված մի շարք գործիքներից մեկը կառավարության անդամներին բանավոր և գրավոր հարցերով դիմելու պատգամավորների իրավունքն է: Բանավոր և գրավոր հարցերը լայն կիրառություն ունեն տարբեր երկրների խորհրդարաններում [92]:

[92] Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում 2013-2017թթ. Բունդեսթագի անդամները Դաշնային կառավարությանը ուղղել են 14 012 գրավոր և 3 119 բանավոր հարց: Տեղեկատվությունը մատչելի է հետևյալ կայքում՝ https://www.btg-bestellservice.de/pdf/80140000.pdf, էջ 13:

Կառավարության անդամներին հարցեր ուղղելու ինստիտուտը ունի բրիտանական ծագում. կառավարության անդամին ուղղված հայտնի առաջին հարցը Միացյալ թագավորության Լորդերի պալատում հնչել է դեռևս 1721թ. [93]:

Կառավարության անդամներին բանավոր և գրավոր հարցեր տալու ինստիտուտը նախատեսված էր նաև 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ (հոդված 80): Սակայն խորհրդարանական կառավարման համակարգում այս ինստիտուտն առավել ընդգծված նշանակություն է ձեռք բերում Ազգային ժողովի այս վերահսկողական գործիքների շարքում՝ հանդիսանալով կառավարության գործունեության մասին տեղեկատվության ստացման կարևոր միջոց: Այդ է պատճառը, որ կառավարության անդամներին բանավոր և գրավոր հարցեր տալու պատգամավորների իրավունքն ամրագրված է սահմանադրական մակարդակով՝ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 112-րդ հոդվածով:

2. ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐ ՈՒՂՂԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Սահմանադրության 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում Կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների բանավոր հարցերին: Ազգային ժողովի նիստերին ներկա գտնվելու և հարցերին պատասխանելու պարտականությունը վերաբերում է Կառավարության բոլոր անդամներին, այդ թվում՝ վարչապետին, ինչը համահունչ է խորհրդարանական կառավարման ձևի էությանը:

ԱԺ կանոնակարգի 120-րդ հոդվածի համաձայն՝ Կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների

[93] House of Commons Information Office, Parliamentary Questions, էջ 2 (Մատչելի է հետևյալ հղումով՝ http://www5.poderjudicial.es/secp10-11/Documentaci%C3%B3n%20Ingl%C3%A9s/FILES%20AND%20LINKS/Parliament/parliamentary%20questions.pdf):

բանավոր հարցերին՝ յուրաքանչյուր հերթական նիստերի չորեքշաբթի օրվա վերջին, հիմնական նիստում (մաս 1)։

Պատգամավորների կողմից տրվող հարցերի բովանդակությանը որոշակի պահանջներ է ներկայացվում ԱԺ կանոնակարգի 120-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն պատգամավորների կողմից տրված հարցերից յուրաքանչյուրը պետք է վերաբերի կառավարության մեկ անդամի իրավասությանը վերապահված ոլորտին։ Այլ կերպ ասած, սա նշանակում է, որ օրինակ՝ պատգամավորի կողմից տրված հարցը, չի կարող վերաբերել և՛ առողջապահության, և՛ արդարադատության ոլորտներին միաժամանակ, այն պետք է լինի կոնկրետ և վերաբերի միայն կառավարության մեկ անդամի իրավասությանը վերապահված ոլորտին։

Պատգամավորների կողմից հարցեր տալու և կառավարության անդամների կողմից դրանց պատասխանելու ընթացակարգը սահմանված է ԱԺ կանոնակարգի 57-րդ հոդվածով։ Նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարցերի համար հատկացվում է երկուական, իսկ հարցերին պատասխանելու համար՝ երեքական րոպե։ Կողմերին նաև տրվում է արձագանքելու հնարավորություն՝ յուրաքանչյուրին մեկական րոպե։

Գործող կարգավորումների համաձայն բանավոր հարցերը նախօրոք չեն հրապարակվում և հնչում են միանգամից՝ Ազգային ժողովի նիստի ժամանակ։ Հարցերը միանգամից տրվելու դեպքում կառավարության անդամները հնարավորություն չեն ունենում պատրաստվելու և դրանց ավելի մանրամասն պատասխանելու համար։ Օրինակ՝ Անգլիայում[94] և Գերմանիայում[95] կառավարությանը բանավոր տրվող հարցերը ներկայացվում են նախօրոք, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան պատրաստվելու հարցին։ Այս տեսանկյունից հարցերի նախօրոք ներկայացումը տրամաբանական

[94] House of Commons Information Office, Parliamentary Questions, էջ 3։

[95] Rules of Procedure of the German Bundestag, հավելված 4, հոդված 2, կետ 2 (մատչելի է հետևյալ հղումով՝ https://www.btg-bestellservice.de/pdf/80060000.pdf?fbclid=IwAR18isntr7cjD348ehw_ZeUxiA6WFEWn0L6O-Af3NlYWIBsKVcJEwPGkLyU)։

է, բայց շատ հաճախ այս ինստիտուտը օգտագործվում է կառավարության անդամներին սուր և անսպասելի հարցեր տալու համար:

Չնայած նրան, որ խորհրդարանական այս գործիքը ի սկզբանե ունեցել է վերահսկողական գործառույթ՝ այն օգտագործվում է նաև քաղաքական նպատակներով: Իշխող քաղաքական մեծամասնության պատգամավորների կողմից կառավարությանն ուղղված բանավոր հարցերը կարող են ծառայել կառավարության կատարած աշխատանքը լավագույնս ներկայացնելու նպատակներին: Ամբողջովին հակառակ պատկերն է խորհրդարանական փոքրամասնության կողմից տրվող հարցերի դեպքում: Ընդդիմության ներկայացուցիչները, որպես կանոն, փորձում են հնարավորինս սուր և քննադատական հարցեր ուղղել՝ հասարակական ուշադրությունը հրավիրելով կառավարության հնարավոր թերությունների կամ խնդրահարույց որոշումների վրա:

3. ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑԵՐ ՈՒՂՂԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Սահմանադրության 112-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է պատգամավորների՝ Կառավարության անդամներին գրավոր հարցեր ուղղելու իրավունքը: Ի տարբերություն բանավոր հարցերի, որոնց պարագայում ինչպես հարցերը, այնպես էլ պատասխանները հնչում են Ազգային ժողովի նիստի ժամանակ՝ գրավոր հարցերի պատասխանները Ազգային ժողովի նիստում չեն ներկայացվում: Գրավոր հարցերի ձևաչափը առավել հարմար է լրացուցիչ ուսումնասիրություն պահանջող և առավել համապարփակ տեղեկատվություն ստանալու համար:

Պատգամավորների՝ Կառավարության անդամների գրավոր հարցեր ուղղելու իրավունքի իրացման ընթացակարգը ևս մանրամասնեցված է ԱԺ կանոնակարգով:

ԱԺ կանոնակարգի 119-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հարցն ստանալուց հետո՝ երեքշաբաթյա ժամկետում, վարչապետը կամ նրա համաձայնությամբ Կառավարության համապատասխան անդամը գրավոր պատասխանում է հարցին: Գրավոր հարցերի պատասխանները տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (հոդված 119, մաս 3):

Կառավարության անդամների հետ բանավոր հարց ու պատասխանի նիստերը ուղիղ եթերով առցանց հեռարձակվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում՝ հնարավորություն ընձեռելով հասարակությանը հետևելու դրանց: Իսկ Կառավարության անդամներին ուղղված գրավոր հարցերի մասով Ազգային ժողովի կայքում չկա որևիցե տեղեկատվություն: Գրավոր հարցերի հրապարակումը Ազգային ժողովի կայքում թերևս կբարձրացներ Ազգային ժողովի գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ հասարակությանը հնարավորություն տալով առավել տեղեկացված լինել առաջնային մանդատ ունեցող այս մարմնի և պատգամավորների գործունեությունից:

VII

ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ

1. ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին անգամ կիրառվելով 1791թ. Ֆրանսիայի 3-րդ հանրապետությունում՝ հարցապնդումը [96] ներկայումս հանդիսանում է հատկապես խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներում կառավարության նկատմամբ պառլամենտական վերահսկողության իրականացման կարևորագույն գործիքներից մեկը [97]: Հարցապնդման օգնությամբ խորհրդարանները ապահովում են, որ կառավարությունը գործի իրեն վերապահված լիազորությունների շրջանակում և իրացնի իր ստանձնած քաղաքական պարտավորությունները:

[96] Ծագում է լատիներեն «interpellatio» բառից:

[97] Vait Qerimi, Parliamentary control functions (Kosovo case), European academic research, Vol. III, Issue 2, May 2015, էջ 2119, կետ 4.2, մատչելի է հետևյալ հղումով՝ https://bit.ly/34I3iNO):

2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 113-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ խմբակցությունները իրավունք ունեն գրավոր հարցապնդումներով դիմել կառավարության անդամներին [98]: Հարցապնդումների հետ կապված մանրամասները կարգավորված են ԱԺ կանոնակարգի 121-րդ հոդվածում:

Միջազգային փորձում հարցապնդումները հիմնականում կիրառվում են առանձնակի կարևորության հարցերի կապակցությամբ կառավարության քաղաքականության վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար [99]: Հարցապնդումները սովորաբար վերաբերում են պետական կարևորության խնդիրների [100]: Հարցապնդումները միաժամանակ նաև «քննադատական վերահսկողության» միջոց են, որի հիմքում ընկած է իշխող և ընդդիմադիր կուսակցությունների միջև մրցակցությունը [101]: Հարցապնդումների միջոցով պառլամենտական ընդդիմությունը փորձում է հայտնաբերել իշխանության թույլ տված թերությունները և քննադատելով լրացուցիչ քաղաքական դիվիդենդներ շահել: Դրանով ընդդիմադիր խմբակցությունը բարձրացնում է իր ճանաչելիության մակարդակը, ցույց է տալիս հանրությանը, որ ունակ է ստանձնելու

---

98 Այս ինստիտուտը Հայաստանում առաջին անգամ նախատեսվել է 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ (հոդված 80):

99 Նման սահմանում է տրված, մասնավորապես, Իտալիայի Հանրապետության Պատգամավորների պալատի կանոնակարգի կանոն 136-ում (մատչելի է հետևյալ հղումով՝ https://bit.ly/397x1D1):

100 Cornelie Ilie, Parliamentary Discourse, The International Encyclopedia of Language and Social Interaction, First Edition, 2015, էջ 3, վերջին պարբերություն (մատչելի է հետևյալ հղումով՝ https://bit.ly/2sRLjaq): Օրինակ՝ Բելգիայի Ներկայացուցիչների պալատում հարցապնդումների առարկա չեն կարող լինել տեղական կամ մասնավոր շահերին վերաբերող հարցերը: Hironori Yamamoto, Tools for parliamentary oversight: a comparative study of 88 national parliaments, Inter-parliamentary Union, 2007, p. 59-60, (մատչելի է հետևյալ հղումով՝ http://archive.ipu.org/PDF/publications/oversight08-e.pdf):

101 M. S. de Dios, Parliamentary accountability in Europe: How do parliaments of France, Italy and Spain fight information asymmetries? Paper prepared for the workshop: "Comparing legislatures worldwide: roles, functions and performance in old and new democracies", 11-16 April, 2008, էջ 5, վերջին պարբերություն (մատչելի է հետևյալ հղումով՝ https://bit.ly/2roQvlQ):

պետության ղեկը[102]: Հարցապնդումների միջոցով լուծվում է ևս երկու խնդիր՝ կառուցողական քննարկում, որի ընթացքում կողմերը կարող են փոխանակել իրենց դիրքորոշումները և երկրորդը՝ հարցապնդումը հանդես է գալիս որպես որոշակի տեղեկատվության հանրայնացման գործիք[103]:

Եվրոպայի Խորհուրդը իր մի շարք փաստաթղթերում արձանագրել է, որ հարցապնդումների ինստիտուտը և դրանց արդյունքում կառավարությանը անվստահություն հայտնելու մեխանիզմը պառլամենտական փոքրամասնությանը վերապահված կարևորագույն գործիք են[104]:

Հարցապնդումների ինստիտուտը պետք է տարբերել կառավարության անդամներին պատգամավորների կողմից *գրավոր և բանավոր հարցեր ուղղելու*[105] մեխանիզմից: Հարցեր ուղղելու մեխանիզմը առավելապես տեղեկատվություն ստանալու նպատակ է հետապնդում, մինչդեռ հարցապնդմանը կարող են հաջորդել պառլամենտում քննարկումները, և կախված դրանց արդյունքներից՝ հանգեցնել կառավարության վստահության հարցի բարձրացման: Դրանով իսկ, հարցապնդումները կարող են լրացուցիչ քաղաքական լարվածության աղբյուր լինել[106], այդ իսկ պատճառով Վենետիկի

[102] D. Zajc, Role of opposition in contemporary parliamentary democracies, Journal of comparative politics, volume 9, number 1, January 2016, էջ 20, կետ 2, պարբերություն 1 (մատչելի է հետևյալ հղումով՝ https://bit.ly/395yeLi):

[103] Ch. Friedberg, R. Y. Hazan, Comparative assessment of parliaments, Legislative Oversight, Center for international development, Rockfeller College University at Albany, july 2012, էջ 13-14, կետ «b» (մատչելի է հետևյալ հղումով՝ https://bit.ly/2sSGb5S):

[104] Resolution 1601 (2008) on Procedural guidelines on the rights and responsibilities of the opposition in a democratic parliament, կետ 2.2.4 (մատչելի է հետևյալ հղումով՝ https://bit.ly/3dAmq67)); European commission on democracy through law (Venice Commission), report on the Role of the opposition in a democratic parliament, adopted by the Venice Commission, on 15 November 2010, CDL-AD(2010)025, կետ 70 (մատչելի է հետևյալ հղումով՝ https://bit.ly/2sgsw8C):

[105] Նման մեխանիզմ է նախատեսված նաև ՀՀ Սահմանադրության 112-րդ հոդվածում:

[106] European commission on democracy through law (Venice Commission), Parameters on the relationship between the parliamentary majority and the opposition in a democracy: a checklist., Adopted by the Venice Commission at its 119th Plenary Session (Venice, 21-22 June 2019), CDL-AD(2019)015, կետ 127, (մատչելի է հետևյալ հղումով՝ https://bit.ly/35NMm9S), նաև Improving Democratic accountability globally, a handbook for legislators on congressional oversight in presidential systems, World Bank Institute, November 2013, էջ 12, Interpellations, կետ 3, (մատչելի է հետևյալ հղումով՝ https://bit.ly/396U8xC):

հանձնաժողովը խորհուրդ է տալիս տարբերակել կառավարությանը հարցերով դիմելու և հարցապնդումների ընթացակարգերը[107]: Հարցապնդումները տարբերվում են գրավոր և բանավոր հարցերից նաև առավել քննադատական և սովորաբար առավել ծավալուն բնույթով[108]:

2. ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ

2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 113-րդ հոդվածի 1-ին մասով կառավարության անդամներին հարցապնդումներով դիմելու իրավունքը Հայաստանի Հանրապետությունում վերապահված է միայն խմբակցություններին[109]: Հարցապնդումներով դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակի սահմանափակումը բխում է ինստիտուտն առավել արդյունավետ դարձնելու և չարաշահումների սահմանափակման կարիքներից, ինչպիսի մոտեցումը տեղ է գտել և՛ միջազգային փաստաթղթերում[110], և՛ տարբեր երկրների սահմանադրություններում[111]:

---

[107] CDL-INF(1996)006-e Venice Commission Opinion on the draft Constitution of Ukraine (text approved by the Constitutional Commission on 11 March 1996 (CDL(96)15)), էջ 11, հոդված 86:

[108] C. Ilie, Parliamentary Discourse, The International Encyclopedia of Language and Social Interaction, նշվ. աշխ., էջ 3:

[109] 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությունը հարցապնդում ներկայացնելու իրավունքը վերապահում էր նաև պատգամավորական խմբերին, սակայն 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, համամասնական ընտրական համակարգով պայմանավորված, չի նախատեսում նման խմբերի առկայություն: Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Երևան 2016, էջ 101:

[110] CDL-AD(2019)015, նույն տեղում, կետ 127:

[111] Այսպես, Լիտվայի Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորների ընդհանուր թվի 1/5-րդը կարող է հարցապնդում ուղղել նախարարներին կամ վարչապետին: Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետության Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ հարցապնդում կարող են ներկայացնել նվազագույնը 5 պատգամավոր: Նիդեռլանդների Թագավորության Ներկայացուցիչների Պալատի կանոնակարգի 133-րդ հոդվածի համաձայն՝ հարցապնդմանը ընթացք է տրվում, եթե դրան կողմ են առնվազն 30 պատգամավոր (CDL-AD(2019)015, նույն տեղում, կետ 127):

ԱԺ կանոնակարգը նախատեսում է հարցապնդումների իրավունքից օգտվելու նաև այլ սահմանափակումներ: Այսպես, թեև սահմանադրական նորմը նման սահմանափակման հիմք չի նախատեսում, սակայն ԱԺ կանոնակարգը սահմանում է, որ խմբակցությունը նույն հերթական նստաշրջանի ընթացքում Կառավարության անդամներին հարցապնդմամբ կարող է դիմել ոչ ավելի, քան մեկ անգամ[112] (ԱԺ կանոնակարգ, հոդված 121, մաս 2)[113]: Միաժամանակ սահմանվում է, որ հարցի քննարկման ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում, որևէ խմբակցություն չի կարող միևնույն հարցապնդմամբ Կառավարությանը կրկին դիմել կամ քննարկված հարցապնդման արդյունքով ներկայացնել վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ (ԱԺ կանոնակարգ, հոդված 121, մաս 14):

Խմբակցությունը Կառավարությանը գրավոր հարցապնդմամբ դիմելու իրավունքն իրականացնում է իր որոշմամբ (ԱԺ կանոնակարգ, հոդված 121, մաս 3): Խմբակցության կողմից կառավարության անդամներին հարցապնդումներով դիմելու ընթացակարգի մանրամասների սահմանումը ԱԺ կանոնակարգը վերապահում է խմբակցության կանոնադրությանը (ԱԺ կանոնակարգ, հոդված 9, մաս 2, կետ 10):

ԱԺ աշխատակարգի համաձայն խմբակցության գրավոր հարցապնդմանը կցվում է խմբակցության որոշումը, ինչպես նաև կարող են ներկայացվել դրան առնչվող տեղեկանքներ, եզրակացություններ, տեղեկատվական ու վերլուծական այլ նյութեր: Հարցապնդումը հանձնվում է Ազգային ժողովի աշխատակազմ, որը 24 ժամվա ընթացքում այն ուղարկում է Կառավարություն (կետ 76-77):

---

[112] Իտալիայի Պատգամավորների պալատի կանոնակարգի համաձայն մեկ նստաշրջանի ընթացքում միևնույն պատգամավորը կարող է առավելագույնը 2 հարցապնդում ներկայացնել (կանոն 137, մատչելի է հետևյալ հղումով՝ https://bit.ly/35Jobt5): Գերմանիայում հարցապնդումների քանակը սահմանափակված չէ, բայց որոշ իրավիճակներում կարող է սահմանափակվել դրանց քննարկումները (կանոն 103, մատչելի է հետևյալ հղումով՝ https://bit.ly/2ZaMJck):

[113] Նման կարգավորումը վիճելի է սահմանադրականության տեսանկյունից:

3. ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄՆԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼԸ ԵՎ ԴՐԱ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

ԱԺ կանոնակարգը նախատեսում է, որ հարցապնդումը ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում վարչապետի հանձնարարությամբ՝ Կառավարության համապատասխան անդամը հարցապնդման գրավոր պատասխանն ուղարկում է Ազգային ժողովի նախագահին (հոդված 121, մաս 4) [114]:

Ազգային ժողովի նիստում հարցապնդման պատասխանը ներկայացնում է կառավարության անդամը, որից հետո խմբակցության առաջարկությամբ այն կարող է քննարկվել (Սահմանադրություն, հոդված 113, մաս 2 և ԱԺ կանոնակարգ, հոդված 121, մաս 10, կետ 1):

Սահմանադրությանը 113-րդ հոդվածի 1-ին մասը հարցապնդումների ներկայացման համար նախատեսում է *միայն գրավոր* ձև: Սակայն, միջազգային պրակտիկայում հանդիպում են նաև բանավոր հարցապնդումներ: Այսպես, օրինակ, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի կանոնակարգում նախատեսվում են մեծ և փոքր հարցապնդումներ: Տարբերությունը նրանում է, որ փոքր հարցապնդումների պատասխանը տրվում է բացառապես գրավոր ընթացակարգով, մինչդեռ մեծ հարցապնդումները կարող են ուղեկցվել քննարկումներով [115]: Նշվածին հակառակ լեհական Սեյմում նախատեսված է հարցապնդումների բացառապես գրավոր ձևաչափ [116]:

Հարցապնդման պատասխանը ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, ԱԺ աշխատակազմն այն ուղարկում է Ազգային ժողովի նախագահին, նրա տեղակալներին, ինչպես նաև խմբակցություններ, մշտական հանձնաժողովներ և

[114] Նշենք, որ օրենսդրությամբ հարցապնդումներին պատասխանելու մանրամասներ սահմանված չեն:

[115] Բունդեսթագի կանոնակարգ, կետ 100-104, մատչելի է հետևյալ հղումով՝ https://bit.ly/2rkbENT):

[116] Սեյմի կանոնակարգ, (The Standing orders of the Sejm of the Republic of Poland) հոդված 193, մատչելի է հետևյալ հղումով՝ https://bit.ly/2Qa4bJS):

տեղադրում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (ԱԺ աշխատակարգ, կետ 77)։

Սահմանադրական նորմը նախատեսում է, որ հարցապնդման արդյունքում ստացված պատասխանը ներկայացվում է Ազգային ժողովի նիստում (հոդված 113, մաս 2)։ Ներկայացման իմաստը հարցապնդման պատասխանը հանրորեն հասանելի դարձնելն ու դրանք, անհրաժեշտության դեպքում՝ խորհրդարանական քննարկումների առարկա դարձնելն է։ Հարցապնդման պատասխանները քննարկման են դրվում միայն հարցապնդմամբ դիմած խմբակցության առաջարկությամբ։ Քննարկումը տեղի է ունենում գումարվող յուրաքանչյուր հերթական նիստերի չորեքշաբթի օրվա երրորդ հիմնական նիստում (ԱԺ կանոնակարգ, հոդված 121, մաս 6) [117]։ Յուրաքանչյուր շաբաթվա հերթական նիստերում կարող է ներկայացվել և քննարկվել մեկ հարցապնդման պատասխան (ԱԺ կանոնակարգ, հոդված 40, մաս 3, կետ 4, հոդված 121, մաս 6)։

Հերթական նիստերի գումարումից առնվազն մեկ շաբաթ առաջ ստացված հարցապնդման պատասխանը ներկայացվում է, ինչպես նաև կարող է խմբակցության առաջարկությամբ քննարկվել այդ նիստերի, իսկ նշված ժամկետից ուշ ստացվածները՝ հաջորդ հերթական նիստերի ընթացքում։ Խմբակցության առաջարկը կարող է Ազգային ժողովի նախագահին ներկայացվել մինչև հարցապնդումն Ազգային ժողովի նիստում ներկայացվելը (ԱԺ կանոնակարգ, հոդված 121, մաս 7)։

Եթե նույն շաբաթվա հերթական նիստերում լրանում է մեկից ավելի հարցապնդման պատասխանների ներկայացման ժամկետը, ապա ներկայացվում է այն հարցապնդման պատասխանը, որն ավելի շուտ է ուղարկվել Կառավարություն։ Եթե հարցապնդումներն ուղարկվել են նույն օրը, ապա դրանց պատասխանների ներկայացման հաջորդականու-

[117] Խմբակցության հարցապնդման պատասխանը քննարկելու մասին հարցը ներառվում է հերթական նստաշրջանի օրակարգում (ԱԺ կանոնակարգ, հոդված 38, մաս 2, կետ 10)։

թյունը որոշվում է ըստ խմբակցությունների անդամների թվի՝ փոքրից մեծ (ԱԺ կանոնակարգ, հոդված 121, մաս 8)։

Ազգային ժողովի նիստում մինչև հինգ րոպե տևողությամբ ելույթով հարցապնդման պատասխանը ներկայացնում է Կառավարության անդամը։ Եթե խմբակցությունը չի առաջարկել քննարկել հարցապնդումը, ապա Կառավարության անդամի ելույթից հետո հարցի քննարկումը համարվում է ավարտված (ԱԺ կանոնակարգ, հոդված 121, մաս 9)։

Հարցապնդման քննարկման տևողությունը 90 րոպե է։

Հարցապնդման պատասխանի քննարկման կարգը

1. հարցապնդման պատասխանը ներկայացնող Կառավարության անդամին կարող են հարցեր տրվել.
2. ելույթով հանդես է գալիս հարցապնդումը ներկայացնող խմբակցության ներկայացուցիչը, որին կարող են հարցեր տրվել.
3. մտքերի փոխանակություն.
4. եզրափակիչ ելույթով հանդես են գալիս հարցապնդման պատասխանը ներկայացնող Կառավարության անդամը, այնուհետև՝ խմբակցության ներկայացուցիչը։

ԱԺ կանոնակարգ, հոդված 121, մաս 10

4. ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հարցապնդումների ինստիտուտի կարևորագույն տարբերակիչ հատկանիշը դրա հետ կապվող իրավական հետևանքն է։ Սահմանադրության 113-րդ հոդվածի 2-րդ մասը,

այս առումով, նախատեսում է երկու իրավական հետևանքի հնարավորություն՝

- պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից կարող է ներկայացվել վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ.
- Ազգային ժողովը կարող է որոշում ընդունել՝ Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին:

ԱԺ կանոնակարգը նախատեսում է, որ վերը նշված առաջարկներից յուրաքանչյուրով կարող է հանդես գալ հարցապնդումը ներկայացնող խմբակցության ներկայացուցիչը՝ եզրափակիչ ելույթում:

Առաջին դեպքում, հարցապնդումը ներկայացնող խմբակցության ներկայացուցիչը հայտարարում է, որ խմբակցությունը նախատեսում է Սահմանադրության 113-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ վարչապետին անվստահություն հայտնելու մասին առաջարկ ներկայացնել: Այս պարագայում, հարցի քննարկման ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում, Ազգային ժողովի նախագահին պետք է ներկայացվի վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ՝ ԱԺ կանոնակարգի 152-րդ հոդվածի 1-4-րդ մասերին համապատասխան: Վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ կարող է ներկայացնել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը: Ընդ որում, հաշվի առնելով Սահմանադրությամբ նախատեսված կոնստրուկտիվ անվստահության ինստիտուտը (հոդված 115), որոշման նախագծով միաժամանակ առաջարկվում է նաև նոր վարչապետի թեկնածու: Վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը քննարկվում է վարչապետին անվստահություն հայտնելու համար ԱԺ կանոնակարգի 152-րդ հոդվածի 5-10-րդ մասերով

սահմանված ընդհանուր կարգով[118]: Հարկ է նաև նկատել, որ հարցապնդման քննարկման արդյունքներով վարչապետին անվստահություն հայտնելու գործընթաց նախաձեռնելու վրա տարածվում են Սահմանադրության 115-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումները, այն է՝ վարչապետին անվստահություն կարելի է հայտնել նրա նշանակումից ոչ շուտ, քան մեկ տարի հետո, և եթե վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը չի ընդունվում, ապա նման նախագիծ կարող է ներկայացվել ոչ շուտ, քան վեց ամիս հետո (տե՛ս նաև ԱԺ կանոնակարգ, հոդված 121, մաս 14):

Երկրորդ դեպքում, երբ Ազգային ժողովին առաջարկվում է որոշում ընդունել Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին, առաջարկը քվեարկության է դրվում առանց քննարկման: Ազգային ժողովի նախագահը Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը[119] վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին Ազգային ժողովի որոշումը ստորագրում և 24 ժամվա ընթացքում ուղարկում է վարչապետին (ԱԺ կանոնակարգ, հոդված 121, մաս 13):

Հարցապնդումները 7-րդ գումարման Ազգային ժողովում

- 2-րդ նստաշրջանի ընթացքում հարցապնդում է ներկայացրել «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը: Հարցապնդման նպատակն էր պարզել կառավարության կառուցվածքային փոփոխությունների

[118] Այս մասին առավել մանրամասն տե՛ս բաժին II, մաս 1՝ Վարչապետին անվստահություն հայտնելու ինստիտուտը:

[119] Այս մասին առավել մանրամասն տե՛ս ս բաժին II, մաս 2՝ Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցի բարձրացումը:

արդյունքում կադրային կրճատումների և արդյունքում գոյացած տնտեսումների ծավալը: Հարցապնդմանը պատասխանել է ֆինանսների նախարար Ատոմ Ջանջուղազյանը, որի ներկայացրած հիմնավորումները չեն բավարարել խմբակցությանը, և վերջինս որոշել է քվեարկության ներկայացնել նախարարի պաշտոնանկության հարցը բարձրացնելու վերաբերյալ որոշման նախագիծը: Նախագիծը չի ընդունվել:

- 3-րդ նստաշրջանի ընթացքում «Լուսավոր Հայաստանը» կրկին հարցապնդում է ներկայացրել: Այս անգամ հարցապնդման նպատակն է եղել պարզել հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական նորմերի նկատմամբ վերահսկողության ցածր մակարդակի պատճառը: Դժգոհ լինելով Ծրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանի պատասխանից՝ խմբակցությունը քվեարկության է ներկայացրել նախարարի պաշտոնանկության հարցը բարձրացնելու վերաբերյալ որոշման նախագիծը: Նախագիծը չի ընդունվել:

VIII

ՀՐԱՏԱՊ ԹԵՄԱՅՈՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

1. ՀՐԱՏԱՊ ԹԵՄԱՅՈՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Հրատապ թեմայով քննարկումների ինստիտուտը խորհրդարանական վերահսկողության մեկ այլ կարևոր գործիք է, ինչի պատճառով այն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 114-րդ հոդվածում: Այս ինստիտուտը առաջին անգամ է նախատեսվում սահմանադրական մակարդակով՝ 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրության մեջ[120]:

Հոդվածը սահմանում է, որ հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում պատգամավորների ընդհանուր թվի առնվազն *մեկ քառորդի*

[120] Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, նշվ. աշխ., էջ 316:

պահանջով կարող են անցկացվել հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրատապ թեմայով քննարկումներ: Հրատապ քննարկում նախաձեռնելու համար նախատեսված պատգամավորների թիվը փաստում է, որ հրատապ թեմաներով քննարկումները, առաջին հերթին, խորհրդարանական փոքրամասնության գործիք են:

Սահմանադրական նորմը նաև ընդգծում է, որ այս քննարկումները պետք է ծավալվեն *հասարակական հետաքրքրություն ներկայացնող* հարցերի շուրջ: Սակայն, բացի հասարակական հետաքրքրության պահանջից, նորմը հուշում է, որ քննարկման թեման պետք է լինի նաև *հրատապ*, այսինքն՝ խիստ կարևոր, անհետաձգելի [121]: Թեմայի հրատապությունը որոշելու հարցը թողնված է նախաձեռնող պատգամավորների հայեցողությանը: Սակայն հրատապ քննարկման թեմա ընտրելիս պատգամավորների ընտրությունը պետք է կանգ առնի իրապես անհետաձգելի հարցերի վրա, քանի որ թեմայի հրատապ լինելը սահմանադրական պահանջ է:

Հրատապ թեմայով քննարկումների կազմակերպումը նախատեսված է նաև ԱԺ կանոնակարգի 123-րդ հոդվածով: Քննարկումների վերջում զեկուցողը կարող է առաջարկել ընդունել Ազգային ժողովի ուղերձ կամ հայտարարություն, որոնք առավելապես քաղաքական գործիքներ են: ԱԺ կանոնակարգը Ազգային ժողովի հայտարարությունը կամ ուղերձը բնորոշում է որպես որոշակի հարցերի, իրադարձությունների և փաստերի վերաբերյալ Ազգային ժողովի քաղաքական դիրքորոշման արտահայտում (հոդված 98, մաս 1): Առանձնահատուկ է այն իրավիճակը, երբ հայտարարության կամ ուղերձի մեջ օրենսդիրը պարտավորություն է վերցնում իրականացնել այս կամ այն օրենսդրական փոփոխության կատարումը կամ որոշում է կայացվում ստեղծել քննիչ կամ ժամանակավոր հանձնաժողով:

Ազգային ժողովի հայտարարությունները և ուղերձներն ընդունվում են քվեարկությանը մասնակցող պատգամա-

[121] Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, հատոր 1, Էջ 906:

վորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին (Սահմանադրություն, հոդված 103, մաս 1)։

2. ՀՐԱՏԱՊ ԹԵՄԱՅՈՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հրատապ թեմայով քննարկումներ կազմակերպելու պահանջը ներկայացվում է գրավոր դիմումով (ԱԺ կանոնակարգ, հոդված 123, մաս 2)։

Դիմումում պետք է նշվի քննարկման թեման և պատգամավորների ներկայացուցչի անունը, ազգանունը։ Ներկայացուցիչը միաժամանակ հանդես է գալիս որպես հիմնական զեկուցող (ԱԺ կանոնակարգ, հոդված 123, մաս 5)։

Հարցի քննարկումը անցկացվում է հերթական նստաշրջանի ընթացքում՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում (ԱԺ կանոնակարգ, հոդված 123, մաս 1)։

Քննարկման ավարտին հիմնական զեկուցողը կարող է եզրափակիչ ելույթում առաջարկել ընդունել Ազգային ժողովի ուղերձ կամ հայտարարություն։ Եթե ուղերձ կամ հայտարարություն չի ընդունվում, կամ այդպիսի առաջարկ չի արվում, ապա հարցի քննարկումը համարվում է ավարտված (ԱԺ կանոնակարգ, հոդված 123, մաս 6)։

IX

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ [122]

1. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային ժողովում լսումները ժողովրդավարական և թափանցիկ քաղաքական գործընթացների պահանջ են: Խորհրդարանական լսումները հանրային նշանակություն ունեցող հարցերի քննարկման, տեղեկությունների հավաքման և տարածման մեխանիզմ են, որոնց խորհրդարանը մասնակից է դարձնում հասարակության լայն շերտերին: Սովորաբար դրանք այն հարցերն են, որոնցով հանրային կարծիքի,

[122] ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող՝ Հայաստանի Ազգային ժողովին աջակցման ծրագրի (ՀԱԺԱԾ) շրջանակներում 2015թ. արդեն իսկ մշակվել է Խորհրդարանական լսումների կազմակերպման ուղեցույց (https://bit.ly/2MN4CZb), ուստի այս թեմային անդրադարձ է կատարվում միայն 2015-ից հետո տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների տեսանկյունից:

տրամադրությունների վերհանումն ու հաշվի առնելը, ինչպես նաև մասնագիտական կարծիքի ստացումը կարող է նպաստել կոնկրետ ոլորտում քաղաքականության մշակմանը և ապահովել դրա հետագա իրագործումը:

Իրավաստեղծ գործընթացին և ոլորտային քաղաքականության մշակմանը հասարակության մասնակցության ապահովումը հնարավորություն է տալիս լուծել մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

- նպաստում է պետության և հասարակության միջև կառուցողական երկխոսությանը,
- թույլ է տալիս լսել համապատասխան ոլորտում գիտելիքներ և փորձ ունեցող շահագրգիռ կողմերի կարծիքներն ու առաջարկությունները, ինչպես նաև հաշվի առնել հնարավոր կարգավորման հասցեատերերի դիրքորոշումները՝ ապահովելով գործնականում կիրառելի և ամբողջական կարգավորում պարունակող իրավական ակտի գոյությունը,
- իրավական ակտի նախագծման փուլում վեր հանել և լուծում տալ հասարակական այն մտահոգություններին, որոնք հետագայում կարող են խոչընդոտել իրավական ակտի գործնական կիրառմանը՝ նպաստելով հետագա կենսագործման արդյունավետությանը և դյորիությանը,
- հասարակությանը իրազեկել ոլորտում նախատեսվող քաղաքականության մասին, պարզաբանել առաջարկվող կարգավորումների բնույթը՝ դրանով երաշխավորելով իրավական կարգավորման կանխատեսելիությունը[123]:

[123] Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներ, ՀՀ կառավարության 2012թ. ապրիլի 5-ի նիստի N 13 արձանագրային որոշման հավելված, կետ 383-384 (գրքային տարբերակը մատչելի է հետևյալ հղումով՝ http://lawlibrary.info/ar/books/26.pdf):

Հասարակության մասնակցությունը ապահովող մյուս գործիքը հանրագրերն[124] են, որոնց պարագայում, ի տարբերություն լսումների, նախաձեռնող կողմը հանրությունն է:

Լսումների անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագծի քննարկմամբ, ինչպես նաև օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը բացահայտելու կարիքներով (*օրենսդրական լսումներ*):

Լսումները կիրառվում են նաև գործադիրի նկատմամբ վերահսկողության, նրա աշխատանքի դիտարկման և գնահատման նպատակով (*վերահսկողական լսումներ*):

Լսումներ կարող են կազմակերպվել նաև հանրային նշանակություն ունեցող որոշակի հանգամանքների ուսումնասիրության համար (*փաստահավաք լսումներ*), որոնց արդյունքները կարող են հադես գալ նաև որպես գործադիրի աշխատանքը գնահատելու միջոց և առաջացնել համապատասխան հետևանքներ[125]:

2. ԼՍՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Ազգային ժողովում լսումների կազմակերպումը կարգավորվում է ԱԺ կանոնակարգով, ինչպես նաև դրա հիման վրա՝ ԱԺ աշխատակարգով:

Հարկ է նկատել, որ խորհրդարանական կառավարման ձևին համահունչ 2016թ. ընդունված ԱԺ կանոնակարգը զգալիորեն ընդլայնել է խորհրդարանական լսումներ հրավիրելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը[126]:

---

[124] Այս մասին առավել մանրամասն տե՛ս բաժին X՝ Հանրագրերը՝ որպես խորհրդարանական վերահսկողության գործիք:

[125] Խորհրդարանական լսումների կազմակերպման ուղեցույց, Երևան, 2015, էջ 6-7 (https://bit.ly/2MN4CZb):

[126] 2002 թ. փետրվարի 20-ին ընդունված «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքը (ՀՀՊՏ 2002.04.12/12(187), հոդ.230, ՀՕ-308) այս իրավունքը վերապահում էր միայն հանձնաժողովներին (հոդված 32, մաս 1):

Խորհրդարանական լսում կարող են հրավիրել՝

- Ազգային ժողովի նախագահը [127],
- մշտական հանձնաժողովները [128],
- ժամանակավոր հանձնաժողովները,
- առանձին օրենքի նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովները՝ իրենց վերապահված ոլորտներին վերաբերող հարցերով,
- խմբակցությունը՝ իր կամ խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորի առաջադրած նախագծին վերաբերող հարցով (ԱԺ կանոնակարգ, հոդված 125, մաս 1) [129]:

Խմբակցության կողմից հրավիրվող լսումների պարագայում առկա է քանակական սահմանափակում. յուրաքանչյուր հերթական նստաշրջանի ընթացքում կարող է հրավիրել միայն մեկ լսում (ԱԺ կանոնակարգ, հոդված 125, մաս 3) [130]:

---

[127] Օրինակ՝ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի նախաձեռնությամբ հրավիրված «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2019 թվականի գործունեության հաշվետվությունը» խորագրով խորհրդարանական լսումները (https://bit.ly/37AAycK):

[128] Օրինակ՝ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ անցկացված խորհրդարանական լսումները՝ «Բարձրագույն կրթության և գիտության ոլորտների օրենսդրական բարեփոխումներն ու հիմնախնդիրները» թեմայով (https://bit.ly/3eh1KQA): Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ անցկացված խորհրդարանական լսումները՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ (https://bit.ly/3fJO8O7):

[129] Օրինակ՝ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության հրավիրած լսումները՝ «Ճանապարհային երթևեկության արդի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» թեմայով (https://bit.ly/37K5xDu):

[130] «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավորի կողմից Ազգային ժողով էր ներկայացվել «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (ՊՀ-497-04.03.2020-ՊԻ-011/0, https://bit.ly/30PxacP, որով նախատեսվում էր ընդլայնել խմբակցության կողմից հրավիրվող լսումների թիվը՝ յուրաքանչյուր հերթական նստաշրջանի ընթացքում նախատեսելով երեք լսում հրավիրելու իրավունք: Նախագիծը, սակայն քվեարկության արդյունքներով չի ընդգրկվել ԱԺ յոթերորդ գումարման չորրորդ նստաշրջանի օրակարգում (Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի յոթերորդ գումարման չորրորդ նստաշրջանի 2020թ. մայիսի 05-12-ի հերթական նիստերի արձանագրություն, հարց 4, https://bit.ly/2Y74iuS):

Խորհրդարանական փոքրամասնության իրավունքների տեսանկյունից կարևոր է նաև, որ լսումները հրավիրվում են նախաձեռնող սուբյեկտի որոշմամբ, և լսումներն արտոնելու այլ լրացուցիչ պահանջ նախատեսված չէ (ԱԺ կանոնակարգ, հոդված 125, մաս 2)։

Լսումները հրավիրելու վերաբերյալ որոշմամբ սահմանվում են նաև լսումների օրը, ժամը, անցկացման վայրը և ընթացակարգը (ԱԺ աշխատակարգ, կետ 87)։ Լսումների անցկացման օրը չպետք է համընկնի Ազգային ժողովի նիստի օրվա հետ։

Լսումների հրավիրման մասին հանձնաժողովի, ինչպես նաև խմբակցության որոշումն իրազեկման կարգով ուղարկվում է Ազգային ժողովի նախագահին։

Խորհրդարանական լսումներին մասնակցելը ԱԺ կանոնակարգը պատգամավորի համար նախատեսում է ինչպես որպես իրավունք (ԱԺ կանոնակարգ, հոդված 3, մաս 1, կետ 3), այնպես էլ պարտականություն՝ այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է այն հանձնաժողովի հրավիրած խորհրդարանական լսումներին, որի անդամ է համապատասխան պատգամավորը (ԱԺ կանոնակարգ, հոդված 4, մաս 1, կետ 3)։ Դրանից ելնելով էլ, ԱԺ աշխատակարգը սահմանում է Աշխատակազմի կողմից խորհրդարանական լսումներից պատգամավորի բացակայությունների հաշվառման կարգ։ Իսկ յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում, հանձնաժողովի նախագահն Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում այդ ամսվա ընթացքում խորհրդարանական լսումներից հանձնաժողովի անդամների բացակայության մասին տեղեկանք, որը հրապարակվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (ԱԺ աշխատակարգ, կետ 104 և 105)։

ԱԺ կանոնակարգը զգալի տեղ է հատկացնում լսումների վերաբերյալ հանրային իրազեկվածության և թափանցիկության հարցերին։ Լսումների հրավիրման մասին որոշումը տեղադրվում է նաև Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ լսումների վերաբերյալ տեղեկատվու-

թյունը լսումների անցկացման օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ տրամադրվում է զանգվածային լրատվության միջոցներին (ԱԺ աշխատակարգ, կետ 88)։

Լսումներ նախաձեռնած սուբյեկտը կարող է նախապատրաստել իր հրավիրած լսումների թեմայի վերաբերյալ ներկայացված գրավոր ելույթներ, առաջարկներ, եզրակացություններ, տեղեկանքներ, ինչպես նաև լսումների արդյունքներն ամփոփող այլ նյութեր, որոնք կարող են հրապարակվել հանձնաժողովի կամ խմբակցության առաջարկությամբ՝ Ազգային ժողովի նախագահի համաձայնությամբ (ԱԺ աշխատակարգ, կետ 90) [131]։

Հանրային իրազեկվածության և թափանցիկության ապահովման համար սահմանված է, որ խորհրդարանական լսումներն առցանց հեռարձակվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (ԱԺ կանոնակարգ, հոդված 165, մաս 2)։

Լսումների արդյունքում կազմվում է արձանագրություն, որը հաստատվում է լսումները հրավիրած մարմնի որոշմամբ և տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (ԱԺ կանոնակարգ, հոդված 125, մաս 5)։

[131] Ազգային ժողովի նախագահի համաձայնությունը ստանալու վերաբերյալ կարգավորում առկա էր 2002 թ. ԱԺ կանոնակարգում (հոդված 32, մաս 6), որտեղից ըստ երևույթի փոխանցվել է ԱԺ աշխատակարգ։

X

ՀԱՆՐԱԳՐԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ

1. ՀԱՆՐԱԳՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Հանրագրերի ինստիտուտի սահմանադրական հիմքերը նախատեսված են 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 53-րդ հոդվածով, որը սահմանում է անհատապես կամ այլոց հետ համատեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը։

«Հանրագրերի մասին» օրենքի[132] 1-ին հոդվածով հանրագիրը բնորոշվում է որպես՝

[132] Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2017թ. դեկտեմբերի 21-ին, ՀՀՊՏ 2018/4 (1362), հոդ. 33, ՀՕ-15-Ն։

1. հանրային նշանակություն ունեցող հարցերով ներկայացվող գրություն, կամ
2. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության թերությունների մասին հաղորդում, կամ
3. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության բարելավման, տնտեսական, քաղաքական, սոցիալական և հասարակական կյանքի այլ ոլորտներին վերաբերող հարցերի կարգավորման կամ գործող իրավակարգավորումների կատարելագործման վերաբերյալ առաջարկություն:

«Հանրագիր» հասկացության համար բազմաթիվ լեզուներում օգտագործվում է լատինական ծագում ունեցող «պետիցիա» (petitio) բառը, որը նշանակում է մի բան, որին ձգտում, որը ցանկանում ես [133]:

Դասական իմաստով հանրագրերի ինստիտուտը կայացել է Մեծ Բրիտանիայում, որը առաջին պետությունն էր, որտեղ օրենսդրական մակարդակով ամրագրվեց քաղաքացիների՝ պետական կառավարման մարմիններին հանրագրեր ուղղելու իրավունքը [134]:

Ժամանակակից ժողովրդավարական երկրներում հանրագրերի ինստիտուտին տրվում է մեծ կարևորություն: Օրինակ, Գերմանիայի պառլամենտում հանրագրերի հանձնաժողովի ստեղծումը սահմանադրական պահանջ է [135]: Համարվում է, որ հանձնաժողովը իրականացնում է խորհրդարանի «սեյսմաչափի» գործառույթ, որի միջոցով խորհրդարանը տեղեկանում

[133] pĕto, īvi (ii), ītum, ĕre 2. Ձգտել-հասնել, ձեռք բերել: 3. Խնդրանքով դիմել, խնդրել: 4. Հայց ներկայացնել, բողոքել (Ն. Մկրտչյան, Ա. Հայրապետյան, Լատիներենի ձեռնարկ, Երևան, 2016, էջ 238):

[134] В.Ф. Нестерович, Британская модель конституционно-правового регулирования права петиций, Философия права, 2013. № 4, էջ 12, պարբերություն 2, https://bit.ly/2MlCfB8:

[135] Գերմանիային Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքի հոդված 45c, https://bit.ly/2zVrnYh:

է պետական քաղաքականության մեջ առկա սխալների վերաբերյալ և նախաձեռնում է դրանց շտկումը [136]:

Հանրագրի ձևաչափը առանձին երկրներում կիրառվում է նաև այլ դեպքերում: Օրինակ, Մեծ Բրիտանիայում հանրագրերը օգտագործվում են մասնավոր անձանց կողմից օրենսդրական նախաձեռնություններ բերելու և օրենքի նախագծի ընդունմանը նպաստելու համար [137]: Հանրագրերը նաև օրենքների կենսագործման, դրանց արդյունավետության ստուգման մեխանիզմ են՝ թույլ տալով վեր հանել գործնականում առաջացող խնդիրները:

Արդյունքում, հանրագրերը լուծում են ժողովրդավարական գործընթացներում հանրության ներգրավման խնդիրը [138]: Հանրագրերի միջոցով կապ է ստեղծվում քաղաքացու և օրենսդիրի միջև: Օգտագործելով հանրագրերի ինստիտուտը՝ քաղաքացին կարող է կապի մեջ մտնել իշխանության հետ՝ խուսափելով բյուրոկրատական քաշքշուկներից և լսելի դարձնել իր խնդիրը: Հանրագրերի ինստիտուտի կիրառման արդյունքում կարող է շտկվել նաև կոնկրետ հարցի վերաբերյալ տարվող քաղաքականությունը [139]:

2. ՀԱՆՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՁԵՎԱՉԱՓԸ

Հանրագրեր ներկայացնելու իրավունքը Սահմանադրությամբ վերապահված է յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ իրավաբանական անձանց:

---

[136] G. Mayntz, Stichwort Petitionen Von der Bitte zum Bürgerrecht, Deutcher Bundestag, Februar 2019, https://www.btg-bestellservice.de/pdf/20201500.pdf, էջ 34:

[137] Նման նախագծերը կոչվում են «Private bills»: Нестерович В.Ф., Британская модель конституционно-правового регулирования права петиций, նշվ. աշխ., էջ 14:

[138] R. Hough, "Do legislative petition systems enhance the relationship between parliament and citizen?" The Journal of Legislative Studies, Volume 18, 2012, էջ 479:

[139] Նույն տեղում, էջ 483:

Հանրագիրը կարող է ներկայացվել ինչպես մեկ անձի կողմից (*անհատական հանրագիր*), այնպես էլ՝ երկու և ավելի անձանց կողմից համատեղ (*կոլեկտիվ հանրագիր*) [140]:

Հանրագրերի ներկայացման համար օրենքը նախատեսում է գրավոր ձև՝ թղթային (առձեռն կամ փոստով) կամ էլեկտրոնային եղանակով:

Որպես կանոն, հանրագիրը ներկայացվում է հայերեն լեզվով («Հանրագրերի մասին» օրենք, հոդված 5, մաս 3 և 4):

Հանրագրերը կարող են ներկայացվել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով:

Հանրագիր ներկայացնելու իրավունքի իրականացման տեսանկյունից կարևոր է, որ այս իրավունքից օգտվելը պայմանավորված չլինի բարդ ընթացակարգերով և ծանրաբեռնող ձևական պահանջներով: Այս առումով, «Հանրագրերի մասին» օրենքը, բացի հանրագիրը ներկայացնող անձի նույնականացմանը վերաբերող տվյալներից, այլ առանձնահատուկ պահանջներ չի առաջադրում հանրագրի բովանդակությանը (հոդված 6): Հանրագիրը կարող է բովանդակել նաև հանրագիր ներկայացնող անձի առաջարկը, ինչպես նաև հիմնավորումը՝ ցանկության դեպքում (հոդված 6, մաս 1, կետ 7): Հանրագրին կարող են կցվել ներկայացված առաջարկը հիմնավորող փաստաթղթեր և այլ նյութեր (հոդված 6, մաս 5):

Հանրագիր ներկայացնելու օրենքով նախատեսված միակ սահմանափակումը վերաբերում է հանրագրով այնպիսի պահանջ ներկայացնելու արգելքին, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության դեմ կամ սահմանադրական կարգի բռնի տապալմանը կամ տարածքային ամբողջականության բռնի փոփոխությանը կամ ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելուն կամ այլ խտրական վերաբերմունք հարուցելուն, բռնություն կամ պատերազմ քարոզելուն, այլ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների խախտմանը կամ մարդու արժանապատվության նսեմացմանը (հոդված 2):

[140] «Հանրագրերի մասին» օրենք, հոդված 1, մաս 1, կետ 2 և 3:

3. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՀԱՆՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հանրագրերի մասին» օրենքը Ազգային ժողովին ուղղված հանրագրերի քննարկման ընթացակարգերի կարգավորումը թողնում է ԱԺ կանոնակարգին (հոդված 13)։ ԱԺ կանոնակարգը առանձնահատուկ մանրամասներ չի նախատեսում հանրագրերի քննարկման ընթացակարգի առումով և դրան է նվիրում միայն մեկ հոդված (հոդված 123.1)։

Ազգային ժողովին հանրագիր կարող է ներկայացվել միայն վերջինիս իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ (ԱԺ կանոնակարգ, հոդված 123.1, մաս 1)։ Հանրագիրը ներկայացվում է Ազգային ժողովի նախագահին ուղղված գրությամբ [141]։

3.1. Ազգային ժողովին ներկայացված հանրագրի քննարկման ընթացակարգը

ԱԺ կանոնակարգը հանրագրերի քննարկման իրավասությունը վերապահում է բոլոր մշտական հանձնաժողովներին։

Մշտական հանձնաժողովում հանրագրերի քննարկման ընթացակարգը

- Ազգային ժողովի նախագահը ստացված հանրագիրն ուղարկում է իրավասու մշտական հանձնաժողով կամ հանձնաժողովներ, եթե հանրագրում բարձրացված հարցը վերաբերում է մի քանի մշտական հանձնաժողովի իրավասությանը։

[141] Հանրագրերի ներկայացման ընթացակարգը՝ նաև բաժին XIV՝ Գծապատկեր 3-ում։

- Մշտական հանձնաժողովի նախագահը հանրագիրն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, հանրագիրն ուղարկում է հանձնաժողովի անդամներին:
- Հանրագրին պատասխանի նախագիծ կարող են ներկայացնել հանձնաժողովի բոլոր անդամները՝ հանրագիրն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում:
- Եթե սահմանված ժամկետում հանրագրի պատասխանի նախագիծ չի ներկայացվում, ապա հանրագրի պատասխանի նախագիծը մեկ շաբաթվա ընթացքում մշակում և հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում հանձնաժողովի նախագահը (հոդված 123,1, մաս 4):
- Հանրագրի պատասխանի նախագիծը քննարկման է դրվում հանձնաժողովի նիստում՝ ընդհանուր կարգով: Եթե ներկայացվել են մեկից ավելի նախագծեր, ապա դրանք քննարկվում են Կանոնակարգի 112-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան:

ԱԺ կանոնակարգ, հոդված 123.1, մաս 4 և 5

Հանրագրերի ուսումնասիրության և դրանց պատասխանների մշակման համար ԱԺ կանոնակարգով նախատեսված ընթացակարգը դժվար է արդյունավետ համարել, քանի որ առկա կարգավորումները չեն նպաստում հանձնաժողովում հանրագրի ուսումնասիրության և պատասխանի ձևավորման կոլեկտիվ գործողություններին: Արդյունքում հանրագրի պատասխան ներկայացնելու ողջ պատասխանատվությունը դրվում է հանձնաժողովի նախագահի վրա և պարզ չէ, թե ինչպե՞ս է վերջինս իրագործելու այդ խնդիրը:

Հարկ է նկատել, որ շատ երկրներում հանրագրերի քննարկումը վերապահված է հատուկ դրա համար ստեղծված

հանձնաժողովներին, որի շնորհիվ հնարավոր է լինում առավել արդյունավետ օգտագործել օրենսդիրի ժամանակը[142]: Հանրագրեր քննող հանձնաժողովներ կան, օրինակ, Մեծ Բրիտանիայում[143], Ավստրալիայում[144], Նիդեռլանդներում[145], Սինգապուրում[146], Գերմանիայում[147], Իսրայելում[148]:

3.2. Հանրագրին պատասխան ներկայացնելու ժամկետն ու կարգը

«Հանրագրերի մասին» օրենքը սահմանում է, որ հանրագրին պատասխան է ներկայացվում հանրագիրը ստանալուց հետո՝ *մեկ ամսվա ընթացքում* (հոդված 10, մաս 1)։ Այս ժամկետը կարող է երկարաձգվել մինչև մեկ ամսով՝ այդ մասին ծանուցելով հանրագիրը ներկայացրած անձին ժամկետի ավարտից առնվազն երեք աշխատանքային օր առաջ։ Օրենքը հանրագրին պատասխան ներկայացնելու ժամկետի երկարաձգումը կապում է լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտության կամ նույն հարցի վերաբերյալ մեկից ավելի հանրագրերի առկայության հետ (հոդված 10, մաս 3)։ Առանձին դեպքերում, երբ հանրագրում նշված հարցի քննարկման համար ձևավորվել է առանձին հանձնաժողով կամ այլ աշխատանքային խումբ, ապա հանրագիրը քննարկվում է, և հանրագրին պատասխան է ներկայացվում հանձնաժողովի կամ այդ խմբի գործունեության ժամկետում, սակայն ոչ ավելի, քան *վեց ամսում*։

---

142 R. Hough, "Do legislative petition systems enhance the relationship between parliament and citizen?" Նշվ. աշխ., էջ 489:

143 https://committees.parliament.uk/committee/326/petitions-committee/

144 https://www.aph.gov.au/Parliamentary_Business/Committees/House/Petitions

145 https://www.houseofrepresentatives.nl/members_of_parliament/committees/verz

146 https://www.parliament.gov.sg/about-us/structure/select-committees/public-petitions-committee

147 https://www.bundestag.de/en/committees/a02

148 https://knesset.gov.il/committees/eng/committee_eng.asp?c_id=19

Իրավասու մշտական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի որոշմամբ հաստատված հանրագրի պատասխանը, իսկ պատասխանի վերաբերյալ որոշում չկայացվելու դեպքում՝ համապատասխան գրությունը, երկու աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է ԱԺ աշխատակազմ, որն այն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ուղարկում է անհատական հանրագիրը ներկայացրած անձին կամ կոլեկտիվ հանրագրում որպես պատասխանատու նշված անձին:

Եթե հանրագրի պատասխանի վերաբերյալ հանձնաժողովը որոշում չի կայացնում, ապա հարցի քննարկումը համարվում է ավարտված (ԱԺ կանոնակարգ, հոդված 123.1, մաս 5):

Պետք է արձանագրել, որ հանրագիր ներկայացնողը չունի սուբյեկտիվ-հանրային իրավունք, որ իր կողմից հասցեագրված հանրային մարմինը (տվյալ դեպքում՝ Ազգային ժողովը) հանրագրով բարձրացված իր հարցին լուծում տա: Հանրագրեր ներկայացնելու իրավունքը տալիս է միայն իրավունք՝ պահանջելու, որ հանրային իշխանության մարմինը հանրագիրը կամայականորեն հետ չվերադարձնի, այլ այն վարույթ ընդունի, լրջորեն ստուգի քաղաքացու հարցը, հանրագիր ներկայացնողին պատշաճ ժամկետում տեղեկացնի հանրագիրը վարույթ ընդունելու և ստուգման արդյունքի մասին: Ըստ այդմ՝ Սահմանադրության 53-րդ հոդվածը ամրագրում է միայն *պատշաճ պատասխանի* իրավունքը: Ավելի հեռուն գնացող, լայն իրավունք հանրագիր ներկայացնողը չունի: Ընդ որում, ի տարբերություն «Հանրագրերի մասին» օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված բողոքարկման իրավունքի[149], ԱԺ կանոնակարգի 123.1-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ «հանրագրերի վերաբերյալ Ազգային ժողովի նախագահի, մշտական հանձնաժողովների, ինչպես նաև հանրագիրը

[149] «Հանրագրերի մասին» օրենքի 15-րդ հոդվածը նախատեսում է, որ «հանրագիրը վերադարձնելու կամ հանրագրի քննարկումը մերժելու մասին որոշումները, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմնի ու պաշտոնատար անձի գործողությունը (անգործությունը) ենթակա են բողոքարկման վարչական կամ դատական կարգով»:

վերադարձնելու, հանրագրի քննարկումը մերժելու վերաբերյալ Աշխատակազմի որոշումները կամ այլ գործողությունները (անգործությունը) *բողոքարկման ենթակա չեն*»:

Սակայն, հանրագրերի քննարկման ոչ թափանցիկ և անարդյունավետ ընթացակարգերը, պատասխանների ոչ պատշաճ որակը կարող է ունենալ քաղաքական հետևանքներ և ազդել Ազգային ժողովի նկատմամբ հանրային վստահության վրա:

Հանրագրերի ինստիտուտի կայացման, դրանց վերաբերյալ հանրային իրազեկման և բաց կառավարման տեսանկյունից կարևոր է նաև օրենսդրական այն կարգավորումը, որ մշտական հանձնաժողով ուղարկված հանրագիրը Ազգային ժողովի աշխատակազմը գրանցում է և տեղադրում Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: Հանրագրի պատասխանը նույնպես տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (ԱԺ կանոնակարգ, հոդված 123.1, մաս 3 և 6) [150]:

4. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՆՐԱԳՐԵՐ

Հանրագրերի ինստիտուտի վրա ազդեցություն է թողել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը: Ազդեցությունը, նախ և առաջ, արտահայտվում է նրանում, որ զանազան թվային հարթակները հնարավորություն են ստեղծել քաղաքացիների համար առավել արդյունավետ պաշտպանել իրենց տեսակետները այս կամ այն հարցի վերաբերյալ [151]:

Տեխնոլոգիական զարգացման արդյունքում քաղաքացիների շահերի պաշտպանության նոր եղանակներից են

[150] Սակայն Ազգային ժողովի կայքի ուսումնասիրության արդյունքում հանրագրերի օրինակներ չեն հայտնաբերվել:

[151] S. Ranchordás, "Digital agoras: democratic legitimacy, online participation and the case of Uber-petitions", The Theory and Practice of Legislation, Volume 5, Number 1, 2017, էջ 32, պարբերություն 1:

դարձել էլեկտրոնային հանրագրերը (e-petitions)։ Էլեկտրոնային հանրագրերը առցանց տիրույթում հրապարակվող հանրագրեր են[152]։ Նման հարթակներ գոյություն ունեն Մեծ Բրիտանիայում[153], Գերմանիայում[154], Ֆրանսիայում[155] և այլն։

«Հանրագրերի մասին» օրենքը նույնպես նախատեսում է *հրապարակային հանրագիր* հասկացությունը, որը սահմանվում է որպես էլեկտրոնային միասնական հարթակում սահմանված ձևով ներկայացվող հանրագիր (հոդված 1, մաս 1, կետ 6)։

Հրապարակային հանրագրերի ներկայացման համար ստեղծվել է «Հանրագրերի միասնական հարթակը»[156]։ Հրապարակային հանրագիրը ներկայացվում է էլեկտրոնային միասնական հարթակում սահմանված ձևաթուղթը լրացնելու միջոցով։ Ձևաթուղթը հաստատվել է ՀՀ կառավարության «Հրապարակային հանրագրեր ներկայացնելու ձևաթուղթը հաստատելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի N 1218-Ն որոշմամբ[157]։

Հրապարակային հանրագիրը մերժելու հիմքերի բացակայության դեպքում իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը հնգօրյա ժամկետում հանրագիրը հրապարակում է էլեկտրոնային միասնական հարթակում։ Հրապարակային հանրագրի գլխավոր նախաձեռնողը գրավոր ծանուցվում է հանրագրի հրապարակման, հանրագրի քննարկումը մերժելու որոշման մասին։ Անձինք հրապարակային հանրագրին կարող են միանալ հանրագիրը էլեկտրոնային միասնական հարթակում հրապարակվելուց հետո՝ 30-օրյա ժամկետում («Հանրագրերի մասին» օրենք, հոդված 12)։

---

[152] https://www.yourdictionary.com/e-petition

[153] Մեծ Բրիտանիայի կառավարությանը և խորհրդարանին ուղղված հանրագրերի միասնական կայք՝ https://petition.parliament.uk/

[154] https://www.bundestag.de/ausschuesse/a02

[155] https://petitions.senat.fr/

[156] https://հանրագիր!հայ (https://xn--y9aag6av1b8dd.xn--y9a3aq/am/)։

[157] Ընդունվել է ՀՀ կառավարության կողմից 2018թ. նոյեմբերի 1-ին, ՀՀՊՏ 2018.11.14/84(1442), հոդ.1163, N 1218-Ն։

Հրապարակային հանրագրի պատասխանը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը հրապարակում է էլեկտրոնային միասնական հարթակում («Հանրագրերի մասին» օրենք, հոդված 16, մաս 3)։

«Հանրագրերի մասին» օրենքը հրապարակային հանրագրերից տարբերում է *էլեկտրոնային եղանակով ներկայացվող հանրագրերը*, որոնք սահմանում է որպես «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան ներկայացված հանրագիր։ «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի[158] 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ էլեկտրոնային են համարվում այն հանրագրերը, որոնք ոչ թղթային են, վավերացված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ստեղծվում, մշակվում և պահպանվում են տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ։

Հայաստանում Էլեկտրոնային և հրապարկային հանրագրերի ներկայացման մշակույթի զարգացումը կարող է բերել քաղաքական գործընթացներում հանրության ներգրավվածության աճին[159] ։ Հայաստանում հանրագրերի սահմանափակ կիրառելիությունը կարող է պայմանավորված լինել տեղեկատվության պակասով։ Հետևաբար՝ քաղաքացիների իրազեկվածության բարձրացման աշխատանք կատարելու դեպքում հանրագրերը կարող են դառնալ լայնորեն կիրառելի գործիք[160]։

---

[158] Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2004 թ. դեկտեմբերի 14-ին, ՀՀՊՏ 2005.01.26/7(379), հոդ.114, ՀՕ-40-Ն։

[159] «Հանրագրերի միասնական հարթակի» ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2019 թվականի հուլիսից մինչև 2020 թվականի հունիսը ընկած ամբողջ ժամանակաշրջանում Ազգային ժողով չի ներկայացվել ոչ մի հանրագիր։ Առավել վաղ շրջանի տվյալներ հասանելի չեն։

[160] Օրինակ, Մեծ Բրիտանիայում իրենց կարծիքը արտահայտելու համար քաղաքացիները առավելապես հակված են ստորագրելու հանրագրեր՝ քաղաքական ներգրավվածության այլ ձևերի համեմատ։ An audit of political engagement 4, Research report, Hansard Society, March 2007, էջ 48, մատչելի է հետևյալ հղումով՝ https://bit.ly/2MAdnWu։ 2018 թվականի տվյալների համաձայն՝ հանրագիրը մնում է հանրության շրջանում բավականաչափ տարածված գործիք՝ https://bit.ly/2XIwpQK, էջ 52, 53։

XI

ՕՐԵՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ [161]

1. Ի՞ՆՉ Է ՕՐԵՆՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ընդունված օրենքների արդյունավետության գնահատումը օրենսդիրի օրինաստեղծ գործունեությունը կատարելագործելու կարևոր նախապայման է: ԱԺ կանոնակարգի 122-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ մշտական հանձնաժողովները խորհրդարանական վերահսկողություն են իրականացնում օրենքների կատարման ընթացքի նկատմամբ: ԱԺ կանոնակարգը արդյունավետության գնահատման

[161] Օրենքների կատարման վերահսկողությունը, թերևս, ոչ այնքան խորհրդարանական վերահսկողության բաղադրատարր է, որքան բխում է խորհրդարանի օրենսդրական գործառույթից: Ուստի, այս մասում օրենքների հետագա վերահսկողության խնդիրները կներկայացվեն միայն ընդհանուր գծերով:

կառուցակարգի հետ կապված այլ մանրամասներ չի սահմանում[162]:

Արդյունավետության գնահատման նպատակն է պարզել, թե արդյո՞ք ընդունված օրենքները հասնում են իրենց առջև դրված նպատակին և եթե այո, ապա, որքա՞ն արդյունավետ են դրանք[163]: Գործնականում օրենսդիրը կարող է ձեռնամուխ լինել արդյունավետության գնահատմանը տարբեր պատճառներով, մասնավորապես՝

- իրավակիրառ պրակտիկայի արդյունքում կարող է պարզ դառնալ, որ իրավական ակտը գործնականում չի կիրառվում կամ չի տալիս ցանկալի արդյունքները,
- հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց՝ նախկինում ընդունված ակտերը կարող են կորցնել իրենց արդիականությունը և առաջացնել վերանայման անհրաժեշտություն[164],
- ավելորդ կարգավորումների վերացման համար[165]:

Ընդ որում, կարգավորման արդյունավետության գնահատման արդյունքները կարող են օգտագործվել ինչպես օրենքներում փոփոխությունների նախագիծ կազմելու, այնպես էլ՝ պատգամավորների կողմից գրավոր և բանավոր հարցերի, հարցապնդումների որակի բարձրացման համար[166]:

Արդյունավետության գնահատումը պահանջում է, որ ընտրվի դրա իրականացման պատշաճ ձևաչափ և մոնիտորին-

[162] Միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նմանօրինակ հարցերի կարգավորումը շատ հաճախ տեղի է ունենում օրենսդրական ակտերի մշակմանը և դրանց որակի բարձրացմանը նվիրված տարատեսակ ուղեցույցների մակարդակում:

[163] F. de Vrieze, Post-Legislative Scrutiny, Guide for parliaments, Westminster foundation for democracy, November 2017, էջ 7:

[164] Better regulation practices across the European union, OECD, 2019, էջ 97, https://bit.ly/2UreI63:

[165] K. van Aeken, From Vision To Reality: Ex Post Evaluation of Legislation, Legisprudence, Volume 1, Issue 1, 2011, էջ 45, Need for Evaluation: Contemporary Law Making.

[166] F. de Vrieze, Principles of Post-Legislative Scrutiny for parliaments, Westminster foundation for democracy, January 2018, էջ 11:

գային գործիքակազմ, որն իր մեջ ներառում է օրենքների կատարման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ստացման, պահման և վերլուծության հնարավորություններ [167]:

Այս առումով, ԱԺ կանոնակարգի 122-րդ հոդվածի 4-րդ մասը հնարավորություն է տալիս խորհրդարանական վերահսկողության առարկային վերաբերող հարցերի պարզաբանման առնչությամբ մշտական հանձնաժողով հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց: Հանձնաժողովը իրավասու է նաև հարցումներով դիմելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց (ԱԺ կանոնակարգ, հոդված 12, մաս 1, կետ 4):

Վերահսկողության գործառույթի իրականացմանը կարող են նպաստել Ազգային ժողով ներկայացվող պետական մարմինների զեկույցները, հաղորդումները և հաշվետվությունները (ԱԺ կանոնակարգ, հոդվածներ 126-133), որոնց ուսումնասիրության արդյունքում Ազգային ժողովը կարող է հանգել հետևության, որ այս կամ այն իրավական ակտը ենթակա է կատարելագործման:

2. Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենքների արդյունավետության գնահատման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի շարք հանգամանքների.

- Օրենքի արդյունավետության գնահատումը նպատակահարմար է իրականացնել իրավական ակտի ընդունումից բավարար ժամանակ անց, այնպես որ հնարավոր լինի դիտարկել դրա կիրարկման պրակտիկան[168]:

[167] Նույն տեղում, էջ 8:

[168] Franklin De Vrieze Post-Legislative Scrutiny, Guide for parliaments, նշվ. աշխ., էջ 21-33:

- Կարևոր է նկատի ունենալ, որ կոնկրետ ոլորտը կարգավորող իրավական ակտը, որպես կանոն, միակը չէ և պետք է հաշվի առնել փոխկապակցված օրենքները [169]: Հատկապես կարևորվում է նաև օրենքին փոխկապակցված ենթաօրենսդրական ակտերի ուսումնասիրությունը, քանի որ որոշ դեպքերում օրենքը իրավակիրառ մարմնին է վերապահում օրենքի այս կամ այն դրույթի իրականացման ընթացակարգի սահմանման լիազորությունը [170]: Նման ամբողջական ուսումնասիրության դեպքում, ըստ էության, գործ ունենք ոչ թե զուտ օրենսդրության կատարելագործման, այլ այս կամ այն ոլորտում վարվող քաղաքականության վերանայման հետ:
- Պետք է սահմանել ուսումնասիրության ժամանակահատված[171]:
- Ուսումնասիրության գործառույթը պահանջում է, որ այն լինի համընդգրկուն[172], աշխատանքներին ներգրավվեն նաև հանրության տարբեր շերտեր[173]:
- Կարևոր է կատարված աշխատանքի ամփոփումը: Այն իր մեջ ներառում է ուսումնասիրության հանրայնացումը, օրինակ՝ հրապարակման միջոցով:
- Արդյունքների ամփոփման շրջանակներում մշտական հանձնաժողովը պետք է գործադիրից արձագանք ստանա կատարված ուսումնասիրության վերաբերյալ: Եթե կառավարության կողմից հետադարձ կապը բացակայում է, ապա հանձնաժողովը կարող է կիրառել իր տրամադրության տակ գտնվող գործիքները, ինչպիսիք են, օրինակ՝ հանձնաժողովի հարցումները, պաշտոնատար անձանց հանձնաժողովի նիստերին հրավիրելը:

---

[169] Նույն տեղում:

[170] Նույն տեղում, էջ 33, Step 12:

[171] Նույն տեղում, էջ 28, Step 10:

[172] Նույն տեղում, էջ 9:

[173] Օրինակ՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, մասնագիտական հանրություն:

Կարգավորման արդյունավետության գնահատման միջազգային փորձը

Եվրոպական միության երկրների մեծ մասում չկա արդյունավետության գնահատման միասնական մոտեցում[174]:

Օրինակ՝ *Ավստրիայում* արդյունավետության գնահատում իրականացվում է միայն այն իրավական ակտերի դեպքում, որոնք ընդունման ժամանակ (ex-ante) ենթարկվել են կարգավորման ազդեցության ամբողջական գնահատման: Կարգավորման ազդեցության ոչ ամբողջական գնահատման ենթարկված իրավական ակտերը հետագա արդյունավետության գնահատման չեն ենթարկվում[175]:

Մեծ *Բրիտանիայում* արդյունավետության հետագա գնահատումը պարտադիր է բոլոր այն դեպքերում, երբ կարգավորման ազդեցության գնահատմամբ արձանագրվել է, որ իրավական ակտի ընդունման արդյունքում բիզնեսի վրա ազդեցությունը լինելու է տարեկան 1 միլիոն ֆունտ ստեռլինգը գերազանցող գումարի չափով[176]: Մեծ Բրիտանիայում խորհրդարանական հանձնաժողովները կարող են նախաձեռնել նաև ցանկացած այլ օրենքի արդյունավետության ուսումնասիրություն:

Բելգիայի պառլամենտում գործող Օրենսդրական մշտադիտարկման հանձնաժողովը արդյունավետության գնահատման է ենթարկում բոլոր այն օրենքները, որոնց ընդունումից հետո անցել է 3 տարի: Գնահատման իրականացման ընթացքում օգտագործվում են բոլոր այն նյութերը, որոնք հնարավոր է ստանալ օրենքի կիրառման հետ առնչություն ունեցող սուբյեկտներից՝

[174] Better regulation practices across the European union, նշվ. աշխ., էջ 98:

[175] Նույն տեղում, էջ 107:

[176] Նույն տեղում:

պետական մարմիններ, իրավաբանական և ֆիզիկական անձինք, օրենսդիր մարմնի ներկայացուցիչներ: Ուսումնասիրության մեջ ներառվում են նաև դատական պրակտիկայի ընթացքում հայտնաբերված խնդիրները և Սահմանադրական դատարանի որոշումները[177]:

Գերմանիայում արդյունավետության գնահատման պահանջ կարելի է նախատեսել օրենքի անցումային դրույթներում՝ սահմանելով, որ ընդունումից հետո որոշակի ժամանակահատվածում օրենքը պետք է գտնվի մոնիտորինգի ներքո:

[177] Նույն տեղում, էջ 116:

XII

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ

1.1. Ի՞նչ է կառավարության ծրագիրը

Սահմանադրության 151-րդ հոդվածի 1-ին մասը պահանջ է առաջադրում Կառավարությանը՝ կազմավորումից հետո 20-օրյա ժամկետում իր ծրագիրը ներկայացնել Ազգային ժողով: Թեև Սահմանադրությունը չի մանրամասնում կառավարության ծրագրի բովանդակությունը, սակայն դրա էությունը կարելի է բխեցնել Սահմանադրության մի շարք նորմերի վերլուծությունից:

Սահմանադրության 152-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունը ցույց է տալիս, որ կառավարության ծրագիրը առանցքային նշանակություն ունի պետության կենսագործունեությունը

ապահովելու հարցում, մասնավորապես դրա հիման վրա է վարչապետը որոշում կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ղեկավարում կառավարության գործունեությունը և համակարգում վերջինիս անդամների աշխատանքը: «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի[178] 7-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը մշակելիս, վարչապետը հիմնվում է կառավարության ծրագրի վրա: Ըստ այդմ՝ կառավարության ծրագիրը քաղաքական-իրավական փաստաթուղթ է, որն ամրագրում է պետության ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները և իրագործման ուղիները[179]:

1.2. Կառավարության ծրագրին հավանություն տալու ընթացակարգը

Կառավարության ծրագրի կարևորությունը ընդգծվում է այն իրավական հետևանքներով, որոնք վրա են հասնում դրան հավանություն չտալու դեպքում:

Խորհրդարանի կողմից Կառավարության ծրագրին հավանություն տալն ունի երկու փոխկապակցված նպատակ: Մի կողմից՝ կառավարությունը ստանում է խորհրդարանի վստահությունը, մյուս կողմից՝ խորհրդարանը հնարավորություն է ստանում նախանշելու վերահսկողության ապագա ուղղությունները[180]:

ԱԺ կանոնակարգի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, եթե կառավարության ծրագրի ներկայացումը համընկնում է

[178] Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2018թ. մարտի 23-ին, ՀՀՊՏ 2018.03.30/25(1383), հոդ.446, ՀՕ-253-Ն:

[179] Վ. Պողոսյան, հոդված 74 //Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, «Իրավունք», 2010թ., էջ 733:

[180] Նույն տեղում, էջ 732:

Ազգային ժողովի առաջին նստաշրջանի նիստերի հետ, ապա ծրագիրը ներկայացվելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, Ազգային ժողովի նախագահը հայտարարում է հարցի քննարկմանը նվիրված նիստի օրը և ժամը:

Կառավարության ծրագիրը դասվում է պարտադիր քննարկման ենթակա հարցերի շարքին և հերթական նստաշրջանի ընթացքում ներկայացվելու դեպքում այն ուղղակի ընդգրկվում է նստաշրջանի և նիստերի օրակարգերի նախագծերում (ԱԺ կանոնակարգ, հոդված 38, մաս 3, կետ 2, մաս 4):

Կառավարության ծրագրի քննարկման ընթացակարգը

- ծրագիրը ներկայացնելու համար վարչապետին տրվում է մինչև երեք ժամ, որից հետո նրան կարող են հարցեր տրվել,
- հարակից զեկուցմամբ կարող են հանդես գալ մշտական հանձնաժողովների մեկական ներկայացուցիչներ,
- մտքերի փոխանակությունն իրականացվում է ընդհանուր կարգով,
- եզրափակիչ ելույթի համար վարչապետին տրվում է մինչև մեկ ժամ:

ԱԺ կանոնակարգ, հոդված 103, մաս 2

Ծրագրին հավանություն տալու համար Ազգային ժողովն ունի 7 օր: Հավանություն տալու դեպքում Ազգային ժողովի նախագահը ստորագրում և հրապարակում է համապատասխան որոշում (ԱԺ կանոնակարգ, հոդված 103, մաս 3, 4):

Կառավարության ծրագրին հավանություն տալու ինստիտուտը նախատեսվել է դեռևս 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ: Սակայն սահմանադրական փոփոխու-

թյուններին համընթաց՝ ինստիտուտը ենթարկվել է որոշակի զարգացման[181]:

2015թ. խմբագրությամբ Սահմանադրության համաձայն, եթե Կառավարության ծրագիրը հավանության չի արժանանում, ապա Կառավարությունը ներկայացնում է հրաժարական (հոդված 158):

Ծրագրին հավանություն չտալու դեպքում, Կառավարության հրաժարականից հետո 7-օրյա ժամկետում խմբակցություններն իրավունք ունեն առաջադրելու վարչապետի թեկնածուներ, և անցկացվում է վարչապետի ընտրություն (ԱԺ կանոնակարգ, հոդված 103, մաս 5):

Ազգային ժողովի համար, Կառավարության ծրագրի հետ կապված, Սահմանադրությունը իրավական հետևանքներ է նախատեսել երկու պարագայում՝

- եթե կառավարության ծրագրին հավանություն չտալու արդյունքում Ազգային ժողովը Սահմանադրության 149-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան ընտրում է նոր Վարչապետ, սակայն կրկին հավանություն չի տալիս Կառավարության ծրագրին.
- եթե Վարչապետին անվստահություն հայտնելու դեպքում Ազգային ժողովը հավանություն չի տալիս նաև նոր կազմավորված Կառավարության ծրագրին (Սահմանադրություն, հոդված 151, մաս 3):

Նշված երկու դեպքերում էլ Կառավարության ծրագրին հավանություն չտալը հանգեցնում է իրավունքի ուժով Ազգային ժողովի արձակմանը, քանի որ նման իրավիճակները վկայում են Ազգային ժողովում քաղաքական ուժերի դասավորության

[181] 1995թ. խմբագրությամբ Սահմանադրության համաձայն՝ կառավարության ծրագրին հավանություն չտալու միակ ձևը կառավարությանը անվստահություն հայտնելն էր, քանի որ այդ երկուսը փոխկապակցված էին (հոդված 74, առաջին պարբերություն): 2005թ. խմբագրությամբ կատարված փոփոխությունների արդյունքում սահմանվեց, որ եթե Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չի տալիս կառավարության ծրագրին, ապա Նախագահը արձակում է Ազգային ժողովը (հոդված 74.1):

ճգնաժամի և որոշումներ կայացնելու համար այլևս ոչ ունակ լինելու մասին:

Կառավարության ծրագրի հաստատմանը հաջորդում է *կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի հաստատումը*: Այն մշակվում է կառավարության ծրագրի հիման վրա՝ որպես կանոն կատարվում է հնգամյա ժամանակահատվածի համար: Կառավարությունը այն մշակում և հաստատում է եռամսյա ժամկետում[182]: Կառավարության գործունեության միջոցառումների ծրագրում նշվում են դրանց իրականացման կոնկրետ պատասխանատուները՝ ըստ ժամկետների և ֆինանսավորման աղբյուրների: Կառավարության գործունեության միջոցառումների ծրագրում ներառվում են նաև օրենսդրական կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր մշակելու միջոցառումներ, ինչպես նաև կառավարության ծրագրով նախատեսված նպատակների, ուղղությունների ու թիրախների կատարմանն ուղղված այլ միջոցառումներ (Կառավարության աշխատակարգ, կետ 6):

2. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Կառավարության ծրագիրը հաստատելու Ազգային ժողովի լիազորության տրամաբանական շարունակությունն է Սահմանադրության 156-րդ հոդվածով նախատեսված Կառավարության պարտականությունը՝ յուրաքանչյուր տարի Ազգային ժողովով զեկույց ներկայացնել իր ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին: Կառավարությունը յուրաքանչյուր տարի՝ մինչև մարտի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում նախորդ տարում իր ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույց (ԱԺ կանոնակարգ, հոդված 127, մաս 1):

[182] ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» 2018թ. հունիսի 8-ի որոշում, N 667-Լ, կետ 4:

Սահմանադրությունը միայն մեկ հատուկ պահանջ է առաջադրում Կառավարության տարեկան զեկույցի բովանդակությանը: Սահմանադրության 87-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա Կառավարությունը տարեկան զեկույցի շրջանակներում տեղեկատվություն է ներկայացնում Սահմանադրության 86-րդ հոդվածով (Պետության քաղաքականության հիմնական նպատակները) սահմանված նպատակների իրագործման վերաբերյալ: Սահմանադրական նորմի այս պահանջը պայմանավորված է նրանով, որ Սահմանադրության 3-րդ գլխով ամրագրված պետության քաղաքականության հիմնական նպատակները Կառավարության համար առաջնահերթ են և Կառավարությունը հստակ վերլուծություն ու տեղեկատվություն պետք է տրամադրի այդ ոլորտում առկա խնդիրների, իր նպատակների, ձեռնարկած միջոցառումների, ձեռքբերումների վերաբերյալ:

Կառավարության տարեկան զեկույցի մշակման համար նախարարները, կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարները մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը վարչապետի աշխատակազմ են ներկայացնում կառավարության գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված՝ նախորդ տարվա միջոցառումների կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվություն (Կառավարության աշխատակարգ, կետ 7):

Թեև օրենսդրությունը այլ հատուկ պահանջներ չի սահմանում ո՛չ Կառավարության ծրագրի և ո՛չ էլ տարեկան զեկույցի համար, այնուամենայնիվ, հստակ ծրագիրը և մանրամասն տարեկան զեկույցը կարևոր նախապայման են արդյունավետ խորհրդարանական վերահսկողության համար: Կառավարության ծրագրի վերացական և մակերեսային բնույթի պարագայում դժվարանում է նաև դրա կատարման ընթացքի հետագա գնահատումը օրենսդիրի կողմից՝ դրանով իսկ ի չիք դարձնելով խորհրդարանի կողմից գործադիրի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու առանցքային սահմանադրական գործառույթը:

Կառավարության ծրագրի քննարկման կարգը գրեթե նույնական է պետական մարմինների զեկույցները, հաղորդումները, հաշվետվությունները ներկայացնելու, շրջանառության մեջ դնելու և քննարկելու ընդհանուր կարգին (ԱԺ կանոնակարգ, հոդված 126, մաս 3)։ Բացառություն են կազմում հետևյալ դեպքերը՝

- զեկույցը ներկայացնելու համար վարչապետին հատկացվում է մինչև մեկ ժամ,
- հարակից զեկուցմամբ կարող են հանդես գալ բոլոր մշտական հանձնաժողովների մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև վարչապետի ներկայացմամբ՝ Կառավարության մինչև երեք անդամ, որից հետո նրանց կարող են հարցեր տրվել,
- եզրափակիչ ելույթի համար վարչապետին հատկացվում է մինչև 30 րոպե (ԱԺ կանոնակարգ, հոդված 127, մաս 2)։

Հարկ է նկատել, որ Կառավարության տարեկան զեկույցից բացի, Ազգային ժողովն ունի նաև կառավարության գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողական լծակներ։ ԱԺ կանոնակարգի 122-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ կառավարության ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողության գործում առանցքային դեր ունեն մշտական հանձնաժողովները, որոնք խորհրդարանական վերահսկողության շրջանակներում[183] կարող են տեղեկություններ պահանջել ծրագրի կատարողականի վերաբերյալ։

Կառավարության ծրագրի կատարման նկատմամբ ընթացիկ վերահսկողությունը կարող է իրականացվել նաև Ազգային ժողովին վերապահված վերահսկողական այլ գործիքների միջոցով, ինչպիսիք են՝ հարցապնդումները[184], որոնց արդյունքով կարող է բարձրացվել վարչապետին անվստահություն

[183] Այս մասին առավել մանրամասն տե՛ս բաժին IV, մաս 3.2.1՝ Հանձնաժողովի կողմից տեղեկություններ պահանջելն ու ստանալը։

[184] Այս մասին առավել մանրամասն տե՛ս բաժին VII՝ Հարցապնդումները՝ որպես խորհրդարանական վերահսկողության գործիք։

հայտնելու կամ կառավարության անդամի հետագա պաշտոնավարման հարցը (Սահմանադրություն, հոդված 113, մաս 2)։ Կառավարության ընթացիկ գործունեությունը վերահսկելու ոչ պակաս կարևոր մեխանիզմներ են պատգամավորների գրավոր և բանավոր հարցերը կառավարության անդամներին (Սահմանադրություն, հոդված 112) [185], ինչպես նաև քննիչ հանձնաժողովները (Սահմանադրություն, հոդված 108) [186]։

[185] Այս մասին առավել մանրամասն տե՛ս բաժին VI՝ Պատգամավորների բանավոր և գրավոր հարցերը։

[186] Այս մասին առավել մանրամասն տե՛ս բաժին V՝ Քննիչ հանձնաժողովները՝ որպես խորհրդարանական վերահսկողության գործիք։

XIII

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

Խորհրդարանական վերահսկողության թիրախում, առաջին հերթին, կառավարության գործունեությունն է: Սակայն խորհրդարանի վերահսկողական գործառույթը տարածվում է նաև տարբեր այլ պետական մարմինների նկատմամբ, որոնց ձևավորմանը Ազգային ժողովը մասնակցում է, և որոնք գործառութային իմաստով նույնպես գործադիր իշխանություն են:

Սահմանադրությունը առաջանային լեգիտիմություն ունեցող Ազգային ժողովին է վերապահում առանձին պետական մարմինների ձևավորման և պաշտոնատար անձանց ընտրության գործառույթը: Իրավասու մշտական հանձնաժողովների առաջարկությամբ Ազգային ժողովի կողմից են ընտրվում Մարդու իրավունքների պաշտպանը[187], Կենտրոնական

[187] Սահմանադրության հոդված 192, մաս 1, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 12, մաս 2:

ընտրական հանձնաժողովի նախագահը և մյուս անդամները[188], Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամները[189], Հաշվեքննիչ պալատի նախագահը և մյուս անդամները[190], Կենտրոնական բանկի նախագահը և խորհրդի մյուս անդամները[191], գլխավոր դատախազը[192]:

Ազգային ժողովի կողմից նշված մարմինների ձևավորման գործընթացի տրամաբանական շարունակությունն է իրենց գործունեության մասին Ազգային ժողովին տեղեկացնելու և հաշվետու լինելու Սահմանադրությամբ նախատեսված պարտականությունը՝ որպես խորհրդարանական վերահսկողության դրսևորում:

Այսպես, Սահմանադրությունը նախատեսում է յուրաքանչյուր տարի Ազգային ժողով հաղորդում ներկայացնելու պարտականություն.

- Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին: Ընդ որում, Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցը կարող է պարունակել նաև օրենսդրական կամ այլ բնույթի միջոցառումների վերաբերյալ առաջարկներ (Սահմանադրություն, հոդված 191, մաս 2):
- Հաշվեքննիչ պալատի գործունեության վերաբերյալ (Սահմանադրություն, հոդված 198, մաս 3, կետ 1),
- Կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ (Սահմանադրություն, հոդված 200, մաս 6),

---

188 Սահմանադրություն, հոդված 195, մաս 2, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 42, մաս 2:

189 Սահմանադրություն, հոդված 197, մաս 2, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք, հոդված 39, մաս 1:

190 Սահմանադրություն, հոդված 199, մաս 2, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, հոդված 17, մաս 3:

191 Սահմանադրություն, հոդված 201, մաս 1, «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 18, մաս 2:

192 Սահմանադրություն, հոդված 177, մաս 1, «Դատախազության մասին» ՀՀ օրենք, հոդված 35, մաս 1:

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության վերաբերյալ (Սահմանադրություն, հոդված 194, մաս 3),
- Տեղեկատվության ազատության վիճակի մասին՝ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի պարագայում (Սահմանադրություն, հոդված 196, մաս 4) [193]:

Գլխավոր դատախազի կողմից տարեկան հաղորդում ներկայացնելու պարտականությունը նախատեսված է ԱԺ կանոնակարգով (հոդված 128) և «Դատախազության մասին» օրենքով [194] (հոդված 5, մաս 2):

Բացի Հաշվեքննիչ պալատից և Կենտրոնական բանկից, վերը նշված մյուս բոլոր պետական մարմինները իրենց հաղորդումը Ազգային ժողով են ներկայացնում յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը (ԱԺ կանոնակարգ, հոդվածներ 128, 129, 132, 133):

Հաշվեքննիչ պալատն իր հաղորդումը ներկայացնում է մինչև հունիսի 1-ը (ԱԺ կանոնակարգ, հոդված 130)՝ պայմանավորված բյուջետային տարվա առանձնահատկություններով[195]:

Կենտրոնական բանկը իր հաղորդումը Ազգային ժողով է ներկայացնում յուրաքանչյուր տարի՝ մինչև մայիսի 1-ը [196]: Այն բաղկացած է՝

- ընթացիկ տարվա առաջին եռամսյակում հաստատված դրամավարկային քաղաքականության ծրագրի հաղորդումից և

---

193 Կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին տարեկան զեկույցին անդրադարձ է կատարվել բաժին XII, մաս 2-ում՝ Կառավարության ծրագրի կատարման վերահսկողությունը:

194 Ընդունվել է 2017 թ. նոյեմբերի 17-ին, ՀՀՊՏ 2017.12.13/74(1349) Հոդ.1213, ՀՕ-198-Ն:

195 Այս մասին տե՛ս բաժին III, մաս 3.3՝ Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

196 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենք, ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1996թ. հունիսի 30-ին, ՀՀԱԺՏ 1996/12, ՀՕ-69, հոդված 17, մաս 4:

- նախորդ տարվա դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաղորդումից:

Հաղորդումները ներկայացնում են համապատասխան մարմինների ղեկավարները (ԱԺ կանոնակարգ, հոդված 128-133):

Նշված պետական մարմինների հաղորդումների նախնական քննարկման հարցում ուրույն դեր ունեն իրավասու մշտական հանձնաժողովները: Ազգային ժողովին ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում հաղորդումները քննարկվում են իրավասու մշտական հանձնաժողովում[197]: Քննարկման արդյունքում հանձնաժողովների կողմից առանձին փաստաթուղթ չի ընդունվում (ԱԺ կանոնակարգ, հոդված 126, մաս 2, կետ 1): Մշտական հանձնաժողովներն այս գործառույթի մի մասը իրականացնում են Ազգային ժողովի Բյուջետային գրասենյակի աջակցությամբ: Այսպես՝ Բյուջետային գրասենյակը իրավասու հանձնաժողովին է ներկայացնում Հաշվեքննիչ պալատի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումների մասին տեղեկանքներ (ԱԺ աշխատակարգ, կետ 115, ենթակետ 11, կետ 117, ենթակետ 6):

Վերը նշված տարեկան հաղորդումները քննարկվում են Ազգային ժողովի հերթական նիստում Ազգային ժողովի նախագահին ներկայացվելուց հետո՝ երկամսյա ժամկետում, Խորհրդի սահմանած օրը (ԱԺ կանոնակարգ, հոդված 126, մաս 2, կետ 2):

---

[197] ՄԻՊ զեկույցը քննարկվում է Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովում (https://bit.ly/2UVyTtj): Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գործունեության մասին տարեկան հաղորդումը՝ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովում (https://bit.ly/30VY9Ua): Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաղորդումը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում (https://bit.ly/2YPe2ZB): Կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը՝ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովում (https://bit.ly/2AEZ5BH): Հաշվեքննիչ պալատի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը՝ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովում (https://bit.ly/2zMCXoq): Գլխավոր դատախազության գործունեության մասին հաղորդումը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում (https://bit.ly/2BfQOnw):

Ազգային ժողովի նիստում հաղորդումների քննարկման կարգը

1. մինչև 30 րոպե տևողությամբ հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս հարցն Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, որից հետո նրան կարող են տրվել հարցեր.
2. հարակից զեկուցում չի լինում, եթե Կանոնակարգով [198] կամ Ազգային ժողովի որոշմամբ այլ բան նախատեսված չէ.
3. մտքերի փոխանակություն.
4. մինչև տասնհինգական րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթներով նույն հաջորդականությամբ հանդես են գալիս հարակից և հիմնական զեկուցողները:

ԱԺ կանոնակարգ, հոդված 126, մաս 3

[198] Օրինակ՝ Ազգային ժողովում Կենտրոնական բանկի հաղորդումը ներկայացնելու ժամանակ Կառավարության ներկայացուցիչն իրավունք ունի հանդես գալու հարակից զեկուցմամբ (ԱԺ կանոնակարգ, հոդված 132, մաս 2):

XIV

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Գծապատկեր 1. Վարչապետին անվստահություն հայտնելու գործընթացը



③ **Քվեարկություն**

↓

ԱԺ որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ շուտ, քան 48, և ոչ ուշ, քան 72 ժամ հետո

↓

Որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ անվանական քվեարկությամբ

④ **Որոշման ընդունման դեպքում՝ վարչապետի հրաժարական**

↓

Վարչապետի հրաժարականը հանգեցնում է ամբողջ կառավարության հրաժարականին

Գծապատկեր 2. Պետական բյուջեի ընդունման գործընթացը

① **Պետական բյուջեի նախագծի ներկայացում ԱԺ**

↓

Կառավարության կողմից բյուջետային տարին սկսվելուց (հունվարի 1) առնվազն 90 առաջ

② **Նախագծի նախնական քննարկումների կազմակերպում**

↓

ԱԺ նախագահի կողմից նախագծի նախնական քննարկումների ժամկետացանկի կազմում (2 օր)

↓

Քննարկումների ժամկետացանկի հաստատում Խորհրդի կողմից

↓

Քննարկում ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովում և այլ մշտական հանձնաժողովներում

↓

Գրավոր առաջարկների ներկայացում

③ **Նախագծի վերջնականացում**

↓

Ստացված առաջարկների հիման վրա նախագծի լրամշակում Կառավարության կողմից

↓

կամ Նախագծի ներկայացում առանց փոփոխության

④ **Նախագծի քննարկում ԱԺ նիստում**

↓

Ելույթներ

↓

Մտքերի փոխանակում

↓

Ընդմիջում առաջարկների ներկայացման համար (առնվազն 4 օր)

⑤ **Նախագծի քննարկման վերսկսում**

↓

Նախագծի վերջնական տարբերակի ներկայացում

↓

Հարցեր

↓

10-ական րոպե տևողությամբ մեկական ելույթի իրավունք

↓

Եզրափակիչ ելույթ՝ 30 րոպե (վարչապետ կամ իրավասու նախարար)

⑥ **Պետական բյուջեի մասին օրենքի ընդունում**

↓

Քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին

⑦ **Նախագծի չընդունման դեպքում**

↓

Պետական բյուջեի նոր նախագիծ (2 շաբաթում)

↓

Նոր նախագծի քննարկվում և քվեարկում մեկ ամսվա ընթացքում

Գծապատկեր 3. Հանրագրերի ներկայացման ընթացակարգը

① **Հանրագրերի ներկայացում ԱԺ նախագահին**

↓

Հանրագիրը վերադարձվում է, եթե հանրագիրը չի համապատասխանում և 5 աշխատանքային օրվա ընթացքում չի համապատասխանեցվում օրենքի պահանջներին

↓

Մերժվում է հանրագրի քննարկումը, եթե առկա են «Հանրագրերի մասին» օրենքով սահմանված մերժման հիմքերը

② **Հանրագրերը ընդունելու դեպքում**

↓

Հանրագիրն ուղարկվում է իրավասու մշտական հանձնաժողո(ներ)

↓

Հանրագրի գրանցում և տեղադրում Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում

③ **Գործընթացը մշտական հանձնաժողովներում**

↓

Մշտական հանձնաժողովի անդամները կարող են երկշաբաթյա ժամկետում ներկայացնել հանրագրի պատասխանի նախագիծ

↓

Եթե հանրագրի պատասխանի նախագիծ չի ներկայացվում, ապա պատասխանի նախագիծը մեկ շաբաթվա ընթացքում մշակում և հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում հանձնաժողովի նախագահը

④ **Հանձնաժողովի նիստում հանրագրի քննարկում**

↓

Հանրագիրը քննարկվում է ընդհանուր կարգով

↓

Մի քանի նախագիծ ներկայացվելու դեպքում քննարկումը իրականացվում է 112-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով


⑤
Հանրագրին պատասխան
Հանձնաժողովի որոշմամբ հաստատված հանրագրի պատասխանը 2 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է աշխատակազմ
Աշխատակազմը պատասխանը 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է հանրագիրը ներկայացրած կողմին: Պատասխանը հրապարակվում է ԱԺ կայքում
Պատասխանի վերաբերյալ որոշում չկայացնելու դեպքում հարցի քննարկումը համարվում է ավարտված: Նախաձեռնող կողմին ուղարկվում է համապատասխան գրություն:

XV

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. 2015թ. խմբագրությամբ Սահմանադրություն, ընդունվել է հանրաքվեով 2015 թվականի դեկտեմբերի 6-ին, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, հոդ. 1118
2. 2005թ. խմբագրությամբ Սահմանադրություն, ընդունվել է 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով, ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում, հոդ. 1426
3. 1995թ. խմբագրությամբ Սահմանադրություն, ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ի հանրաքվեով
4. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենք, ՀՀՊՏ 2017.01.25/5(1280), հոդ. 45
5. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» 2016 թվականի մայիսի 25-ի ՀՕ-54-Ն սահմանադրական օրենք, ՀՀՊՏ 2016.05.30/42(1222), հոդ. 456

6. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 2-ի ՀՕ-95-Ն սահմանադրական օրենք, ՀՀՊՏ 2018.02.12/10(1368), հոդ. 143
7. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-1-Ն սահմանադրական օրենք, ՀՀՊՏ 2017.01.25/5(1280), հոդ. 37
8. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին, ՀՕ-239, ՀՀՊՏ 1998.08.10/17(50)
9. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2018 թվականի փետրվարի 9-ին, ՀՕ-110-Ն, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374), հոդ. 208
10. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՕ-248, ՀՀՊՏ 1998.09.21/22(55)
11. «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-253-Ն օրենք, ՀՀՊՏ 2018.03.30/25(1383), հոդ. 446
12. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենք, ՀՀՊՏ 1997.08.11/18
13. «Հաշվեքննիչ պալատի մասին» 2018 թվականի հունվարի 16-ի ՀՕ-58-Ն օրենք, ՀՀՊՏ 2018.01.31/8(1366), հոդ. 92
14. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» 1996 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-94 օրենք, ՀՀԱԺՏ դեկտեմբեր 1996/23-24(1123-1124), հոդ. 298
15. «Բանկային գաղտնիքի մասին» 1996 թվականի հոկտեմբերի 7-ի ՀՕ-80 օրենք, ՀՀԱԺՏ 1996.10.15/19(1119), հոդ. 230
16. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» 2019 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-277-Ն օրենք, ՀՀՊՏ 2019.12.27/100(1553).1, հոդ. 1261.1
17. «Հանրագրերի մասին» 2017 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-15-Ն օրենք, ՀՀՊՏ 2018/4 (1362), հոդ. 33

18. «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-40-Ն օրենք, ՀՀՊՏ 2005.01.26/7(379), հոդ. 114:
19. «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-69 օրենք, ՀՀԱԺՏ 1996/12
20. «Արժեթղթերի շուկայի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենք, ՀՀՊՏ 2007.10.31/53(577), հոդ. 1098
21. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2008 թվականի մայիսի 26-ի ՀՕ-80-Ն օրենք, ՀՀՊՏ 2008.07.02/41(631), հոդ. 658
22. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենք, ՀՀՊՏ 2000.11.18/27(125)
23. «Դատախազության մասին» 2017 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-198-Ն օրենք, ՀՀՊՏ 2017.12.13/74(1349), հոդ. 1213
24. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» Ազգային ժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ԱԺՈ-267-Ն որոշում, ՀՀՊՏ 2017.01.11/2(1277), հոդ. 16
25. «Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների, վարկերի, դրամաշնորհների և մարդասիրական օգնությունների օգտագործման արդյունավետությունն ուսումնասիրող Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին» Ազգային ժողովի 2003 թվականի սեպտեմբերի 10-ի Ն-014-3 որոշում, ՀՀՊՏ 2003.10.01/49(284), հոդ. 881
26. «2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին» Ազգային ժողովի 2008 թվականի հունիսի 16-ի Ն-086-4 որոշում, ՀՀՊՏ 2008.06.25/40(630), հոդ. 653
27. «Հրապարակային հանրագրեր ներկայացնելու ձևաթուղթը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 1-ի N 1218-Ն որոշում, ՀՀՊՏ 2018.11.14/84(1442) Հոդ. 1163:

28. «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 667-Լ որոշում
29. «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2012թ. ապրիլի 5-ի նիստի N 13 արձանագրային որոշման հավելված:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ.
ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՆ ՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

© **«ԼՈՒՅՍ»**
մշակութային, գիտական, կրթական հիմնադրամ

ՀՀ, ք. Երևան, Փ. Բուզանդի 3
(+374) 12 40 00 04
www.luys.am

ISBN 978-9939-1-1164-3